


ԱՐՄԵՆ  
ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ  
ԷՊՈՍԻ  
ՀՆԱԳՈՒՅՆ  
ԱԿՈՒՆՔՆԵՐԸ



U

ՈՐԴՈՒՄ

ՆԻՒՆԱՆՈՒՄ

THE GREAT SOURCE  
OF THE  
MIDDLE EAST  
AND HISTORICAL RESEARCH

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԳԵՂԱՐՄԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ  
ԷՊՈՍԻ  
ՀՆԱԳՈՒՅՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՀՆԴԵԿՐՈՊԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ  
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԵՐ

A II  
85254



VA «ԿԱՆ ԱՐՅԱՆ»  
ԵՐԵՎԱՆ 1997

398,22 (919.81)

ՀԱՅԿԵԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ  
ԷՊՈՍԻ  
ՀՆԱԳՈՒՅՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՀՆԴԵԿՐՈՊՍԿԱՆ ԱՌԱՄՊԵՆՆԵՐ  
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԵՐ

A II  
85254

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

W «ԿԱՆ ԱՐՅԱՆ»  
ԵՐԵՎԱՆ 1997

ԴՏՅ 941 (479.25)

ԳՄԴ 63.5 (23)

Պ 505

ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ա

Պ 505

Հայկական էդոսի հնագույն ակունքները .-Եր.:  
Վան Արյան, 1997.-96 էջ

*Գրքում քննարկվում են հին հնդեւրոպական առասպելների քաղաքիվ դրսեւորումները «Մասնա ծոնրում», ապա և էպոսի հերոսների կապերը խեթական, խոտիական, ուրարտական և հին հայկական ասրվածների, հայոց ազգածնության առասպելի մահապերների և մյուս հին վիպաշարերի հերոսների հետ:*

*Քաղաքայրվում են ման նրանց որոշ հնագույն պարմական մախարիպերը, սկսած Ն.Բ. XVI դարի հին խեթական արքա Մուրսիլիս I-ից:*

Պ  $\frac{0505000000}{854 (01) - 97}$  97

ԳՄԴ 63.5 (23)

© Պետրոսյան Ա, 1997 թ.

## ՆԱԽԱԲԱՆ

Ինչ հայրենի գիտական գրականության մեջ «Մասնա ծոերի» հնդեվրոպական առասպելաբանական ակունքներին հապուկ անդրադարձել են Մ. Աբեղյանը, Ս. Պեպրոսյանը, Ս. Հարությունյանը, Ս. Ահյանը և Ժ. Դյունեզիլը, թեև այլ աշխատանքներում եւս երբեմն հիշվել են էպոսի հնդեվրոպական կապերը և թերվել հնդեվրոպական զուգահեռները: Այս աշխատության մեջ բացահայտվում են հիմնականում այլ հայ-հնդեվրոպական առեջություններ, բայց հաշվի են առնվել նաև նախորդ աշխատանքների արդյունքները: Մտորես քննարկվում են առասպելաբանական և վիպական, կամ առասպելականացած պատմության փյալները, բայց, հապիհապես վերջին մասում, արծարծվում են նաև էպոսի եւ պատմության ու նախապատմության առեջությունների, վիպական հերոսների ոչ միայն առասպելական, այլև պատմական նախապիպերի հարցերը:

Էպոսի պատմական հիմքի խնդիրը շարք ավելի պարզ է, այն արքայացում է Մասունի և Հայաստանի հիմնականում VII-XIII դարերի եղելությունները, թեև որոշ դրվագներ արդեն հնուց համապատասխանեցվել են Ատրեւսյանի Ն. Ք. VII դարի պատմության փաստերի հեպ, ավանդված նաև Ապրվածաշնչում: Համեմատական քննությունն այստեղ եւս նոր բացահայտմաների հնարավորություն է ընչհոում:

Աշխատության մեջ օգտագործվել են իմ որոշ վերականգնությունները, և էլնելով աշխատանքի առանցնահապիտությունից, նվազագույնի են հասցվել լեզվաբանական հիմնավորումները: Եւ երախտապարտ եմ հայկական էպոսի լավագույն գիտակ, ՀՀ ՊԱ Հնագիտության և սզզագրության ինտիպիտուպի փոխպետերեն, բանասիրական գիտությունների դոկտոր Մարգիս Հարությունյանին, որի հեպ խորհրդակցել եմ աշխատանքի ընթացքում ծագած բազմաթիվ հարցերի շուրջը:

## 1. «ՅԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ»

Յնդեվրոպական առասպելաբանության կարեւորագույն տարրերից են ամպրոպի աստծու հետ կապված առասպելները՝ նրա հաղթանակը օծ-վիշապի դեմ, ապա նաեւ՝ կնոջ դավաճանությունը, որդու պատժվելը, հետագա հնարավոր վերածնունդը եւ այլն («հիմնական առասպել» ըստ հեղինակների տերմինաբանության. Իվանով, Տոպորով, 1974, տես նաեւ նույն հեղինակների այլ աշխատանքներն այդ թեմայով եւ Ցիվյան 1976): Պետք է ասել, որ այս «հիմնական առասպելը» կարող են ունենալ նաեւ այլ, ոչ հնդեվրոպական ժողովուրդներ, այդ թվում եւ Յայկական լեռնաշխարհի եւ հարեւան տարածքների հին ցեղերը: Յնդեվրոպականները տարբերվում են նախ՝ անուններով, ապա եւ սյուժեի ու կառուցվածքի որոշակի առանձնահատկություններով (հայկական ավանդության մեջ այս առասպելի օծի անվան արտացոլման վերաբերյալ տես Ա. Պետրոսյան 1987):

Ամպրոպի աստծու կռիվը եւ հաղթանակը օծի դեմ մի ընդգրկում, իր էությանբ՝ տիեզերածին առասպել է: Այն ամենաբազմազան ձեւերով արտացոլվում է տարբեր ժողովուրդների առասպելներում, էպոսներում, բանահյուսական այլեւայլ տեքստերում, ծեսերում եւ այլուր:

Ըստ առասպելաստեղծ մտածողության, ամեն մի նշանակալի գործողություն կրկնում է տիեզերածնությունը, ամեն մի կառույց՝ տիեզերածնության կառույցը, ամեն մի մենամարտ, կռիվ, պատերազմ, համադրվում է տիեզերածին մենամարտի հետ եւ այլն: Այսպիսով՝ ամպրոպի աստծու հետ կարող են համադրվել բոլոր վիպական ու իրական արքաները, հերոսները, եւ նրա հաղթանակի հետ՝ նրանց հաղթանակները (տես Էլիադե 1987, 32-55):

«Ասանա ծռերի» տոհմը սկիզբ է առնում Ծովինարից՝ որի անունը բարբառներում նշանակում է «կայծակ, փայլակ» եւ հենց ինքն էլ այդ երեւոյթների մի մարմնավորումն է (Աբեղյան է, 70-72. Ղափանցյան I, 295-97), ամպրոպի աստծու մի կանացի համապատասխանությունն ու զուգակիցը: Յատկանշանակաւ է նրա կապը ծովի, ջրային տարերքի, այսպիսով՝ «երրորդ» աշխարհի, ստորերկրյայքի հետ, որը սովորաբար բնորոշ է ամպրոպի աստծու կնոջը: Էպոսի հենց առաջին իսկ դրվագներից ծովինարի որդիները ձեռք են բերում կայծակի թուրը՝ ամպրոպի աստծու ակնհայտ զենքը, որը փոխանցվում է սերնդէ-սերունդ, բոլոր հերոսներին այսպիսով այս կամ այն չափով համադրելով ամպրոպի աստծու հետ:

Ամպրոպի աստծու առավել վառ արտահայտված դրսեւորումներն են Սանասարը եւ Ղափիթը: Ակնհայտորեն համադրելի են ամպրոպի աստծու հետ նաեւ Մեծ ու Փոքր Միերները, զոնէ կայծակի թրի օգտագործման եւ հակառակորդներին հաղթելու դրվագներում:

Աստծու հակառակորդ օծ-վիշապի կերպարը էպոսում հանդես է գա-

լիս նախ՝ իսկական վիշապների ձեռով, որոնց հաղթում են Սանասարն ու Բաղդասարը, ապա եւ հերոսների հակառակորդների հրեշավոր եւ մարդկային կերպարներում (Սպիտակ դէւ, կռապաշտ թագավոր կամ Բաղդադի խալիֆ, Մսրա Մեծ եւ Փոքր Մելիքներ եւ այլն, որոնք այս կամ այն չափով օժտված են վիշապի հատկանիշներով):

Ամպրոպի աստծու կնոջ հետ համադրելի է Ծովինարը, որն ամուսնանում է հակառակորդ կողմի արքայի հետ (հմմտ. աստծու կնոջ դավաճանության մոտիվը): Միեւնույն մոտիվը հնում պետք է որ լիներ նաեւ Դավթի վեպում, քանի որ Խանդուբի անվան հայկական առաջին հիշատակության մեջ ասվում է, որ նրա մասին պատմել են Տիգրանուհու (որն ամուսնանում է հայոց թագավորի հակառակորդ Աժդահակի հետ) ավանդության նման մի բան (Ինժիճյան 1806, 121), իսկ օտար աղբյուրների շատ ավելի հին տվյալներով Դավթին համապատասխան հերոսի սիրած աղջիկը ամուսնանում է հերոսի հակառակորդի հետ (այդ մասին տես ստորեւ):

Ամպրոպի աստծու պատժվող եւ վերածնվող որդու ակնհայտ դրսեւորումն է Փոքր Միերը, որը անիծվելով հորից, ինչպես եւ Արտավազը, փակվում է ժայռում, որից պետք է դուրս գա արդարության եւ առատության գալուստից հետո: Նման հատկանիշներ ունեն նաեւ մեծ Միերն ու Դավիթը, որոնք պատժվում ՝ մեռնում կամ սպանվում են երդմնազանցության հետեւանքով (պատճառը նորից կինն է), եւ որպես զոհվող կերպար կրկնում ամպրոպի աստծու որդու՝ «առաջնազոհի» առասպելը: Ամպրոպի աստծու որդու հնդեվրոպական կերպարը հայոց մեջ համադրվել է այս տարածաշրջանի երկու՝ արեւելամիջերկրածովյան մեռնող ու հարուստուն առնող աստվածների եւ միջազետքյան ու փոքրասիական-կովկասյան քարից, ժայռից (վերա)ծնվող աստծու կամ հերոսի առասպելներին:

Առանձին հիշատակության է արժանի էպոսի հետեւյալ դրվագը՝ ավազակները կամ դէւերը փախցնում են Դավթի նախրի անասունները եւ թաքցնում քարայրում: Դավիթը ջարդում է քարայրի ժայռ դուռը, սպանում դէւերին եւ ազատում անասունները: Սա ամբողջովին համապատասխանում է ամպրոպի աստծու առասպելի սխեմայի երրորդ կետին (Իվանով, Տոպորով 1974, 5. տես Ս. Հարությունյան, 1981, 79): Ըստ Բ. Լինկոլնի վերակազմության, հնդեվրոպական «երրորդ» հերոսը, ամպրոպի, ռագնի աստծու կրկնակն ու օգնականը, նույնպես վերադարձնում է որպես ոչ հնդեվրոպացի ներկայացվող եռազուխ օձի հափշտակած խոշոր եղջերավոր անասունները եւ սպանում օձին (Լինկոլն, 1981, 96-132): Անասունների առեւանգման վերաբերյալ ավանդություններ հայտնի են եւ այլ ժողովուրդների մեջ, օրինակ, կովկասյան էպոսներում, բայց այստեղ նկատվում են առանձահատուկ հնդեվրոպական հատկանիշներ: Դավթի եւ «երրորդ» հերոսի ընդհանրությունների մասին տես ստորեւ:

## 2. ԾՈՎԻՆԱՐ ԵՎ ԻՆԱՐԱ

Խեթական առասպելաբանության մի դրվագում ամպրոպի եւ փոթորկի աստվածը պարտվում է օձ-հրեշից: Աստծու դուստրը՝ Ինարան, իր մահկանացու սիրեկանի հետ խնջույթի են հրավիրում ու արբեցնում օձին եւ նրա սերունդը: Մահկանացուն կապում է օձին պարանով, եւ ամպրոպի աստվածը գալիս սպանում է նրան: Հետագա տեքստում հիշվում է Ինարայի ջրային անդունդը (Հոֆներ, 1991, 11-12): Ըստ Բ. Լինկոլնի, այս սյուժեն ամպրոպի աստծու եւ նրա «երրորդ» անունով օգնականի հնդեվրոպական առասպելի մի դրսեւորումն է, ընդ որում Ինարայի անունն էլ ազգակից է հնդկական ամպրոպի աստծու՝ Ինդրայի անվանը (Լինկոլն, 1981, 117-122. հմմտ. նաեւ Իվանով, Տոպորով 1974, 121 հտն): Վերականգնված առասպելում ամպրոպի աստվածն ու «երրորդ» հերոսը արբեցնող խմիչք են օգտագործում եւ հետո միայն հաղթում սպանում օձ-հրեշին:

«Սասնա ծռերում» կռպպաշտ թագավորը՝ երկվորյակների իսկական կամ խորթ հայրը փորձում է իր կուռքերին զոհել եղբայրներին: Նրանց մայրը՝ Ծովինարն իմանում է այդ մասին եւ զգուշացնում նրանց: Չոհաբերելուց առաջ եղբայրներից մեկին արբեցնում են, բայց մյուս եղբայրը գալիս, փրկում է նրան եւ սպանում թագավորին: Որոշ տարբերակներում եղբայրները զոհաբերվելու փոխարեն իրենք են կապում թագավորին, նրա աչքի առաջ Ծովինարի հետ գինի խմում., հետո հաղթում թագավորին ու նրա զորքը (ՍԾ, Ա, 131-32. 312-13. ՄԴ, 46-50):

Հայկական եւ խեթական տվյալների նմանություններն ակնհայտ են (հերոսի հակառակորդն, ինչպես ասվեց, ամենուրեք նույնացվում է օձ-վիշապի հետ): Հատկանշական է կանացի կերպարների՝ Ինարայի եւ Ծովինարի անունների նմանությունը:

Բ. Լինկոլնը հենվում է այն հետազոտողների վրա, որոնք Ինարայի անունը համարում են կապված հին հնդկական ամպրոպի աստծու՝ Ինդրայի հետ՝ ծագած իբր \* *aner-* «կենսական ուժ» նշանակությամբ արմատից: Անկախ Ինդրայի անվան այս մեկնաբանությունից, որը վիճարկվում է, Ինարայի անունը միանգամայն համադրելի է այս արմատի հետ՝ եւ սա դիցանվան ստուգաբանություններից մեկն է:

Խեթերենի ստուգաբանական բառարաններում շեշտվում է Ինարա դիցուհու խաթական՝ նախախեթական, ոչ հնդեվրոպական ծագումը (առասպելի տեքստն էլ խաթական պուրուլլի տոնին է վերաբերվում), թեեւ խեթերենում եւ լուվերենում կան բառեր եւ նույնիսկ դիցանուններ կապված \* *aner-* արմատի հետ (Իննարասմիս, Իննարավանտաս, Աննարումմիենցի), որոնց հետ բաղարկված է՝ համարվում եւ խաթ. Ինարա անունը (Տիշլեր I, 358-62. Պուհվել I, 366-73): Պետք է նշել, որ խաթական պուրուլլի ծեսը ծագումով հնդեվրոպական է, լեզվաբանական առումով՝ թրակյան փոխառություն (Տոպորով 1976ա): Այսպիսով, հնարավոր է

ինճարա անվան ոչ միայն խեթական, այլև այլ հնդեվրոպական ծագումը միեւնույն \* əner- արմատից: Այն կարող էր փոխառվել խաթերենում պուրուլի ծեսի հետ միասին, ապա եւ խաթերենի անհետացումից հետո խեթերենում վերափնմաստավորվել նույն հնդեվրոպական արմատի խեթական դրսետորմամբ:

Գ. Ղափանցյանը Ծովինարի անունը կապված է համարում վերականգնվող\* Նար դիցանվան հետ (Ղափանցյան I, 295-300. հմմտ. «հոյ Նար» կրկներգը երգերում, Նուրին «ծիսական տիկնիկ» եւ այլն), որին, իր մեթոդի համաձայն, ոչ հնդեվրոպական ծագում է վերագրում, թեւ քննարկում է նաեւ հուն. Ներեւս դիցանունը:

Յայտնի են հնդեվրոպական բազմաթիվ դիցանուններ, կապված \*(ə) ner- արմատի հետ՝ իլիր. Նորեյա՝ Նորիկ քաղաքի գլխավոր աստվածուհին, գերմ. Ներթուս՝ մայր հողի ստվածուհի, սրա հետ ստուգաբանորեն նույնական, բայց արական, սկանդինավ. Նյորդր, սաբին. Ներիո՝ պատերազմի Մարս աստծու զուգակցուհին, հուն. Ներեւս՝ ծովային աստված, Ներեիդների (ջրային դիցուհիներ) հայրը (տես, օրինակ, Տոպորով 1976, 44 հտն. եւ այլուր):

Ինչպես նշում է Վ. Տոպորովը, այս անուններով առասպելաբանական կերպարները կապվում են կենսական, բեղմնավոր, պտղաբեր ուժի եւ ստորին աշխարհի, երկրի ու ջրերի հետ, ապա նւ բացահայտվում ամպրոպի աստծու եւ նրա կնոջ առասպելներում: Յետաքրքիր է նշել, որ եթե Բալկաններում անծրեւաբեր ծեսի հերոսը կոչվում էր ամպրոպի աստծու անվան հնչյունափոխված ձեւերով՝ Պեպերունա եւ այլն, հմմտ. սլավ. Պերուն դիցանունը (Յակոբսոն 1970, 615), ապա հայոց մեջ՝ Նուրին, թեթեւ Նար անվան աղավաղված ձեւով (Ղափանցյան I, 297-98):

Ծովինարը բացահայտորեն համապատասխանում է քննարկված հնդեվրոպական կերպարին: Որպես երկվորյակների մայր նա կնապվում է պտղաբերության, ծովային անունով եւ սյուժեով՝ ջրային տարերքի հետ, եւ բացի այդ՝ կայծակի ու փայլակի անձնավորումն է: Ծովինարին առանձնապես մոտ է պատկերանուն գերմանական, լատիներեն հաղորդմամբ՝ Nerthus (\* ner-to-) դիցուհին, պարզորոշ կապված ջրի հետ (նրան ստրուկները լողացնում էին լճում. Տակիտոս, «Գերմանիա» 40), որի արական անվանակից, ծովայինների հովանավոր սկանդինավ. Նյորդրը Ֆրեյրի եւ Ֆրեյայի՝ նույնարմատ անուններով երկվորյակային տիպի աստվածների հայրն էր: Ծովինարի անունը հենց երկնային ծիրանի ծովի՝ որտեղ ծնվում է որպես ամպրոպային աստվածություն դիտարկվող Վահագնը, անագրամն է, եւ նա մարմնավորում է ոչ միայն կայծակն ու փայլակը, այլև այդ «ծովը»: Ծով արմատն այսպիսով այս անվան մեջ երկրորդային հավելում է, որը խորհրդանշում է դիցուհու կապը երկնային ու երկրային ջրերի հետ: Մ. Աբեղյանը Ծովինարը ծագեցնում է Ծովյան- արածանցյալ ձեւից, քանի որ կա Ծովինարի նաեւ Ծովյան (էպոսում՝ Ծովյալ) տարբերակը, բայց ասվածը ցույց է տալիս Գ. Ղափանցյանի մեկնաբանության իրավացությունը (ծով+Նար): Անվան բուն ձեւը պետք է իրոք լիներ Նար: Երգերի կրկներգերում հանդիպող

«հոյ Եր» եւ շրջված «Երոյ» < «Եր հոյ» ձեւերում հոյ-ը Գ. Ղափանցյանը մեկնաբանում է որպէս «մեծ, լավ»՝ համեմատելով հոյանամ եւ հոյակապ բառերի հետ: Այս հոյ-ը պետք է ծագեցվի հնդեվրոպական \*poti- «տեր, ամուսին, պետ», արմատից (ինչպես եւ հոյակապն ըստ Գ. Աճառյանի): Նույն արմատի մի տարբերակով է կոչվել հայոց հնագույն դիցարանի աստվածների նահապետը (հմմտ. Գայկ, տես ստորեւ): Գոյ-ն այսպիսով պետք է իմաստավորվի որպէս «տիրուհի, մեծ աստծու կին, զուգակից», ինչպէս եւ Գայկ(յ)-ը՝ «տեր, երկնքի, ամպրոպի աստված», որտեղ երկու ձեւերն էլ փաստորեն մականուններ՝ կոչումներ են, ծագած թերեւս միեւնոյն արմատի ձայնդարձային տեղափոխումներից, իսկ Ծովյանը պետք է լինի Երի մակդիրը: Այսպիսով՝ Ծովինարը հնագույն մի դիցուհի է՝ վերակազմութեան մեջ՝ ամպրոպի աստծու կինը: Գնարավոր է, որ Ծովինարի մեջ պահպանվել է խեթ.-խաթ. Ինարայի անունը, բայց երկրորդ վանկի ի-ն կկարող է եւ այլ ծագում ունենալ, իսկ ծով- հայկական հավելումը ցույց է տալիս նրա հայկական իմաստավորումը:

### 3. ԶԻՈՒ ՅԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Հնդեվրոպական առասպելաբանութեան մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ծին՝ կապված հնդեվրոպացիների տնտեսութեան եւ տեղաշարժի մեջ ունեցած իր դերի հետ: Բազմաթիվ այլ ժողովուրդներ եւս հին շփումների հետեւանքով փոխառել են ծինուն առնչվող հնդեվրոպական բազմաթիվ առասպելաբանական պատկերացումներ եւ ծեսեր: Գնարահայտ է հնդեվրոպական դիցաբանական երկվորյակների կապը ծինու հետ, պարզորոշ արտահայտված հնդկական, հունական, գերմանական եւ բալթիկ առասպելներում, ընդհուպ մինչեւ երկվորյակային տիպի կերպարներին «ծի» արմատով անվանելը, հմմտ. հին հնդ. Աշվիններ («ծի» արմատից), անգլոսաքս. Գեմզիստ եւ Գորսա («հովատակ» եւ «ծի»): Գնարավոր է համարվում հնդեվրոպական ամպրոպի աստծու վերակազմութիւնը հեծյալ (կամ երբեմն՝ մարտակառքով) վիշապամարտիկի տեսքով, ինչպէս եւ ծինու հետ կապված հատուկ հնդեվրոպական դիցուհու գոյութիւնը՝ հմմտ. կելտ. Էպոնա («ծի» արմատից) դիցանունը, խեթ. ծիավոր աստված Պիրվայի եւ խուռիական Իշտար-Շավուշկա դիցուհու նույնացումը եւ այլն (տես, օրինակ, Իվանով MHM I, 666 եւ այլուր):

Գայկական Էպոնում կարեւորագույն դեր կատարող Քուռիկի Ջալալուն՝ Էպոնի բոլոր սերունդների մարտական ծինուն ծովի տակ գտնում է երկվորյակ Սանասարը: Մի քանի տարբերակներում երկվորյակ եղբայրները դառնում են թագավորի ծիապաններ (տես օրինակ, ՍԾ, Ա, 841-42. Բ, II, 557): Սանասարի կապը կայծակի եւ ամպրոպի հետ ակնհայտ է, եւ

Մ. Աբեղյանը Սանասարին անվանում է «ամպրոպային հերոս» (Աբեղյան Ա, 414-18, հմմտ. նրա կողմից ձիու հետ միասին նաեւ կայծակե թրի ձեռք բերումը): Էպոսի երկվորյակների մայրը Ծովինարն է՝ ամպրոպային դիցուհի: Վերին աստիճանի հատկանշական է Ծովինարի բանահյուսական կերպարը՝ նա պատկերացվում է ամպերի մեջ իր հրեղեն ձիով «խաղալիս», երբեմն ծպտված տղամարդու կերպարանքով (Աբեղյան է, 70), այսինքն՝ միանգամայն համապատասխանում է հնդեվրոպական ձիավոր դիցուհուն:

Համաձայն Յ. Պուհլելի վերակազմության, ձիու հետ կապված գլխավոր հնդեվրոպական առասպելը ներառում էր արքայական դասի ներկայացուցչի սեռական մերձեցումը ձիակերպ «տրանսֆունկցիոնալ» դիցուհու հետ եւ երրորդ ֆունկցիային պատկանող երկվորյակային զարմի ստեղծումը (Պուհլել 1970, 172): Հնդեվրոպական կենդանակերպ հիերոգամիայի՝ սրբազան ամուսնության մոդելում գործում են արքան եւ էգ ձին, ի հակադրություն առաջավորասիական եւ արեւելամիջերկրածովյան մոդելի, ուր թագուհին մերձեցում է ցլի հետ (հմմտ. օրինակ, հուն. Պասիփաեի ավանդությունը): Ըստ հեղինակի, այսպիսով, հնդկական աշվամեդհա (ձիու զոհաբերության) ծեսի ժամանակ նկարագրվող թագուհու եւ զոհաբերվող ձիու խորհրդանշական մերձեցումը հնդեվրոպական ավանդության ձեւափոխության միջանկյալ արդյունքն է (երբ մարդու եւ կենդանու սեռերը փոխվել են, բայց կենդանին դեռ ձին է): Հատկանշական է, որ ձիու հետ առնչվող իրանական տրանսֆունկցիոնալ դիցուհին եւ նրա համապատասխանությունները կապվում են ջրի, խոնավության հետ՝ Արըդվի Սուրա Անահիտա «Խոնավ, հերոսական, անարատ», \*Harahvati «ջրերով հարուստ» (անդ, էջ 165, 168-69):

Էպոսի տարբերակներից մեկում Քաջանց թագավորի որդու հետ բռնությամբ ամուսնացած Սասունի Աստղիկ թագավորի դուստր Սառան (=Ծովինար) ծովափին զբոսնելիս խմում է ձիու հետքի ստեղծում հավաքված ջուրը, որի հետեւանքով հղիանում է եւ ծնում Սանասարին եւ Բաղդասարին: Տղաները պահանջում են իմանալ իրենց ծագումը: Մայրը տանում է նրանց ծովափ, որտեղ նրանք ձեռք են բերում իրենց «Քուռկու ճալալին» եւ պատմում իր խմած ջրի մասին (Սծ, Ա, 1028-31): Ինչպես նշում է այս արխայիկ պատումի վրա հատուկ ուշադրություն դարձրած Ս. Հարությունյանը, տեքստի տրամաբանությունն այնպիսին է, որ երկվորյակներն իրենց ծննդով փաստորեն հանձնում են իրենց հրեղեն ձիուն, այսինքն՝ ձին դառնում է նրանց հայրը («Հայ առասպելաբանությունը» ձեռագիր. տես նաեւ Իսրայելյան 1980, 218-19): Հատկանշական է, որ հեքիաթներում կենդանու ոտնահետքից ջուր խմելը հանգեցնում է հերոսի՝ այդ կենդանուն վերածվելուն, եւ կարելի է պատկերացնել նաեւ Սառա-Ծովինարի ձիու վերածվելը:

«Սասնա ծռերի» այս դրվագը, այսպիսով, լավագույնս համապատասխանում է առասպելի հնդկական, կիսով չափ ձեւափոխված ենթադրվող տարբերակին: Հետաքրքիր է նշել, որ «Վիպասանքում» Սանասարին եւ Բաղդասարին համապատասխան երվանդը եւ երվագը ծն-

դում են Արշակունի՝ արքայական ընտանիքի կնոջից «յանկարգ խառնակութենե, որպէս Պասիփայե (ծնանի) զՄինոտավրոս» (Խորենացի II, ԼԷ): Պասիփայեի՝ ցլակերպ աստծու հետ մերձենալու առասպելի վերաբերյալ, որպէս ոչ հնդեվրոպական հիերոգամիայի օրինակ, տես վերը, այսինքն հավանական է, որ այստեղ հնդեվրոպական ավանդույթունն իր տեղն ամբողջությամբ զիջել է առաջավորասիականին, թեւ տեսականորեն չի բացառվում, որ Խորենացին Պասիփայեի օրինակով նկարագրեր նաեւ կնոջ ու ձիու մերձեցումը:

Ըստ մի վերակազմության, հնդեվրոպական ձի-աստվածը բռնությանմբ մերձենում է ձիու հետ կապված աստվածուհու հետ, որի հետեւանքով ծնվում է ձիու հետ առնչվող մի աստվածություն (Դեքստեր 1990, 94): Հայկական էպոսի քննարկված տարբերակի տվյալներն այսպիսով համապատասխանում են հնդկական Աշվինների ծնունդի առասպելներին (նրանց հայրը ձիու տեսքով բռնությամբ կենակցում է ձիու վերածված նրանց մոր հետ) եւ աշվամեդհա ծեսին: Մյուս կողմից, հայկականի լավագույն զուգահեռները հայտնի են հունական ծովերի աստված Պոսեյդոնի առասպելներում՝ Պոսեյդոնը ձիու տեսքով՝ տիրում է Դեմետրեին. նրա կիճը ներեիդներին մեկն էր (հմմտ. Ծովինար), որից նա սերել էր Տրիտոնին: Այս անունը համարելի է հնդեվրոպական «էրրորդ հերոս» \*trito-ի հետ, որը հաճախ ջրային կապեր է ունենում («էրրորդ հերոսի» վերաբերյալ հայկական էպոսի համատեքստում տես ստորեւ): Պետք է նշել, որ ձիու հետ կապված դիցուհու այս առասպելները հնդեվրոպական են, թեւ դիցուհու կերպարը կարող է եւ ծագմամբ հնդեվրոպական չլինել, այլ խորհրդանշել տեղի մախահնդեվրոպական բնակչությունը եւ նրա մայր աստվածուհուն (տես Դեքստեր 1990, 288, 293, հմմտ. Ծովինարի եւ խաթական դիցուհու կապերը):

#### 4. ՑՈՒԼԸ ԵՒ ԿՈՎԸ ՈՐՊԵՍ ԱՄՊՐՈՂԱՅԻՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՄՎՈԼՆԵՐ

Ցուրը Հայկական Լեռնաշխարհի եւ հարեւան երկրների բոլոր հին ժողովորդների, ինչպէս եւ ամենայն հավանականությամբ՝ հին հնդեվրոպացիների պատկարացումներում ամպրոպի աստծու սիմվոլն էր (Իվանով MHM I, 203): Հայկական հավատալիքներում ամպն ու որոտը ներկայացվում են որպէս կաթնաղբյուրից ջուր խմող եւ արյուն ծովից՝ այսինքն երկնային ծիրանի ծովից ձայն հանող կով (Աբեդյան է, 66): Ծովինարն է կաթնաղբյուրից ջուր խմելով հղանում երկվորյակներին, նա ծիրանի ծո-

վի եւ կայծակի անձնավորումն է, որն, այսպիսով, պատկերացվել է նա-  
եւ որպէս կով (Ս. Զարուքյունյան, «Չայ առասպելաբանութիւնը»):

## 5. ԱՐԵՒԻ ԱՍՏՎԱԾԸ, ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՔՈՒՅՐԸ

Հնդեվրոպական առասպելաբանութեան մեջ արեւի աստվածը կապ-  
ված է ձիերի հետ, եւ կարող է ներկայացվել ձիեր լծած մարտակառքի  
վրա (անիվը արեւն է, տես Իվանով MHM I, 666 եւ այլուր): Դիցաբանա-  
կան երկվորյակները պատկերանում են որպէս երկնքի, արեւի աստծու  
որդիներ՝ հմմտ. հին հնդ. Դիվո Նապատա, հուն. Դիոսկուրոսներ, լատվ.  
Դիեվա դելի՝ միեւնույն նշանակութեամբ, հնդեվրոպական լուսավոր  
երկնքի եւ արեւի աստծու \*deiwos- անունից: Նրանք արեւային ձիեր են  
վարում, սիրահետում են իրենց իսկ քրոջը, որի պատճառով եւ հակադր-  
վում են իրար (տես Ուորդ, 1968, 10-11. Գամկրելիձե, Իվանով 1984, 777  
եւ այլուր):

Հայկական լառնաշխարհում ձիերը հնուց ի վեր կապված էին հա-  
մարվում արեւի հետ: Ձին ուրարտական արեւի աստծու սիմվոլն էր  
(Չմայակյան 1990, 45), ընդ որում այդ աստծու անունն էլ փոխառված է  
խեթական մի լեզվից եւ ծագում է միեւնույն հնդեվրոպական \*deiwos-ից  
(Գամկրելիձե, Իվանով 1984, 897. Դյակոնով 1988, 172): Չին Հայաստա-  
նում արեւի աստծուն նվիրաբերված ձիեր կային, որոնց գոհաբերում էին  
(Քսենոփոն, «Անաբասիս» IV, 5, 35. հմմտ. ձիու գոհաբերութեան հնդեվ-  
րոպական ծեսերը՝ հնդ. աշվամեդհա. լատ. օկտոբեր էկվոս եւ այլն.  
տես, օրինակ, Գամկրելիձե, Իվանով, 1984, 482-83): Սանասարը եւ Բաղ-  
դասարը, որոնք էպոսի վերը քննարկված տարբերակում ծագում են ձի-  
ուց՝ արեւի աստծու սիմվոլից, այսպիսով կարող են համեմատվել մյուս  
հնդեվրոպական երկվորյակների՝ արեւի որդիների հետ: Նրանք կռվում  
են իրար հետ Դեղձուն-ծամի պատճառով, որը որպէս բաց դեղին մազե-  
րով «ակն ու արեգակ» աղջիկ պարզորոշ կերպով կարող է համարվել  
արեւային մի աստվածութեան վիպական արտացոլումը (Աբեղյան Ա,  
417), արեւի աստծու դուստրը:

## 6. ՀԱՅՎԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ

Խեթական առասպելաբանության մեջ թագուհու 30 երկվորյակ որդիները ամուսնանում են իրենց 30 քույրերի հետ (Հոֆմեր 1991, 32-63), իսկ իռլանդական մի սագայում երեք երկվորյակ եղբայրներին գաթակղում է նրանց քույրը (Դյունեգիլ II, 346-47), եւ կարծիք կա, որ հնդեվրոպական երկվորյակները նախապես կարող էին երեքը լինել (Իվանով 1986, 20): Երեք երկվորյակ եղբայրների ավանդությունը հայտնի է եւ հայոց մեջ (Խորենացի I, Ի2): Այստեղ, իբր մարական Ածդահակ թագավորի երագում, նկրագրվում է Հայաստանում, բարձր լեռան վրա նստած ծիրանագգեստ, երկնագույն քողով «աչեղ, բարձրահասակ եւ կարմրայտ» մի կին, բռնված ծննդի երկունքով: Նա ծննդաբերում է երեք դուցգզուն որդի, որոնցից երրորդը վիշապի վրա նստած հարձակվում եւ սպանում է Ածդահակին (այստեղ երրորդ եղբայրը համապատասխանում է հայոց Տիգրան թագավորին, իսկ Ածդահակը իրանական առասպելաբանության եռագլուխ օձ-վիշապն է՝ Ածի Դահական, որին սպանում է «Երրորդ» հերոս Թրատատոնան):

Ակնհայտ է այս ծննդաբերող կնոջ եւ ծովիճարի համապատասխանությունը: Ծովիճարը, ինչպես եւ առասպելի ծննդաբերող կինը, երկվորյակների եւ վիշապամարտիկ հերոսի մայրն է: Կնոջ ծիրանագգեստ լինելը եւ լեռնային, այսինքն երկնքին մոտ տեղադրությունը ցույց են տալիս նրա կապը երկնային ծիրանի ծովի հետ, որի մարմնավորումը ծովիճարն է: Հատկանշական է, որ բանահյուսության մեջ ծովիճարը եւս նկարագրվում է որպես քող կրող (Աբեդյան է, 70), այսինքն այս երկու կերպարներն իրենց հատկանիշներով նույնանում են:

Այսպիսով, կարելի է կարծել, որ առասպելի հնագույն մի տարբերակում ծովիճարի որդիները երեքն էին: Այս առասպելը պարզորոշ համապատասխանում է Վահագնի երգին (Գամկրելիձե, Իվանով 1984, 503)՝ «Երկներ երկիր, երկներ երկիր, երկներ եւ ծովն ծիրանի» (Խորենացի I, LL), որտեղ տիեզերական երկունքի հետեւանքով ծնվում է վիշապամարտիկ Վահագնը, իսկ ծովիճարը մարմնավորում է «Երկնող» ծիրանի ծովը:

Վերելի քննությունը ցույց է տալիս, որ ծովիճարի եւ նրա երկվորյակ որդիների առասպելը, ավանդված ուշ, բանահյուսական աղբյուրներում, իրականում գալիս է խորը հնությունից:

## 7. ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԻՆԴՐԱ

Մ. Աբեղյանը, բացահայտելով Սանասարին որպես ամպրոպային հերոս, համեմատում է նրան հնդ. Ինդրայի, Ապամ Նապաստի եւ հայ Վահագնի հետ (Աբեղյան Ա, 414): Եվ իրոք, ամպրոպային Ինդրան Ազնիի երկվորյակ եղբայրն էր եւ հաճախ կոչվում էր Ապտյա («ջրային»), իսկ Սանասարը Բաղդասարի երկվորյակ եղբայրն էր, ծնված Ծովինարի խմած ջրից: Նա ակնհայտ ամպրոպային հերոս է եւ հաճախ կոչվում է «ծովային»:

Երկ- վանկի կրկնությամբ եւ երկվորյակության գաղափարով է ներծծված «Վահագնի երգը», որի՝ նաեւ ծիրանի ծովից ծնվող հերոսին հաճախ ամպրոպային հատկանիշներ են վերագրում: Այս երգի եւ հին հնդկական որոշ հիմների բազմաթիվ ընդհանրություններ նկատվել եւ քննարկվել են վաղուց ի վեր:

Այսպիսով, ամպրոպային հերոս, երկվորյակ, «ծովային» Սանասարի կերպարը շատ գծերով համապատասխանում է հնդկական, նույնպես ամպրոպային, երկվորյակ ու «ջրային» Ինդրային, ապա եւ Վահագնին, այսինքն Սանասարը կարող է վերականգնվել որպես հնագույն հայկական ամպրոպի աստծու վիպականացած կերպարը, որը հնդեվրոպական համատեքստում բացառիկ ընդհանրություններ է դրսևորում հատկապես իր հնդկական գուգահեռի հետ: Պետք է նշել, որ չնայած Վահագնի եւ Սանասարի շատ ընդհանրություններին, նրանք նույնական չեն: Սանասարը «սեւ հերոս» է, իսկ Վահագնը, որ հուր մազեր, բոց մորուք եւ արեգակ աչքեր ուներ, առավել համապատասխանում է «սեւ հերոսի» հակադիր կերպարին (տես ստորել): Ստորել ցույց կտրվի նաեւ, որ Սանասարն իր տեղանացմամբ եւ կերպարով ուղղակի համընկնում է խուռիական եւ ուրարտական ամպրոպի ու փոթորկի աստվածներ Թեշուբի եւ Թեյշեբայի հետ:

## 8. ՍԱՆԱՍԱՐ ԵՎ \* NEP(Օ)Տ-

Ապամ Նապատը՝ «ջրերի սերունդ, թոռ», կամ «ջրային Նապատ», հին հնդ. երկրորդական ստվածություն էր (երբեմն՝ կրակի աստված Ազնիի մակդիրը), կապված ջրերի ու այնտեղից էլնող կրակի ու կայծակի հետ: Այս կերպարը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում վերլուծված է Ժ, Դյումեզիլի կողմից: Դնդկական, իրանական, իռլանդական եւ լատինական առասպելների քննությունը բացահայտում է

հնդեվրոպական նախնական լճի առասպելը: Այնտեղից են սկսվում գետերը, այնտեղ թաքցնված է մի լուսավոր եռոթյուն, իսկ լճի ջրերի տիրակալը, որն անվնաս է մտնում այնտեղ, կոչվում է հնդեվրոպական \*nep(ō)t- «քրոջ կամ դստեր որդի» արմատով՝ հմմտ. հնդկական եւ իրանական, իրարից քիչ տարբեր հնչողությամբ, Ապամ Նապատ, իռլ. Նեխտան, լատ. Նեպտուն (Դյունեզիլ III, 21 համ.): Իրանական առասպելում Ապամ Նապատը Կուրուկաշա լճում թաքցնում է աստվածային, լուսավոր խվարընան («փառք») եւ ոչ արիացի հերոսը չի կարողանում այն հանել, իռլնդականում Նեխտանի կինը փորձում է մոտենալ ամուսնու գաղտնի ջրհորին եւ հաշմվում, իսկ լատինականում Նեպտունալիս տոնի օրը Ալբա լիճը դուրս է գալիս ավերից եւ սպառնում Զոռմին: Զատկանշական է, որ այս ջրերը բնորոշվում են որպես մաքուր, փայլուն, սպիտակ (հմմտ. լատ. Ալբա «սպիտակ», տես անդ, 22, 28-29), եւ հնդ.-իրան. Ապամ-Նապատն ու լատ. Նեպտունը կապված են ձիերի հետ:

Զեշտ է տեսնել, որ հայկական էպոսի տվյալները, շատ հատկանիշներով համընկնում են հնդեվրոպական այս առասպելներին: Սանասարը սերում է ջրից, նա է, որ անվնաս մտնում է ծովը եւ այնտեղից ձեռք բերում կայծակի թուրը, հրեղեն ձին եւ հզորանում: Վանա լիճը, ուր մի պատումի համաձայն մտնում է Սանասարը, կոչվել է նաեւ Արձեշի ծով (հմմտ. \*arg- «փայլուն, սպիտակ», տես Ա. Պետրոսյան 1991, 113), եւ էպոսի հին տարբերակում երկվորյակները ծագում են Խլաթից (Արծկեի գավառ):

Ի հայտ են գալիս նաեւ հնդեվրոպական \*nepōt-ի երկու իմաստները (այս արմատի մասին տես Բենվենիստ 1995, 160-63): Սանասարը արքայդստեր որդին է, այսինքն արքայի թոռը, բայց էպոսում կարելի էր պատկերացնել, որի քրոջ որդիներն են երկվորյակները:


## 9. «ԵՐՐՈՐԴ ԶԵՐՈՍԸ»՝ ԴԱՎԻԹ ԵՎ ՎԱՅԱԳՆ

Վահագնի հիմնում բազմիցս կրկնվող երկ- վանկը կարող է ակնարկել երկու թվականը եւ երկվորյակության գաղափարը (այս հիմնի անագրատների մասին, որոնք բնորոշում են այն որպես հնդեվրոպական բանաստեղծական տեխնիկայի ամենավաղ օրինակներից մեկը, տես Իվանով 1969. 1983): Բայց չնայած դրան, հիմնի ողջ ձեւը, բովանդակությունը եւ տրամաբանությունը կողմնորոշված են դեպի եռակիության գաղափարը (երեք անգամ երեք տող, տիեզերքի երեք ծննդաբերող մասեր եւ այլն), որը կարող է ակնարկել երկվորյակների թվով երեքը լինելը, կամ երկվորյակներին հաջորդող «Երրորդ» հերոսի առասպելը: Ինքը Վահագնը հանդես է գալիս որպես Աժդահակին սպանող Տիգրան թա-

գավորի (Ածդահակի երազի երրորդ երկվորյակի եւ իրան «երրորդ հերոս» Թրատատոնայի համապատասխանության) երրորդ որդի, նրան էր վերված ամսվա 27-րդ (3x3x3) օրը, նա հիշատակվում է աստվածների շարքում երրորդը եւ պաշտվում տաճարական եռամսս համալիրում (Ագաթանգեղոս, 127, 809): Ելնելով այս եւ որոշ այլ տվյալներից, Վ. Տոպորովը Վահագնին համադրում է հնդեվրոպական, հատկապես հնդ-իրանական \*trito- «երրորդ» անունով «ջրային» եւ վիշապամարտիկ հերոսների հետ (հնդ., իրան. «ջրային» Տրիտա, իրան. Թրատատոն, հուն. Տրիտոն, ռուս. հեքիաթ. Իվան Տրետյակ կամ Իվան Վոդովիչ «ջրի որդի»): տես Տոպորով 1977. հմմտ. Ղափանցյան I, 94, 306): Ենթադրվում է նույնպիսի կապ նաեւ հայասական Terititunnis դիցանվան հետ, որը կարող էր լինել Վահագն իրանական անունը հետագայում միայն ստացած, հնագույն տեղական, հնդեվրոպական, թերեւս հայկական աստվածը:

Այս ենթադրությունը հաստատվում է հետեւյալ փաստերով: Տեքիտոտիտուննիսը հիշվում է որպես Դայասայի ութերորդ աստված (եւ ոչ իններորդ, ինչպես Գ. Ղափանցյանին հետեւելով գրում է Վ. Տոպորովը, տես KUB XXVI, 39 եւ տեքստի բազում թարգմանված հրատարակությունները): Ագաթանգեղոսը, պատմելով հեթանոսական տաճարների կործանման մասին, ի տարբերություն մյուս դեպքերի, հատուկ շեշտում է Վահագնի պաշտամունքի «ութերորդ» լինելը (Ագաթանգեղոս, 809): Կարելի է ցույց տալ, որ հայասական աստվածների հերթականությունն այլ դեպքերում եւս համապատասխանում է հայ հեթանոսական տաճարների կործանման ավանդության հերթականությանը, որը բացատրվում է հայասական եւ հայ դիցարանների կառուցվածքային ընդհանրություններով եւ ժառանգորդությամբ (տես նախապես Ա. Պետրոսյան 1992): Այսպիսով, Վահագնը եւ Տեքիտոտիտուննիսը ոչ միայն հնդեվրոպական «երրորդ» կերպարներ են, այլեւ դիցարանի ութերորդ աստվածներ, եւ տեսականորեն հնարավոր է նաեւ նրանց պաշտամունքի վայրերի նույնությունը (Մուշի դաշտում):

Պետք է նշել, որ «Վահագնի երգի» աստվածը բարդ կերպար է: Որպես «երրորդ» հերոս \*trito-, նա, ըստ Վ. Տոպորովի, համապատասխանում է «հիմնական առասպելի» ամպրոպի աստծու կրտսեր, երրորդ, պատժվող եւ վերածնվող որդուն իսկ երկվորյակության ակնարկով, ծովային ծնունդով եւ վիշապամարտիկ բնույթով՝ «ծովային» Սանասարին (տես Աբեղյան Ա, 406): Երգում բազմիցս կրկնվող երկ - վանկը, որը, գոնե մեծ մասամբ, ծագում է \*dw- նախածեից, կարող է հնդեվրոպական թրկնքի, արեւի աստծու \*deiwo- անվան անագրամը լինել (հմմտ. Ս. Դարությունյան 1987, 53. Որա «աչկունք էին արեգակունք»), իսկ յոթերորդ տողը՝ «նա հուր հեր ունէր»՝ ուղղակիորեն մեկնաբանվել որպես «նա հուր Դերուն էր», հնդեվրոպական ամպրոպի աստծու անունից՝ \*peruno-> հայ. \*Դերուն: Սա կարող է ակնարկել հայ ավանդության մեջ (ինչպես, օրինակ, եւ հունական ու լատինական դիցարաններում) հնդեվրոպական արեւի եւ ամպրոպի աստվածների միավորու-



4 II  
85254

մը մեկ կերպարում, ապա եւ աստօն ու նրա (երկվորյակ) որդու որոշ հատկանիշների նույնությունը (մանրամասն տես Ա. Պետրոսյան 1997, 60-64):

Վահագնի ծնունդը եղեգնիկից համեմատվել է Ինդրայի մասին մի առասպելի հետ, որտեղ նա թաքնվում է լուտոսի սնամեջ ցողունի մեջ (Դյունեզիլ 1970, 123 համ.): Հաշվի առնելով Ինդրայի եւ Ազնիի երկվորյակությունը, «Վահագնի երգի» հերոսին կարելի է համեմատել նաեւ Ազնիի՝ կրակի աստօն հետ: Երկնքի, երկրի եւ ծովի՝ տիեզերքի երեք մասերի միասնական երկունքից եւ կարմիր եղեգնից որպէս կրակ ծնվող Վահագնը կարող է պատկերացվել որպէս տիեզերքի այդ հատվածները միավորող տիեզերական ծառի մի դրսեւորումը, եւ մեկնաբանվել, ինչպէս եւ Ազնին, որպէս ջահ, կրակ երկրի վրա, ապա եւ երկնքում՝ արեւ կամ փայլակ, կայծակ (MHM I, 35. Վահագնի եւ Ազնիի վերաբերյալ տես հատկապէս Արեշյան 1992):

Վահագնը ռազմի աստված էր, որից քաջություն էին հայցում (Ագաթանգեղոս, 127): Հնդեվրոպական ռազմիկը եւ նրա գործողություններն ամենուրեք առնչվում են «երեք» թվականի, երրորդության եւ եռակիության տարբեր դրսեւորումների հետ, իսկ նրա հակառակորդները հանդես են գալիս որպէս եռագլուխ, եռամաս, եռակի կամ թվով երեքը: Տարբեր առասպելների քննությունը թույլ է տվել ժ. Դյունեզիլին ռազմի կերպարի համար վերականգնել «երրորդ սպանում է եռակիին» բանաձեւը (Դյունեզիլ 1970, 15. հմմտ. «երրորդ» հերոս Թրատետանայի կողմից եռագլուխ Աժի Դահակայի սպանությունը, երրորդ Հորացիոս եղբոր՝ երեք Կուրիացիոս եղբայրներին սպանելը եւ այլն): Բ. Լինկոլնը, որն, ի միջին այլոց, ծանոթ չէ Վ. Տոպորովի աշխատանքներին, հնդեվրոպական ռազմի կերպարի համար վերականգնում է \*trito- «երրորդ» անունը (նա որպէս «երրորդ» հաջորդում է երկվորյակներին. տես Լինկոլն 1981, 131-32, 1991, 10): ժ. Դյունեզիլը եւ Բ. Լինկոլնը եւս հայ Վահագնին համարում են թեւ փոխառված, բայց հնդեվրոպական ռազմիկ, «երրորդ» կերպար (Դյունեզիլ 1970, 126 համ. Լինկոլն, 1981, 106-7):

Հնդեվրոպական «երրորդ» հերոսը պարզորոշ ի հայտ է գալիս եւ «Սասնա ծռերում»: Մեծ Միերը՝ Սանասարի երեք որդիներից ամենանշանավորը, սպանում է Խլաթի Սպիտակ դելին, ինչպէս Ռուստամը «Շահնամեում» (մի տարբերակում դա վերագրվում է Դավթին՝ ՍԾ, Բ II, 477-78): Փոքր Միերը ավերում է Խլաթը երեքով՝ քեռի Թորոսի ու Ձենով Օհանի հետ (հին տարբերակում դա եւս վերագրվել է Դավթին): Այս դրվագները համադրելի են հատկապէս հռոմեական ավանդության հետ, որտեղ երրորդ Հորացիոս եղբայրը սպանում է «սպիտակ» Ալբա քաղաքի երեք եղբայրներին:

Բայց էպոսի իսկական «երրորդ հերոսը» Դավթին է: Նա երրորդ ճյուղի հերոսն է, Սասնա ծռերի երրորդ սերնդի ներկայացուցիչը, Սասունի երրորդ արքան, էպոսի ամենառազմական կերպարը: Այս երրորդական համակարգի դրսեւորումներն ակնհայտ են հատկապէս Դավթի եւ նրա հիմնական հակառակորդ Մելիքի մենամարտի դրվագում: Հակառա-

կորդներն իրար պետք է հասցնեն երեքական հարված, եւ Մելիքը խփում է երեք անգամ, իսկ Դավիթը սպանում է նրան միակ, բայց «Երրորդ» հարվածով, քանի որ առաջին երկուսը՝ «բաշխել» էր Մելիքի մորն ու քրոջը (հմմտ. հակառակորդի եռակի եւ հերոսի «Երրորդ» լինելը): Մելիքին սպանելուց հետո Դավիթը թշնամու տեղ է դնում իրեն դիմավորողներին, ապա գինի խմում ու երեք օր քնում: Այս դրվագը թվում է թե հնդեվրոպական այն առասպելների արձագանքը պետք է լինի, որտեղ «Երրորդ հերոսը» իր հակառակորդ(ներ)ին հաղթելուց հետո մարտական կատաղության մեջ հարձակվում է իրեն դիմավորողների՝ հատկապես կանանց վրա (Դյունեզիլ 1970, 9 հտմ.):

Դավիթը համապատասխանում է էպոսի հնագույն տարբերակների Մուշին՝ Մուշ քաղաքի եւ Մուշի դաշտի էպոնիմին (տես ստորեւ): Մուշի դաշտի անավածն էր Վահագնը, որը հետագայում շարունակվել է Մշո սուլթան սուրբ Կարապետի կերպարում: Այսինքն, Վահագնը եւ Դավիթը ոչ միայն հնդեվրոպական «Երրորդ հերոսի» ազգակից դրսեւորումներ են, այլ երկրորդն առաջինի ուղղակի շարունակությունն է, հին աստծու պաշտամունքի վայրում տեղայնացած վիպական կրկնակը: Յատկանշական է նաեւ «Վահագնի երգի» \*dw- անագրամային տարրի եւ Դավթի անվան որոշակի նմանությունը, որը նույնպես կարող է ակնարկել նրանց ծագումնական կապերը (պետք է շեշտել, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե ստուգաբանական՝ այլ մոտ հնչողությամբ պայմանավորված առասպելաբանական ասոցիացիաներին): Ըստ Ս. Յարությունյանի բանավոր հաղորդման, Դավթի անունը տօնականորեն կարող էր ծագել հնդ. Տրիտայի «Երկրորդ» եղբայր Դվիտայից եւ հետո միայն բաղարկվել Աստվածաշնչի Դավիթ անձանվան հետ (հմմտ. «Վահագնի երգում»՝ ե՛ւ երկուսի ե՛ւ երեքի շեշտվածությունը. էպոսում հնդկական ու արիական ազդեցությունների եւ ազգածնության առասպելում երրորդ «սեւ հերոս» Արամի մասին տես ստորեւ):

## 10. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ «ՇՈՒՆ ՍՊԱՆՈՂ» ՀԵՐՈՍԸ

Վ. Իվանովը մի շարք ավանդությունների հիման վրա վերականգնել է հնդեվրոպական «շուն սպանող» հերոսի առասպելությոը (Իվանով 1977. հմմտ. մանուկ հասակում դարբնի շանը սպանող իռլանդ. հերոս Կուխուլինի, Սուդիա-մեռնիական Հերմես-Կանդավլեսի «շուն խեղդող» կերպարները եւ այլն): Այս համատեքստում քննարկվել են նաեւ առասպելական շների կողմից շրթաներ լիզելու եւ հերոսին լիզելով վերակենդանացնելու մոտիվները, համեմատելի Արտավազդի եւ Արա Գեղեցիկի՝ էպոսի Փոքր Միերի նախորդների առասպելների հետ (անդ, 206 հտմ.,

տես նաեւ Իվանով, 1976, 160-63):

«Սասնա ծռերի» երկու մեկը մյուսից ծագող տարբերակներում Դավթի եղբայր-հակառակորդի անունն է Շուն Մելիք (Սծ, Բ II, 323 հտն. 355 հտն.), որին սպանելով Դավիթը որոշակիորեն նույնանում է «շուն սպանող» հերոսի հետ: «Շուն» է անվանում նաեւ Զայլը Բելին (Սեբեսու I), իսկ հակառակորդին որպէս շուն պատկերելը կապված է շան զոհաբերության եւ այս հերոսի առասպելույթի հետ (Իվանով, 1977, 210), որն արտացոլվել է նաեւ այլ հայկական ավանդություններում:

Այն, որ Դավթի եւ «շուն սպանող» հերոսի համադրությունը պատահական չէ, ցույց է տալիս հետեւյալը: Դավթի կեղծարարի նախատիպերից մեկն է լեգենդար սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը (տես Աբեղյան Ա, 394-95), որն իր անունով եւ կերպարով որոշակիորեն համապատասխանում է Լյուդիայի լեգենդար թագավոր Մյուրսիլոս-Կանդավլեսին («շուն խեղդող»), եւ այսպիսով նորից շեշտում Դավթի կապը «շուն սպանող» հերոսի հետ (տես նաեւ ստորեւ):

Յնդեվրոպական «շուն սպանող» հերոսը համապատասխանում էր ռազմի գայլային աստվածությունը՝ որին շներ էին զոհաբերում: Այս աստծու անունը, ինչպէս եւ «գայլ» տերմինը որոշ լեզուներում կողավորվում էր \*dhew- արմատով, հմմտ. Կանդավլես, ապա եւ Կանդաոն, կիրառված ռազմի աստված Արեսի համար, Thaul(i)os «Արես մակեդոնեւրեն» փոյուզ. daos «գայլ» (Դեսիքիոս) եւ այլն (տես Իվանով 1977, 181, 187): Արմատի հայկական դրսեւորումը կարող էր լինել \*Դաւ-, որը հետագայում բաղարկվելով Աստվածաշնչի եւ հայոց պատմության Դավիթ անունով հերոսների հետ հիմք է դարձել էպոսի գլխավոր հերոսի անվան համար: Աստվածաշնչում Դավթի հակառակորդը համեմատվում է շան հետ (Չորրորդ թագավորաց ժէ, 40) եւ տեսականորեն հնարավոր է նրա անունը եւս, որը միարժեքորեն ընդունված ստուգաբանություն չունի, կապված համարել հնդեւրոպական նույն արմատի հետ:

## 11. «ՍԵՎ ՅԵՐՈՍԸ»

Յնդեվրոպական տարբեր ժողովուրդների առասպելների հիման վրա վերականգնվում է հնդեվրոպական «սեւ հերոսի» առասպելույթը (Ա. Պետրոսյան 1997), որի որոշ դրսեւորումները, հատկապէս հայկական էպոսի հետ ունեցած կապերի համատեքստում, կքննարկվեն ստորեւ:

Չայոց ազգածին հերոս Արամը, Չայկին հաջորդող վեցերորդ նահապետը, հաղթում է իր երրորդ հակառակորդին Կապադովկիայում եւ այնտեղ կուսակալ է թողնում իր տոհմակից Մշակին: Վերջինս Արամի հաղթանակի տեղում հետագայում հիմնում է Մածակ (իուն. Մազակա=Կեսարիա) քաղաքը, որը գտնվում է Արգայոս (թրք. Էրջիաս) լեռան իյուսիսակողմում: Մյուս ազգերը Արամի անունով Չայք երկիրը եւ նրա ժողովրդին սկսում են կոչել արմեն, արմենիկ ձեւերով (խորենացի I, ԺԲ-ԺԵ):

Հունա-լատինական աղբյուրներում հայերը եւ նրանց արմեն ցեղա-  
նունը ծագեցվում են Թեսալիայի Արմենիոն քաղաքից եկած արգոնա-  
վորդ Արմեն(ի)ոսից (Ստրաբոն XI, 4, 8, XI, 14, 12. Հուստինոս XLII, 2, 3):  
Արգոնավորդները գալիս են Կոլխիդա, կամ ըստ հնագույն աղբյուրների՝  
Այա երկիրը, Փրիքսոսի հոգու հետեւից, իսկ վերջինիս սրբաբանը՝ այ-  
սինքն պաշտամունքի կենտրոնը գտնվում էր մոսքերի երկրում, Հայաս-  
տանի, Վրաստանի եւ Կոլխիդայի միջեւ (Ստրաբոն I, 2, 39. XI, 2, 17-18):

Ըստ հնդկական մի առասպելի, Ռամա անունով առաջին հերոսը՝ Պա-  
րաշուրաման, հաղթում է լեգենդար մի ցեղի՝ հայիայաների թագավոր  
Արջունա Կարտավիրայիին, եւ վերացնում նրա տոհմը («Մահաբհարա-  
տա» III, 115-16): Տամիլական մի աղբյուրում («Կերալոտպատտի») Պա-  
րաշուրամայի հիմնած երկրամասերից մեկը կոչվում էր Մուշիկա (իդ-  
վում է ըստ Դիկչիտ 1960, 438, ծան. 57):

Բերված առասպելներում համադրելի են հետեւյալ անունները՝ 1. Արամ, Արմենոս, Ռամա, 2. Արգայոս, Արջունա, արգոնավորդ, 3. Հայք, Այա, հայիայա, 4. Մշակ, մոսքեր, մուշիկա: Եղած փաստերը եւ պարզ վեր-  
լուծությունը բացահայտվում են առաջին եւ երկրորդ խմբի անունների  
ստուգաբանությունները (մյուսները կապված են հայ եւ մուշկ ցեղա-  
նունների հետ, տես Ա. Պետրոսյան 1997, 65 հտմ. եւ ստորեւ): Արջունան  
հին հնդկերեն իմաստավորվում է որպես «փայլուն, սպիտակ» (հնդեվ-  
րոպական \*arg-): Նույն արմատի հետ պետք է կապվի եւ Արգայոս լեռ-  
նանունը (տես Լարոշ 1985, 88-89): Այս արմատը ունի նաեւ «արագ»  
իմաստը, որով եւ բացատրվում է արգոնավորդների նավի «Արգո» ան-  
վանումը (Շանտրեն I, 104): Ռամա անունը նշանակում է «մուգ, մութ,  
սեւ» (հնդեվրոպական \*rēmo-), որով եւ հնդկական առասպելը մեկնա-  
բանվում է որպես «սեւ» եւ «սպիտակ» հերոսների հակադրություն  
(տես օրինակ, Պուհլել 1987, 90): Նույն արմատի ձայնդարձային մի  
տարբերակի հետ պետք է կապվի եւ Արամ անունը (\* rāmo-):

Սեւի եւ սպիտակի հակադրությունը հայտնի է աշխարհի բազում ժո-  
ղովուրդների առասպելներում եւ էպոսներում: Արամի եւ նրա երրորդ  
հակառակորդի կռիվը Արգայոս լեռան մոտ: համադրվել է Ջեւսի եւ Տիփո-  
նի կռիվի առասպելի հետ, որը տեղայնացվել է Արիմներում (Իլիական II,  
781-83, տես Մարկվարտ 1919. 1928): Տիփոնի կնոջը, Եթիդնային, որն  
ապրում էր Արիմների հետ համահունչ մի վայրում (Հեսիոդոս, Թեոգոնի-  
ա, 305) սպանում է Արգոսը (հմմտ. Արիմ-Արգ-հակադրությունը «սեւի»  
եւ «սպիտակի» համատեքստում): Արիմները հնուց ի վեր տեղայնացվել  
են ամենատարբեր տեղերում, այդ թվում՝ Արեւմտյան Փոքր Ասիայում,  
Մյուսիայում կամ Մեյոնիայում, այրված, սեւացած մի տեղանքում, որ-  
տեղ հիշվում է նաեւ Արիմուս անունով լեգենդար մի արքա (Ստրաբոն XII,  
4, 11): Սա ցույց է տալիս Արամի եւ Արիմների անունների նույնական ծա-  
գումը, նրանց կապը սեւի ու սպիտակի հակադրության առասպելի հետ  
եւ հաստատում 3. Մարկվարտի համադրությունը:

Ջեւսի եւ Տիփոնի կռիվի առասպելը «երկնային արքայության թեմա-  
յի» առասպելների հունական տարբերակի վերջին դրվագներից մեկն է:

Ըստ այդ թեմայի՝ աստվածների մի քանի սերնդի արքաներ հաջորդում են իրար: Վերջին արքա-աստվածը հաղթում է հրեշին եւ ձեռք բերում հավերժական արքայություն: Այս թեման հայտնի է բաբելական, խուռիական, փյունիկյան, ապա նաեւ հնդեվրոպական՝ հունական, իրանական, իսլանդական ավանդություններում, եւ համարվում է ծագումով բաբելական (Լիթլտոն 1970, 1970 ա): Ձեւսի եւ Տիփոնի առասպելի մերձավոր զուգահեռները հայտնի են այս թեմայի խուռիական տարբերկում՝ ամպրոպի աստված Թեշուբի եւ նրա հակառակորդների առասպելներում: Լավագույն համապատասխանությունը քննարկվող համատեքստում Թեշուբի եւ Արծաթ (սպիտակ) աստվածության հակադրությունն է (Յոնսոն 1991, 45-48): Այս հակադրությունն իր հիմնական տեղայնացումը պետք է ունենար Կիլիկյան Տավրոսում՝ Թեշուբի պաշտամունքի շրջանում, որը հին միջագետքյան աղբյուրներում կոչվել է «Արծաթե լեռներ»: Թեշուբի եւ Արծաթի կռվի տեղայնացումներից մեկը պետք է լիներ նաեւ Արգայոս լեռը՝ խեթ. Harka- (հմտ. հնդեվրոպական \*arg-, որպես «արծաթ»՝ արմատի հիմք), որը ամպրոպի աստծու տեղայնացման եւ պաշտամունքի մի հնագույն կենտրոն էր (Բյորկեր-Կլեյն 1989, 243-45):

Թեշուբի ուրարտական զուգահեռն է Թեյշեբան (հավանական արտասանությունն է Թեյշեֆա), որն ակներեաբար նույնական է հուն. մեծ հերոս Թեսեւսի անվան հետ: Թեշուբ-Թեյշեբայի գեղնքն էր երկսայրի կացինը՝ հուն. լաբրյուսը, իսկ Թեսեւսի գլխավոր սխարանքը տեղանաչվում է լաբիրինթոսում, որը ստուգաբանորեն կապված է լաբրյուսի հետ (Լոսեյ 1957, 120): Առասպելում Թեսեւսը մոռանում է փոխել իր նավի սեւ առագաստները սպիտակով, ուր հանդես է գալիս «սեւի» ու «սպիտակի» հակադրությունը, եւ նա համեմատվում է հունական երիտասարդների առասպելական մարմնավորման՝ «սեւ որսորդի» հետ (Վիդալ-Նակե 1986, 112): Պետք է նշել, որ Ձեւսի եւ Տիփոնի առասպելում «սեւը» եւ «սպիտակը» հակադրության բացասական եւ դրական անդամների հատկանիշներն են, իսկ Թեշուբի, Թեյշեբայի, Թեսեւսի եւ Արամի առասպելներում ընդհակառակը, «սեւ» հատկանիշի կրողն է դրական հերոսը եւ հաղթողը (հակադիր հերոսների հատկանիշները առասպելի տարբեր պատումներում եւ դրվագներում կարող են փոխել իրենց տեղերը, տես Իվանով, Տոպորով 1975, 49): Ի միջի այլոց, աքադական մի հնագույն արձանագրության մեջ հիշվում է Արամիշը, որպես աստվածների արքա, որը համադրելի է հայկական Արամի (Շրադեր 1903, 478), ապա նաեւ Թեշուբի՝ խուռիական աստվածների արքայի կերպարի հետ եւ հաստատում է բերված մյուս համեմատությունները:

Թեյշեբայի պաշտամունքը կենտրոնացած էր Յայկական Տավրոսում (հուն. «ցուլ», այս լեռները հայերեն եւս «Յուլ» են կոչվել. ցուլը Թեշուբի եւ Թեյշեբայի կենդանական սիմվոլն էր):

Սանասարն իրեն համեմատում է սեւ ամպի հետ (Աբեդյան Ա, 417. սա ամպրոպային աստվածությունների հատկանիշ է). նա եղբոր հետ կառուցում է իրենց նոր քաղաք Սասունը Յայկական Տավրոսում՝ Սեւ սարում (անդ, 333): Էպոսի հնագույն տարբերակում Դավթի կերպարի նա-

խորդն է Սանասարի որդի Մուշը (անդ, 385 հտն.), եւ այստեղ Սանասար-Մուշ հաջորդականությունը համապատասխանում է հորենացու Արամ-Մշակ գույգին (վերջինս ծագում է Մուշակ ձեւից եւ Մուշի մի տարբերակն է): Այլեւայլ փաստեր եւս ցույց են տալիս Սանասարի եւ Արամի՝ հնդեվրոպական «սեւ հերոսի» համապատասխանությունը. ավելին, կարելի է ասել, որ Սանասարն Վրամի մի անվանափոխված կերպարն է ուշ ավանդության մեջ: Սեւ հերոսի այլ դրսեւորումները հնդեվրոպական առասպելներում հաճախ, ինչպես եւ Սանասարը, կապված են ամպրոպային աստվածությունների հետ (Ա. Պետրոսյան, 1997, 52):

## 12. «ՍԵՎ ՅԵՐՈՍԻ» ԾՆՈՒՆԴԸ

Հնդկական ավանդության մեջ \*nepōt- արմատով են կոչվել նաեւ աստվածային երկվորյակները՝ Դիվո Նապատա: Այլուրեք եւս կարելի է գտնել երկվորյակների ջրային ծագման տվյալներ, համադրելի հայկականի հետ (ընդհանրապես, հնդեվրոպական երկվորյակները կապված են ջրի հետ): Հնդկական մի ավանդության համաձայն երկվորյակները ծնվում են ձկան վերածված փերուց («Մահաբհարատա», I, 57): Օսական էպոսում երկվորյակների մայր Ձերասան ջրերի տիրակալի դուստրն է: Այս հնդկական եւ կովկասյան տվյալները հատկանշական են այն պատճառով, որ հաջորդ սերնդում հայտ է գալիս «սեւ» հերոսը (հնդ. Վյասա, ադրդ. Սոսրուկո), որպիսին պատկերանում է Սանասարը: Իռլանդական երկվորյակների մայր Մախան (հմմտ. մայրաքաղաքի էմայն Մախա «Մախա երկվորյակներ» անվանումը) Սայնրիթ մակ Իմբայթի՝ «ծովի բնության» դուստրն էր (հմմտ. հայ. «ծովային») եւ հռոմ. գետը նետված երկվորյակների կողմից քաղաքի կառուցումը):

Կան ավանդություններ, որտեղ երկվորյակների կամ համապատասխան հերոսների ծննդյան պատճառը ջուրն է: Օրինակ՝ հունական առասպելական Ալոադները ծնվում են այն պատճառով, որ նրան մայրը ծովի ջուր էր լցրել իր հագուստի փեշին (Ապոլոդորոս I, 7, 4): Իրանական առասպելաբանության մեջ որոշ հերոսներ հղացվում են աղբյուրի, լճի մեջ թողած սերմից, որը համեմատվել է Սանասարի եւ Բաղդասարի ծննդյան հետ (Ռասել 1987, 413-15): Բայց այս աշխատանքում քննարկվում են այնպիսի հնդեվրոպական զուգահեռներ, որոնք չի կարելի միարժեքորեն հայկականի վրա հունական կամ իրանական ազդեցության հետեւանք համարել:

Արդեն Ս. Ահյանը մատնանշել է Սանասարի եւ Բաղդասարի ջրային հղացման կելտական եւ հնդկական զուգահեռները (Ահյան 1985, 33): Ինձ հայտնի առլանդական ավանդություններում հայկականի հետ հա-

մադրելի են Կոնխոբարի եւ Կուխուլիւնի ծնունդի դրվագները: Կուխուլիւնի մայրը խմելիս մի փոքրիկ գագանիկ է կուլ տալիս, որի հետեւանքով եւ հղիանում է (ՈՍՈՅ, 585-86. Ա. Ահյանի հղած աշխատանքը մնաց ինձ անմատչելի): Հատկանշական է, որ Կուխուլիւնը երկվորյակների անունով կոչվող քաղաքի՝ Էմայն Մախայի հերոսն էր եւ, ի հակադրություն սովորական իռլանդական տիպի, հաճախ նկարագրվում է որպէս թուխ, թխահեր (կարծում են, իբրեւ նրա նախաիռլանդական ծագման հետեւանք՝ ՈՍՈՅ, 562-63) այսինքն՝ համադրելի է «սեւ» հերոսի հետ, իսկ մյուս կողմից, նա պատկանում է հնդեվրոպական «շուն սպանող» հերոսների թվին:

Հայկականին շատ ավելի մոտ է հնդկական «Ռամայան» էպոսի հերոսների ծննդյան ավանդությունը («Ռամայան» I, 7): Վիշնուի կողմից տրված, որպէս աստվածային կաթնային խմիչք ընկալվող *payas*-ի կէտը խմում է արքայի առաջին կինը, մեկ քառորդն ու մեկ ութերորդը՝ երկրորդը, եւ մնացած մեկ ութերորդը՝ երրորդը: Արդյունքում ծնվում են Ռաման եւ իր երեք եղբայրները, ընդ որում, երկրորդ կնոջից ծնված երկվորյակները մյուս երկուսի հետեւորդներն են, եւ հղացվում են ինչպէս եւ Ռաման ու նրա հետեւորդ Լակշմանան, այսպիսով, 2:1 հարաբերությամբ ընդունած կաթնային պայասից (հմմտ. Սանասարի եւ Բաղդասարի հղացումը Շովիւնարի՝ կաթնաղբյուրից խմած մեկ ու կէս բուռ քրից. հնդկական ավանդությունը, ինչպէս եւ այլ դէպքերում, ճոխացնում, բազմապատկում է նախնական հիմքը): Հաշվի առնելով Սանասարի ու Արամի հնապատասխանությունը, ապա եւ Արամի ու Ռամայի անունների ստուգաբանական նույնությունը, սա ոչ միայն հաստատում է մյուս համադրությունները, այլեւ կարող է հայ-հնդկական ապա եւ հնդեվրոպական \**rēmō*- «սեւ հերոսի» ծննդյան դրվագի հուսալի վերակազմության հնարավորություն տալ (Ա. Պետրոսյան 1997, 54):

Հետաքրքիր է նշել, որ երկվորյակային «թուխ մանուկները» երբեմն կապվել են աղբյուրի հետ, որից խմողը «կտրիճ ու մանուկ» կբերի (Մնացականյան 1976, 201. «թուխ մանուկների» ու «սեւ հերոսի» առնչության մասին տես Ա. Պետրոսյան 1997, 48):

### 13. ՍԵՎ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՔՈՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Սի շարք ժողովուրդների ավանդությունների հիման վրա վերականգնվում է հնդեվրոպական «սեւ» եւ «սպիտակ» քաղաքների առասպելը (Ա. Պետրոսյան 1997): «Շարաֆ-Նամեում» պատմվող, հայկական էպոսի քրդական տարբերակում, Սասունի հիմնադիր երկվորյակները, իսկ դրանից քիչ ավելի վաղ գրանցված (XVI դար) պորտուգա-

լացի ճանապարհորդներ Ա. Տենեյրոյի եւ Մ. Աֆոնսոյի նոթերում նաաեւ Սասունի էպոնիմ Սամսոն-Դավիթը ծագում են հւլաթից (Հարությունյան, Բարթիկյան 1975, 94,99): Այս քաղաքը գտնվում էր Արծկեի գավառում (Հակոբյան, Մելիք-Բախչյան, Բարսեղյան I, 449), հմմտ. \*arg'- «փայլուն, սպիտակ», որի բնորոշ հայերեն արտացոլումն է արծ-ը (արծարծել, արծաթ): հւլաթի կապը «սպիտակի» հետ պարզորոշ դրսևերվում է հւլաթի քագավոր Սպիտակ դեւի կերպարում:

Երկվորյակները հեռանալով ծննդավայրից իրենց նոր քաղաքն են կառուցում Սասունի լեռներում՝ «Սեւ սարում» (Աբեղյան I, 333), այնտեղ, ուր ուրարտական ժամանակներում հիշվում է Ուրմե երկիրը, համահունչ Արմե երկրի հարեւանությամբ Մեղրագետի (հնում՝ Մեղ, հմմտ. \* mel «սեւ») մի վտակի ակունքում, իսկ Մեղրագետը Արածանու (հնում Արծա-նիա, հմմտ. \*arg'- «սպիտակ») վտակն է:

Սանասարը՝ Սասունի «սեւ ամպը» եւ իր եղբայրը համարվել են որոշ հայ իշխանական տոհմերի հիմնադիրներ: Այդ տոհմերից առավել նշանավոր էին Արծրունիները (հմմտ. \*arg'-), որոնց տոհմական ուստանն էր Աղբակը (հմմտ. \*albh- «սպիտակ»):

հւլաթի Սպիտակ դեւին եռօրյա կռվում սպանում ապա եւ տեղի մյուս դեւերին ոչնչացնում է Մեծ Միերը: Պորտուգալացի ճամփորդների հաղորդած հին տարբերակում հւլաթը կործանում է Դավիթը (Հարությունյան, Բարթիկյան 1975, 99), իսկ նոր տարբերակներում Փոքր Միերը, Թորոսի եւ Օհանի հետ: Ինչպէս ասվել է, այս տվյալները կարելի է դիտարկել «Երրորդը սպանում է եռակիին» բանաձեւի համատեքստում:

Ազգածին ավանդության մեջ Արամը հաղթում է Պայապիս Զա(ա)ղային Արգայոս լեռան մոտ, իսկ Արամի հաջորդ Մշակը քաղաք է կառուցում այդտեղ, ընդ որում Արամը եւ Մշակը համապատասխանում են էպոսի հին տարբերակի Սանասարին եւ Մուշին: Արամ եւ Արգայոս անունները կապված են «սեւ» եւ «սպիտակ» իմաստների հետ: Արամը տիպիկ «Երրորդ հերոս» է, ազգածին ավանդության ամենաազնական կերպարը: Նրա անունով է կոչվել ամեն ամսի երրորդ օրը, նա փաստորեն Հայկի երկրորդ տիպարն է (Աբեղյան I, 55), Հայկին հաջորդող վեցերորդ (2x3) նահապետը: Խորենացին հիշում է նրա երեք հաղթանակները երեք հակառակորդների դեմ, որոնցից երրորդը՝ տեղայնացած Արգայոս լեռան մոտ: Հատկանշական է, որ այս լեռը, որն ամենաբարձրը եւ առավել սրբացվածն էր Փոքր Ասիայում (կապաղովկացիները պաշտում էին այն որպէս աստված), եռազագաթ է: Արամի հետ նույնարմատ անունով Արամայիսի կողմից Արմավիր քաղաքի կառուցման մասին այս համատեքստում տես ստորեւ:

Հայկական այս տվյալներին առավել նման է Հռոմի հիմնադրման ավանդությունը, այնքան, որ ակնհայտ է նրանց ծագումը մեկ ընդհանուր կենտրոնից: Հռոմեական երկվորյակները կոչվում էին Ռեմոս եւ Ռոմուլոս (Remus, Rōmulus), որոնցից երկրորդի՝ Հռոմի (Rōma) հիմնադրի անունը համադրելի է Ռամայի եւ Արամի հետ: Նրանք Ալբա («սպիտակ») քաղաքի արքայի դստեր որդիներն էին (հայ երկվորյակները նույնպես

հայոց արքայի դստեր որդիներն էին), որոնք հեռանում են հիմնելու համար իրենց նոր (Յոռոմ) քաղաքը: Յետագայում Յոռոմի եւ Ալբայի բախումը լուծվում է հռոմեացի եւ այլբացի երեքական երկվորյակ եղբայրների մարտով (Յորացիոսներ եւ Կուրիացիոսներ), որտեղ հռոմեացի երրորդ եղբայրը սպանում է իր երեք հակառակորդներին եւ Ալբան դուրս է գալիս պատմության թատերաբեմից (Լիվիոս I, 24-25):

Յոռոմում պահպանվել էր նաեւ հակադրության «սպիտակ» անդամի \*arg- անվանումը: Վերգիլիոսն «էնեականում» (VIII, 345-46) հիշում է Արգիլետում անտառը, որը պատմական ժամանակներում Յոռոմի կենտրոնական մի թաղամասի անունն էր եւ մեկնաբանում այն որպէս «Արգի մահվան» վայր: Յայտնի էր եւ Արգեի ծեսը, որի ժամանակ Տիբր (նախկինում Ալբուլա՝ «Սպիտակ») գետն էին նետում 27 կամ 30 սպիտակ ներկած տիկնիկներ, որոնք իբր փոխարինել էին մարդկային զոհաբերությանը (տես Պլուտարքոս «Յոռոմեական հարցեր» 32 եւ Ն. Բրագինսկայայի ծանոթագրությունները): Այս փաստերը կարելի է համադրել եռակի հատկանիշերով «սպիտակ» հերոսի պարտության հետ, որի տեղում եւ հետագայում կառուցվել է Յոռոմը (հմմտ. հատկապէս Արամի եւ նրա երրորդ հակառակորդի կռվի վայրում եռազագաթ Արգայոս լեռան մոտ Արամի կուսակալի կողմից քաղաքի հիմնադրումը):

Կարծում են, որ Յոռոմ անունը էտրուսկյան է (Էռնու, Մեյե 1932, 830), բայց այն ակնհայտորեն համադրելի է \*rēmo-ի \*rōmo- տարբերակի հետ: «Սպիտակ» քաղաքի հակադրությունն էլ ակնարկում է նրա հավանական կապը «սեւ» արմատի հետ: Պետք է ասել, որ էտրուսկյան անվանաբանության մեջ էւս ակնհայտ է հնդեվրոպական ներդրումը: Յոռոմի հիմնադրման, նրա առաջին արքաների եւ երեք Յորացիոսների կռվի ավանդությունները բազմիցս քննարկվել են որպէս հնդեվրոպական առասպելաբանության տիպիկ դրսեւորումներ (տես Ժ. Դյումեզիլի բազմաթիվ աշխատանքներում, Պուիվել 1975. Լինկոլն 1981 եւ այլուր):

Յունաստանում՝ Սպարտայում, արքայական երկու տոհմերի հիմնադիր երկվորյակների մոր անունն էր Արգիա (Ապոլոդորոս II, 8, 2, հմմտ. \*arg-): Մի ավանդության համաձայն երեք հարյուր սպարտացիներ կռվում են երեք հարյուր արգոսցիների (հմմտ. \*arg-)դեմ, որը համեմատելի է հնդեվրոպական երեք ու եռակի, ապա եւ սեւ ու սպիտակ հակառակորդների կռվի հետ: Դրանից հետո սպարտացիներն սկսել են վարսեր պահել, իսկ արգոսցիները՝ սափրել իրենց գլուխները (Յերոդոտոս, I 82), որտեղ մազածածկ եւ սափրած հարաբերությունը համադրելի է սեւի եւ սպիտակի հակադրության հետ (տես եւ Վիդալ-Նակե 1986, 122):

Իռլանդական մի ավանդության համաձայն հյուսիսային մեայն մախա («Մախա երկվորյակներ») մայրաքաղաքն այդպէս է կոչվել այնտեղ Մախա անունով մի կնոջից ծնված երկվորյակների պատճառով (հղի կինը վազբում հաղթում է արքայի ձիերին եւ ծննդաբերում, տես ՌԵԿ, 7-9, 38-39): Այլ տարբերակի համաձայն, քաղաքի հիմնադիր կնոջ (նույնպէս Մախա) եւ նրա ամուսնու տոհմերի նախնիներն էին Արգեստալը եւ Արգետմորը (անդ , 39-41. այս անունները ծագում են հնդեվրոպական ար-

ծաք՝ \*arg՝- արմատից): Կողքի քաղաքը կոչվում է Armagh, որը թեև մեկ-նաբանվում է որպես ծագած Ard Macha «Մախայի բլուր» ձեւից (Դյունեգիլ I 603, ծան. 1), բայց եւ այնպէս, թեկուզ եւ անագրամային, նման հնչողութեան մակարդակով կարող է ակնարկել \*rē-mo-ի \*r-mo տարբերակը: Իռլանդական մեծ հերոս Կուխուլինը, որը հանդէս է գալիս որպէս «շուն սպանող», «սեւ» եւ «երրորդ հերոս», եռակի թշնամուն հաղթող կերպար, հիմնականում տեղայնացվում է էմայն Մախայում: «Կուալնգե-ի ցլի առեւանգումը» էպոսում Կուխուլինը միայնակ պաշտպանում է Կուալնգեի թուխ ցուլը, որը վերջում հաղթում է Կոննախտի սպիտակեղջյուր ցլին: Ի միջի այլոց, Կուխուլինի ընկերը վրեժ է լուծում նրան սպանողից Մագ Ագետրոսում՝ «արծաթափայլ անտառի հարթավայրում», 344, 484, ծան, 26), հմմտ. «սեւ հերոսի» հակառակորդի պարտության վայրի կապը \*arg՝-ի հետ (Արգայոս եւ այլն):

Պրուսական ավանդութեան մեջ հայտնի էր սրբավայր Ռոմովեն, որտեղ պաշտվում էին նրանց երեք գլխավոր աստվածները: Մի տարբերակի համաձայն այդ նույն աստվածները պաշտվում էին Ռիկոյտո սրբավայրում, որը հիմնել էր Կիմբրիայից ներգաղթած երկու հիմնադիր եղբայրներից մեկը: Այդ աստվածներն էին սեւամորուք Պերկուսը (ամպրոպի աստվածը) եւ որպէս ծեր ու երիտասարդ ներկայացվող (սպիտակ մորուքով եւ անմորուք), բայց որպէս երկվորյակներ՝ մեկնաբանվող Պոտրիմպոն ու Պատուլլոն: Նրանց սրբազան կաղնին, որի վրա էին պատկերված աստվածները, երկվորյակների հետ կապի պատճառով համեմատվում է Գռոմի սրբազան թզենու՝ ֆիկուս ռումինալիսի հետ (տես Պուիվել 1974, 75-85. Իվանով, Տոպորով 1983, 170-75): Հատկանշական է, որ բերված մյուս ավանդություններում եւս երկվորյակները հաճախ կապված են ամպրոպի աստծու հետ (Ծովինարն, ինչպէս եւ Սանասարը, ամպրոպային կերպար է, իսկ սպարտական երկվորյակների հորը Ջեւսը սպանում է կայծակով):

Առանց մանրամասների մեջ մտնելու եւ այլ զուգահեռ ավանդություններ եւս քննարկելու, միայն բերված առասպելների հիման վրա կարելի է վերականգնել նախնական հնդեվրոպական առասպելի սխեմայի հետեւյալ կետերը:

1. Դիցաբանական երկվորյակները՝ աստծու որդիները, նոր ավանդութի հիմնադիրները, ծագում են «սպիտակ» քաղաքից կամ կերպարից, որը հաճախ կողմակիրվում է \*arg՝- արմատով 2. Հեռանալով իրենց քաղաքից նրանք հիմք են դնում նոր քաղաքի, որի անունը համադրելի է հնդեվրոպական \*rēmo- «սեւ, մուգ» արմատի հետ 3. «Սպիտակ» եւ «սեւ» քաղաքների եւ կերպարների հակադրությունը լուծվում է «երրորդը սպանում է եռակիին» հնդեվրոպական առասպելաբանական բանաձեւի մի դրսեւորումը ներկայացնող կովով: Այս վերականգնված սխեմայի ամենալավ պահպանված եւ իրար առավել համապատասխանող սյուժեները հանդէս են գալիս «Սասնա ծռերում» եւ հռոմեական առասպելական պատմության մեջ, որոնցից երկրորդի բազմաթիվ կերպարներ, մոտիվներ եւ մանրամասներ բազմիցս խորապէս վերլուծվել

են որպես հնդեվրոպական առասպելաբանության վառ արտահայտված դրսեւորումներ:

Հետաքրքիր է նշել, որ Հռոմի հիմնադրման ու Մարս աստծու հետ կապված առասպելներն ու ծեսերը դիտարկվել են որպես հնդեվրոպացիների կողմից նոր տարածքների յուրացման մեխանիզմի արտացոլումներ (Դյումեզիլ 1970 ա I, 208): Բերված նյութը հաստատում է լրացնում է այդ տեսակետը՝ հին քաղաքը համադրվել է «սպիտակի», իսկ նրանից ծագող նոր սերունդը, նրա առաջնորդն ու նոր քաղաքը՝ «սեւի» հետ: Նոր քաղաքը հետագայում հաղթում է յուրացնում է հին, սպիտակ քաղաքի հատկանիշները, որից հետո ցիկլը կրկնվում է: Կելտական ցեղերի տարածման նման մի ավանդություն պահպանվել է հռոմեական պատմագրության մեջ (արքան իր քրոջ երկու որդիներին մարդիկ է տալիս եւ ուղարկում նոր երկրներում բնակվելու, տես Լիվիոս V, 34): Սեւի եւ սպիտակի առասպելի վերակազմությունը եւ քննարկումը ֆիզիոլոգիական, հոգեբանական, լեզվաբանական, առասպելաբանական, պատմական եւ ազգագրական դիտանկյուններից տես Ա. Պետրոսյան 1997, 33-60):

Սեւի եւ սպիտակի վերականգնված առասպելն արտացոլվել է բոլոր հայկական վիպաշարերում եւ հնդեվրոպական ու որոշ ոչ հնդեվրոպական բազմաթիվ էպոսներում՝ «Ռամայանան» էպոս է Ռամայի մասին, «Մահաբհայատայի» հիմնական հերոսներից են Արջունան ու Կրիշնան («սեւ»), իրանական «Վիս եւ Ռամին» պոեմի հերոսը համադրելի է «սեւ հերոսի» հետ եւ սպանում է իր եղբայր «ղեղին» Ջարդին, «Իլիականը» տրոյացիների եւ արգիվցի (\*arg-) հույների պատերազմի պատմությունն է, «Նիբելունգների» մեծ հերոս Ջիգֆրիդը «սպիտակ» հատկանիշի կրողն է եւ հակադրված է իր «սեւ» հակառակորդներին եւ այլն, հմմտ. նաեւ վրացական եւ հունական «սեւ որսորդների» (տես համապատասխանաբար Վիրսալաձե 1976 եւ Վիդալ-Նակե 1986), կովկասյան սեւ հերոսների (Արձինբա 1985) առասպելները եւ այլն (տես Ա. Պետրոսյան 1997, 55-59): Այս առասպելի հակադիր կերպարները կարող են ներկայացվել իբրեւ սեւ եւ սպիտակ ծիավորներ (անդ, 43, 56): Նրանց կենդանական սիմվոլներն էին համապատասխանաբար վարազը եւ շունը (Ռամայի աստվածային նախատիպ Վիշնուի մարմնավորումներից մեկն է վարազը, Արջունան մի դրվագում հաղթում է վարազին, Ջիգֆրիդն իր փոքրասիական ազգակիցների նման զոհվում է վարազի որսի ժամանակ. հնդեվրոպական անվանացանկում \*arg'- արմատով հաճախ կոչվել են շները. անդ, 49-51):

## 14. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՊԱՇԱՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՆՆԴԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

«Սասնա ծռերի» հերոսների ծննդաբանությունը՝ ծովինար, Սանասար եւ Բաղդասար, Մեծ Միեր, Դավիթ եւ Փոքր Միեր, կարելի է ներկայացնել ըստ այդ կերպարների բնութագրերի այսպես՝ 1. ամպրոպային դիցուհի, 2. երկվորյակներ, 3. «միտրայական» կերպար (տես ստորել), 4. գլխավոր վիշապամարտիկ հերոս, 5. վերածնվող կերպար: Շարքի առաջին անդամները աստվածային կերպարներ են (հմմտ. Ինարա, Սանասարի եւ Ինդրայի կապերը, Միիր), իսկ Դավիթը եւ Փոքր Միերը՝ իսկական Հայկական հերոսներ, որոնք կրկնում են լրացնում են իրենց պապերի՝ Սանասարի եւ Մեծ Միերի կերպարները: Այս շարքի հետ համադրելի ծննդաբանություններն ի հայտ են գալիս հայկական բոլոր վիպաշարերում, օրինակ, «Վիպասանքում» սրան համապատասխանում են 1. ցուլը (ամպրոպի աստծու սիմվոլը), 2. երկվորյակային հատկանիշներով երվանդը եւ Երվազը, 3. մեծ արքա Արտաշեսը, 4. Մասիսում փակված Արտավազը (այս շարքի վերջին երկու անդամների եւ «Սասնա ծռերի» կապերը՝ տես Աբեղյան Ա, 426):

Հայկի՝ հայոց ավանդական նախահոր կերպարի քննությունը ցույց է տալիս նրա ամպրոպային եւ ռազմական բնույթը: Հայկ են կոչվել Օրինոն, Կշեռք (Օրինոնի գոտին է), Բազումք համաստեղությունները եւ Մարս մոլորակը (Ալիշան, 1895, 133 հտմ. Մալխասյան III, 38): Օրինոնը եւ Բազումքը որոշ հնդեվրոպական լեզուներում կոչվել են ամպրոպային առասպելի հերոսների անուններով (Գամկրելիձե, Իվանով, 1984, 615), իսկ Մարս մոլորակը հին աշխարհում ամենուրեք, բաբելոնյան ազդեցությամբ, կրել է պատերազմի աստծու անունը՝ աթադ. Ներգալ, հուն. Արես, լատ. Մարս, միջին իրան. Վարիրան (=հայ. Վահագն): Ասվածը թույլ է տալիս Հայկի անունը ծագեցնել հնդեվրոպական \*poiti- «տեր, ամուսին, պետ» արմատից, որով որոշ հին փոքրասիական հնդեվրոպական լեզուներում կոչում էին Ձեւսին համապատասխան գլխավոր աստծուն (տես Ա. Պետրոսյան, 1990. 1991. 1991ա. Ջահուկյան 1992, 18). հմմտ. նաեւ բրբռ. հայ «ամուսին»: Հայկին, բոլորովին այլ տվյալներից էլնելով, ուրիշ հեղինակներ եւս համադրել են ամպրոպի աստծու հետ (Աիյան 1985, 43-44, ծան. 50, Հմայական 1992. Ս. Հարությունյան, «Հայ առասպելաբանությունը»): Ընդհանրապես ամպրոպի աստվածներն են հաճախ հանդես գալիս որպես նախնիներ, նոր տարածքների յուրացման եւ բնակեցման հիմնադիրներ (Ղյակոնով 1990, 98): Չնայած դրան Հայկը, ինչպես եւ հուն. Ձեւսը, որոշ ընդհանրություններ ունի նաեւ լուսավոր երկնքի աստծու հետ (տես ստորել):

Հայկին հաջորդում է Արամանյակը, որը տեղափոխվում է Արարատյան դաշտ, իսկ նրան՝ Արամայիսը, որը նույն դաշտում առաջին մայրաքաղաքն է կառուցում: Այս անունները նման են իրար եւ նույնարմատ,

ինչպես հաճախ լինում են դիցաբանական երկվորյակներին, եւ այս կերպարները կարող են համարվել քաղաք կառուցող երկվորյակների մի հաջորդական դաժած ձեւափոխությունը (այլուրեք եւս երկվորյակները կարող են ներկայացվել որպես ծեր ու ջահել, հայր ու որդի, որն արդյունք է նրանց հիերարխիկ տարբերական, հմմտ. օրինակ, «Տարոնի պատմության» մեջ Գիսանեին ու Դեմետրին մեկ որպես եղբայրներ, մեկ հայր ու որդի ներկայացնելը):

Արամայիսին հաջորդում է Ամասիան, որի անունով է իբր կոչվել Մասիս լեռը: Դաշվի առնվելով, որ առասպելաստեղծ մտածողության մեջ անվանումը հավասարազոր է արարմանը, ապա նաեւ կերպարը՝ իրենով կոչված օբյեկտին, կարելի է կարծել, որ Ամասիան Մասիսում փակված Արտավազդի մի նախնական տարբերակն է: Մյուս կողմից Մասիսի հետ առնչվող հերոսը ակնհայտորեն համապատասխանում է կեղծ-Պլուտարքոսի կողմից հիշված Դիորիոսին (Միթրասի սերմից՝ քարից ծնվում է Դիորիոսը, որը սպանվում է պատերազմի աստված Արեսի կողմից եւ վերածվում Արաքսի մոտ գտնվող մի լեռան. հարցի քննարկումը եւ այս առասպելի կովկասյան ու փոքրասիական զուգահեռների վերաբերյալ տես Ադոնց 1972, 37 հուն. Տրուբեցկոյ 1987, 346-49, 477. Դալգատ 1972, 134-37. Արծիմբա 1985. Դյումեզիլ 1990,76):

Ամասիայի հաջորդն է Գեղամը, Գեղամա լեռների ու լճի էպոնիմը, Զայաստանի արեւելյան ճահանգների հիմնադիրը եւ այդ շրջանի իշխող տոհմերի նախնին: Գեղամն այսպիսով կարող է համարվել առաջին նախնի Զայկի մի հաջորդ մարմնավորումը՝ արեւելյան Զայկը: Նրա անվան հետ պետք է կապվի գեղին «հայ» ցեղանունը: Ե՛վ Գեղամ, ե՛ւ Գեղտարըը պարունակող մյուս բազմաթիվ անվանումներն այս շրջանում պետք է որ ծագեին ամպրոպի աստծու հակառակորդի հնդեվրոպական անունից՝ \*wel- (հմմտ. «վիշապ») կարակոթողների ամենամեծ խտությունը Գեղամա լեռներում, Գեղ լեռան վրա, Գեղի ամրոցի կողքին, տես Ա. Պետրոսյան 1987):

Գեղամին հաջորդում է Զարման, սրան՝ Արամը: Արամի որդի Արա Գեղեցիկը հայագիտության մեջ դիտվում է որպես մեռնող ու հարություն առնող աստծու վիպականացած մի տարբերակը (Աբեղյան Ա, 62 հուն. Ադոնց 1948. Մատիկյան 1930. Դափանցյան 1944), Արտավազդի ու Փոքր Մհերի նախնական կերպարը: Արայի Գեղեցիկ կոչումը նույնարմատ է Գեղամի անվան հետ եւ ակնարկում է այդ կերպարների ֆունկցիոնալ որոշ կապերը (Ա. Պետրոսյան 1991):

Զայոց ազգածնության ավանդության այս տվյալները վերելում բերված սխեմայի շրջանակներում կարող են տեղավորվել այսպես՝ 1. Զայկ (ամպրոպի եւ պատերազմի աստված), 2. Արամանյակ եւ Արամայիս, նախնական երկվորյակների ձեւափոխված տարբերակը, 3. Ամասիա, Արտավազդի հետ համադրելի կերպար: Սրան հաջորդում է նույնատիպ մի շարք՝ 1. Գեղամ (ամպրոպի աստծու հետ կապված, նրա հակառակորդից ծագող կերպար), 2. Զարմա եւ Արամ, որոնց անունների նմանությունը կարող է ակնարկել նրանց նախնական երկվորյակային բնույթը, 3.

Արամ, գլխավոր ռազմական հերոս, 4. Արա Գեղեցիկ: Այսպիսով հայոց ազգածնության առասպելի հերոսները թերեւս երկու անգամ են կրկնում նախնական սխեման (Ա. Պետրոսյան 1991): Առավել ակնհայտ է եւ այս շարքերի հետեւյալ պարզեցված մեկնաբանությունը՝ 1. Հայկ, 2. Արամանյակ եւ Արամայիս...3. Արամ, 4. Արա Գեղեցիկ: Ակնհայտ է Արամանյակ, Արամայիս եւ Արամ անունների նույնարմատությունը, եւ այս շարքը կարող է ներկայացվել նաեւ այսպէս՝ 1. Հայկ (ամպրոպի աստված) 2. Արամ-արմատից ծագող անուններով երեք կերպար, որոնցից մեկը գլխավոր հերոսն է (հմմտ. հնդեվրոպական երկվորյակների երեքը լինելու տեսակետը եւ Արամի կապը «Երրորդ» հերոսի հետ) եւ 3. Արա Գեղեցիկ (մեռնող եւ հառնող աստվածություն):

Ազգածին ցեղատեղիների եւ «Վիպասանքի» միջեւ միջին դիրք է գրավում հայոց վիպական արքաների հետեւյալ շարքը՝ Հայկակ, Երվանդ, Տիգրան, Վահագն (Խորենացի I, ԻԲ-ԼԱ): Հայկակը Հայկի ածանցյալ ձեւն է: Երվանդը, որի անունը համապատասխանում է «Վիպասանքի»՝ ցլից ծնված եւ երկվորյակային հատկանիշներ ունեցող Երվանդ եւ Երվազ եղբայրներից առաջինն (որն, ի միջի այլոց, Երվանդակերտ նոր մայրաքաղաքն է կառուցում), շարքում գրավում է նրան համապատասխան երկրորդ տեղը, ինչպէս երկվորյակային Արամանյակն ու Արամայիսը եւ Սանասարն ու Բաղդասարը: Հատկանշական է, որ «Վիպասանքում» եւս Երվանդը կապված է Տավրոս-Սատունի հետ՝ նրա ամենամկրկնված պաշտպաններն էին «արք քաջք Տաւրացիք» (Խորենացի II Խ2): Տիգրանը եւ նրան բազմաթիվ գծերով կրկնող Վահագնը տիպիկ վիշապամարտիկ եւ «Երրորդ հերոսներ» են եւ գրավում են երրորդ տեղը:

Միեւնույն սխեմայի դրսևւորումներն ի հայտ են գալիս եւ հայ առաջին Արշակունիների պատմության մեջ (Խորենացի II, Գ հտմ.), ուր տոհմի հիմնադիրները կոչվում են Արշակ եւ Վաղարշակ (հմմտ. Երկվորյակային հերոսներին միանման անուններ տալու սկզբունքը), իսկ հետո հանդես են գալիս Տիգրանը եւ Արտավազդը (հմմտ. այս անուններ կրող մյուս արքաների առասպելական կերպարները): Ե՛վ այս անունները, ե՛ւ սխեմայի կերպարների շարքը որոշակի ձեւափոխություններով կրկնվում է հայկական մյուս վիպաշարերում («Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ»):

Այսպիսով, կարելի է տեսնել, թե ինչպէս նախնական առասպելաբանական սխեմայի հետագա պատմականացման ընթացքում առաջին ազգածին հերոսները աստիճանաբար փոխարինվել են պատմական արքաների կերպարներով, որոնց անունները, իրենց հերթին, ձեռք են բերել որոշակի կերպարային հատկանիշներ, որոնք հետո կրկնվում են (Երվանդը՝ երկվորյակային հերոս, Տիգրանը՝ վիշապամարտիկ, «Երրորդ հերոս» եւ այլն): Հետաքրքիր է նշել, որ արքաների հաջորդականության այս սխեմայի տարրերն ի հայտ են գալիս նույնիսկ սովետական ղեկավարների բանահյուսական կերպարներում եւ նրանց հերթագայության ժողովրդական ընկալումներում (տես Ա. Պետրոսյան, 1990 ա):

Հայկական ազգածնության առասպելի եւ էպոսի հերոսների սերնդա-

յին շարքերը առավել մոտ են հռոմեականին: Այստեղ տոհմի հիմնադիրը պատերազմի Մարս աստվածն է (հմմտ. Մարս մոլորակի Հայկ անվանումը), որին հաջորդում են երկվորյակ եղբայրներ Ռեմոսն ու Ռոմուլոսը: Սրանցից երկրորդը հիմնում է Հռոմը եւ դառնում նրա տիրակալը (հմմտ. Արամայիս եւ Սանասար): Ռոմուլոսին հաջորդում է խաղաղասեր Նումա Պոմպիլիոսը («միտրայական» կերպար, հմմտ. Միեր), ապա տիպիկ ռազմիկ Տուլլոս Հոստիլիոսը (հմմտ. Դավիթ), եւ հետո՝ Անկոս Մարցիոսը (Երրորդ Ֆունկցիայի կրող, բայց «միտրայական» Նումայի սերնդից, հմմտ. Փոքր Միեր), որով եւ ավարտվում է Հռոմի պատմության առաջին շրջանը (Հռոմի առաջին չորս արքաների՝ որպէս միասնական համակարգի կերպարների վերլուծությունը տես Դյումեզիլ I, 274-81. 1992, 180-92 եւ այլուր):

Օսական էպոսում (CH) տոհմի հիմնադիրն է Ուարխազը («գայլ», տես Աբաե 1965, 86-92. հմմտ. Դյումեզիլ I, 470), որին հաջորդում են երկվորյակները, ապա սրանցից մեկի նույնպէս երկվորյակ որդիները (Ուրուզմազն ու Խամիցը): Սրանք վերադառնում են պապի մոտ, օգնում նրան արժանապատիվ կյանք վերսկսել եւ ամուսնացնում իրենց մոր հետ:

Ինչպէս նկատել է Վ. Աբաեյը, օսական հերոսների տոհմի պատմությունը նման է հռոմեական երկվորյակների՝ Ռեմոսի եւ Ռեմուլոսի, որոնց սնուցել էր էգ գայլը (պատերազմի աստծու սիմվոլը) ավանդությանը: Հռոմեական երկվորյակները եւս մեծանալով վերադառնում են եւ վերահաստատում իրենց պապին որպէս թագավոր (նախկին թագավորը սպանվում է), ապա նրանցից մեկը հիմնում է իր նոր քաղաքը (Լիվիոս I, 5-6. Պլուտարքոս, «Ռոմուլոս» VIII-IX):

Սանասարը եւ Բաղդասարը նույնպէս իրենց պապի հաջորդներն են մոր միջոցով: Նրանք սպանում են կռապաշտ թագավորին (Բաղդադի խալիֆին) ու գալիս իրենց մոր հայրենիքը, պապի մոտ, ապա առանձնանում եւ հիմնում իրենց քաղաքը՝ Սասունը: Այստեղ արժե նշել երկվորյակների՝ իրենց պապին մոր կողմից հաջորդելու մոտիվը: Ժ. Դյումեզիլը քննարկել է առասպելներ, ուր հնդեվրոպական արքային վերահաստատում են իր գահի վրա կամ հաջորդում որպէս օրինավոր ժառանգներ նրա դստեր որդիները (Դյումեզիլ II, 316-353): Սա պետք է որ արտացոլեր որդիների՝ իրենց իշխանավոր հորը գահագրկելու միտումը եւ դրա դեմ գործող կարգը: Հետաքրքիր է, որ արքային՝ նրա որդու հաջորդելու արգելքի մասին իռլանդական առասպելը, ուր օրինավոր գահաժառանգն է արքայադստեր եւ նրա եղբայրների արյունապիղծ կապից ծնված որդին, համեմատվում է խեթական վաղ թագավորության գահաժառանգման պատմական կարգի հետ (Պուհվել 1989, 359-60):

Բացահայտորեն օսական՝ ալանական էպոսի հետ է առնչվում նաեւ Արտաշեսի ավանդությունը (Արտաշեսը որպէս ալանական արքայադուտար Սաթենիկի ամուսին համապատասխանում է օսական Սաթանայի ամուսին Ուրուզմագին, որի անունն է միջի այլոց, կապված է «վարազ» արմատի հետ): Ուրուզմագին հաջորդող սերնդի գլխավոր ներկա-

յացուցիչ Սոսլան-Սոգրիկոյի աղըղական համապատասխանությունը հիշեցնում է հայ Արտավազդին, Միերին եւ նման կերպարներին՝ նա ամեն գարուն գետնի տակից ձգտում է վերադառնալ երկիր անարդարություն գործողներին ոչնչացնելու համար (Միժաեի MHM II, 464): Ստորեւ ներկայացվում է քննարկված հերոսների համեմատական աղյուսակը.

Ամպրոպի եւ ռազմի աստվածություն, նրա սիմվոլը	Երկվորյակներ	«Միտրայական» հերոս	Գլխավոր հերոս, ռազմիկ	Երկրորդ «միտրայական» հերոս, արդարության եւ առատության ավետաբեր
Հայկ	Արամանյակ Արամայիս	...	Արամ	Արա Գեղեցիկ
Տուլ	Երվանդ, Երվազ		Արտաշես	Արտավազդ
Ծովինար	Սանասար, Բաղդասար	Մեծ Միեր	Դավիթ	Փոքր Միեր
Մարս, գայլ	Ռեմոս, Ռոմուլոս	Նումա	Տուլլոս	Անկոս
Գայլ	Երկվորյակների երկու սերունդ		Ուրուզմազ	Սոգրիկո

Այս աղյուսակը կարելի է համալրել նաեւ այլ հնդեվրոպական վիպական շարքերով: Հետաքրքիր է նշել, որ առաջին հայկյանների, ինչպես եւ օսական ու հռոմեական շարքերում թերեւս ի հայտ է գալիս երկվորյակների երկու սերունդ (տես Բրիկել 1992):

Ինչպես նշվել է, Արամի եւ նրա երրորդ հակառակորդի կռիվը համապատասխանեցվել է Ջեսի ու Թեշուբի եւ նրանց հակառակորդների կռիվների առասպելներին: Բերված մյուս շարքերի համապատասխանությունները եւս «երկնային արքայության թեմայի» առասպելներին ակնհայտ են (տես-նաեւ ստորեւ):

Քննարկված հայկական, հռոմեական եւ օսական ավանդություններում նախկին տիրակալների բռնի փոխարինման պահը չկա, բայց եւ այնպես ընդհանրությունները բացահայտ են: Հատկանշական է, որ այս թեմայի հնդեվրոպական շարքերում, ի տարբերություն մյուսների, հանդես են գալիս երկվորյակները (ինչպես եւ հայ., հռոմ., օս. շարքերում):

Ասվածը ցույց է տալիս հայկական վիպաշարերի հերոսների հերթագայության շարքի խորը հնությունը: Այս տվյալները հայկական էպոսը մոտեցնում են հատկապես հռոմեականին, որը պետք է հատուկ բացատրություն ունենա, քանի որ լատիներենը հայերենին մոտ հնդեվրոպական լեզուներից չէ:

## 15. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Ժ. Դյումեզիլը իր բազմաթիվ աշխատանքներում ցույց է տվել հնդեվրոպական ժողովուրդների առասպելներում երեք, այսպես կոչված ֆունկցիաների՝ գերագույն իշխանության (թրմական, հմայա-իրավական), ռազմական եւ տնտեսական-համայնական (պտղաբերության, հարստության) համալիրների խորը պահպանվածությունը եւ դրսևորումները ամենատարբեր մակարդակներում ու ամենատարբեր ձևերով: Այս «եռամաս գաղափարախոսությունն» ի հայտ է գալիս աստվածների, հերոսների համակարգերում, կերպարներում, գործողություններում, նրանց հերթագայության մեջ, ամենատարբեր տեքստերում լեզվագենդերում, զովերգություններում, անեծքներում, անվերջանալիորեն կրկնվելով հատկանիշների, գույների, թալիսմանների, բուժամիջոցների, աղետների եւ այլ եռյակներում: Դա, ըստ հեղինակի, հնդեվրոպական մշակույթների բնորոշ, առանձնահատուկ հատկանիշն է, որն ի վերջո հանգում է հասարակության եռամաս սոցիալական կառույցին (այս տեսակետի կողմ էլ դեմ կարծիքների քննարկումը տես, օրինակ, Լիբլտոն 1982, 153-203, 216-36):

Այդպիսի ձեւավորված հասարակություն դժվար է պատկերացնել հնդեվրոպական միասնության դարաշրջանում նեոլիթում եւ էնեոլիթում (տես Դյակոնով 1990, 111-113), բայց մյուս կողմից հասարակական այդ կառույցի տարրերը պարզորոշ ի հայտ են գալիս հին հնդկական, իրանական, հունական, լատինական ցեղերի մեջ (տես, օրինակ, Դյումեզիլ 1992, 81 հտն.): Այսպիսով, պետք է կարծել, որ հին հնդեվրոպական հասարակություններն ունեցել են համապատասխան նախադրյալներ, որոնց հիման վրա եւ ձեւավորվել են հետագա նույնատիպ կառույցները (հմտ. Գամկրելիձե, Իվանով, 1984, 787 հտն.): Ինչ վերաբերում է այդ ֆունկցիաների դրսևորմանն առասպելաբանության մեջ, ապա Ժ. Դյումեզիլի բերած հսկայական նյութը կասկածից վեր է դարձնում այն: Եվ ի վերջո այս «եռամաս գաղափարախոսությունն» անպայման չէ, որ ուղեկցվի հասարակության համապատասխան բաժանմամբ, այլ ընդհակառակը, այն ոչ այլ ինչ է, քան իդեալ, եւ միաժամանակ՝ քննության մեթոդ (Դյումեզիլ I, 15): Թեեւ նման գաղափարախոսություն տեսականորեն կարելի է պատկերացնել նաեւ այլ ժողովուրդների մշակույթներում, եւ այն թերեւս առկա էր Ամերիկայի եւ Աֆրիկայի որոշ ցեղերի մեջ, բայց հին աշխարհում, Հյուսիսային Աֆրիկայից մինչեւ Հիմաստան, ոչ հնդեվրոպական միջավայրում այն չի բացահայտվում, իսկ եղած դեպքերն էլ հնդեվրոպական ազդեցության արդյունք են (անդ, 632): Պետք է նշել նաեւ, որ այս սկզբունքորեն համընդհանուր ֆունկցիաներն էլ հնդեվրոպական մշակույթներում հանդես են գալիս որոշակի, առանձնահատուկ ձևերով (հմտ. Առաջին ֆունկցիայի «միտրայական» եւ «վարունայա-

կան» կողմերը եւ այլն):

Ստորեւ կքննարկվեն «Սասնա ծռեր» էպոսի միայն մի քանի դրվագներ, որտեղ, թվում է, կնկնատարբեն գործում է հնդեվրոպական «եռամաս գաղափարախոսությունը»: Սանասարի երեք որդիները կարող են դիտարկվել որպես տարբեր ֆունկցիաների ներկայացուցիչներ: Ինձ հավանական է թվում նրանց հետեւյալ տարբերակումը: Միերը, որպես իրանական Միթրա-Միհրի հետ նույնացված մի կերպար, պետք է կապված լինի առաջին ֆունկցիայի հետ (Միտրան հին հնդկական դիցարանում առաջին ֆունկցիայի «միտրայական»՝ արդարադատության, հասարակական համաձայնության կողմը ներկայացնող աստվածն էր): Էպոսում Միերը երկփեղկվել է երկու կերպարի՝ Մեծ եւ Փոքր Միերների, որոնցից երկրորդն առաջին ֆունկցիայի մյուս՝ «վարունայական» ասպեկտի կրողն է պատկերանում առավելապես (Ահյան 1985, 39): «Միերի դուռը», որտեղից պետք է վերածնվեր Փոքր Միերը, ուրարտական ժամանակներում կոչվել է «Խալդիի դուռ», որը ցույց է տալիս ուրարտ. Խալդիի եւ հայ. Միերի կերպարային հաջորդականությունը եւ Խալդիի հնարավոր ազդեցությունը արեւմտյան միթրաիզմի ձեւավորման վրա (Դյակոնով 1983, 191- 93): Սրան պետք է ավելացնել, որ Մեծ Միերը կոչվում էր Առյուծաձեւ (նա սպանում՝ «ծելում է») առյուծին), բայց այս մականունը կարելի է մեկնաբանել նաեւ իբրեւ «առյուծի ձեւ ունեցող» (Ավդալբեգյան 1969, 45), իսկ առյուծը Խալդիի սիմվոլն էր: Այլեւայլ հանգամանքներ ցույց են տալիս ուրարտական դիցարանի առաջին աստվածային զույգի՝ Խալդիի եւ նրա կին Վարուբանիի կապը հնդկական առաջին ֆունկցիայի աստվածներ Միտրայի եւ Վարունայի հետ (Յմայակյան 1990ա, տես նաեւ ստորեւ): Կարելի է ցույց տալ նաեւ, որ հայկական հնագույն ավանդության մեջ Խալդիին եւ հնդ. Միտրա-Վարունային հմապատասխանում է Արա Գեղեցիկը (Ա. Պետրոսյան 1991, 104-7):

Ձենով Օհանն իր անունով համապատասխանում է Յովհաննես-Սկրտչին՝ աշուղ-երգիչների հովանավոր սուրբ Կարապետին, որի պաշտամունքը կենտրոնացած էր Մուշի դաշտում եւ շարունակվում էր նույն շրջանում տեղայնացվող հեթանոսական աստծու՝ Վահագնի պաշտամունքը: Ընդհանրապես ուժեղ ձայն ունեցող կերպարները հաճախ համադրվում են ամպրոպի գոռոցի՝ որոտի հետ (հմմտ. Որոտ անունով կերպարները տարբեր ավանդություններում), իսկ ամպրոպի եւ որոտի հնդեվրոպական վիշապամարտիկ աստվածը ներկայացնում էր ռազմական ֆունկցիան: Յուան Վերգոյին այսպիսով մնում է երրորդ՝ համայնական ֆունկցիան, որի ներկայացուցիչները այլուրեք են ոչ ռազմական վարքի համար կարող են որակվել իբրեւ վախկոտներ (նույն հերոսների ֆունկցիոնալ այլ մեկնաբանություն տես Ա. Պետրոսյան, 1975): Պետք է նշել, որ Օհանի եւ Վերգոյի նախնական կերպարները մեծ չափով ձեւափոխվել են ժողովրդական ավանդության մեջ, երգիծական ձեւով հակադրվելով տոհմի հիմնական գծի կողմեր Միերին ու Դավթին, եւ նրանց կապը հիշյալ ֆունկցիաների հետ էպոսի հայտնի տարբերակների հիման վրա ակնհայտ չէ:

Կարելի է տեսնել նաեւ էպոսի ճյուղերը ներկայացնող կերպարների տարբեր, հիմնական ֆունկցիոնալ էութունները: Երկվորյակներն ամենուրեք ներկայացնում են երրորդ ֆունկցիան (թեւ նրանք կարող են տարբերակվել իրարից եւ զարգացման ընթացքում նաեւ երկրորդ եւ առաջին ֆունկցիաների հատկանիշներ ձեռք բերել), երկու Մհերներն, ինչպէս ասվեց, կապվում են առաջին ֆունկցիայի տարբեր դրսեւորումների հետ, եւ Դավթին մնում է նրան առավել պատշաճող երկրորդ ֆունկցիան:

Ընդհանրապէս այս ֆունկցիաներն իրենց մեջ ներթուստ հակասական են, երկփեղկված, ինչպէս առաջին ֆունկցիայի «միտրայական» եւ «վարունայական» ասպեկտները (հմմտ. Մեծ եւ Փոքր Մհերներ): Դավիթը ներկայացնում է հնդեվրոպական ռազմիկի միայնակ կռվող, սովորաբար մկանային բիրտ ուժն օգտագործող տարբերակը (այսպէս կոչված «հերակլեսյան տիպ», ի հակադրություն արիեստավարժ զինվոր Աքիլլեսի, տես, օրինակ, Դյումեզիլ, 1992, 176-77): Հնդեվրոպական երկվորյակները եւս տարբեր են, եւ նրանցից մեկը, առավել ռազմական կերպարը, հաճախ մթագնում է մյուսին (Ուորդ 1970. հմմտ. Սանասար եւ Բաղդասար):

Հնդեվրոպական առասպելաբանության մեջ արքան ամբողջական, կատարյալ կերպար է, բոլոր դասերի տիրակալը, որն իրենում ամփոփում է ողջ հասարակությունը եւ նրա երեք ֆունկցիաները: Այդպիսին են եւ «Սաննա ծռերի» հիմնական հերոսները:

Սանասարը երկվորյակ է (երրորդ ֆունկցիա), վիշապամարտիկ (երկրորդ ֆունկցիա), քաղաքի եւ եկեղեցու հիմնադիր ու արքա (առաջին ֆունկցիա, հմմտ. հռոմեական երկվորյակ Ռոմուլոսի նույնատիպ՝ եռաֆունկցիոնալ մեկնաբանությունը): Մեծ Մհերն արդար է, նա միայնակ, առանց զենքի է կռվում առյուծի դեմ, էպոսի հերոսներից միակը, որը դաշինք է կնքում հակառակորդի հետ (առաջին ֆունկցիա, հմմտ. հնդիրան. \*mitra- «համաձայնություն, դաշինք»), բայց նաեւ մեծ ռազմիկ եւ սասունցիներին յոթը տարի միայնակ որսով կերակրողը (երկրորդ եւ երրորդ ֆունկցիաներ):

Դավիթը վերաշինում է քանդված վանքը (առաջին, քրմական ֆունկցիա), հետո հաղթում Մելիքին (երկրորդ ֆունկցիա), որին հետեւում է նրա վար անելը, շատակերությունը եւ ամուսնությունը (երրորդ ֆունկցիա): Կրտսեր Մհերը վրիժառու է, անզուսպ ու դաժան, բայց արդար (առաջին ֆունկցիա), նույնպէս ռազմիկ, որը պետք է վերադառնա երկրում առատության գալստյան հետ (երկրորդ եւ երրորդ ֆունկցիաներ):

Վիպաշարերում հերոսները հաջորդում են իրար սովորաբար որպէս առաջին, երկրորդ եւ երրորդ ֆունկցիաների կրողներ, կամ հակառակ հերթականությամբ: Էպոսի զարգացման ընթացքում հնարավոր են եւ հերոսների, եւ ճյուղերի ֆունկցիոնալ տեղաշարժեր: Հաշվի առնելով առատության՝ երրորդ ֆունկցիայի հատուկ շեշտվածությունը Փոքր Մհերի կերպարում (նա պետք է ելնի ժայռից գարու՝ ընկույզի չափ դառնալուց հետո), նրան կարելի է համարել երրորդ ֆունկցիայի հիմնական

կրող (դա այդպես է հերոսի կյանքի վերջին դրվագում, իսկ մինչ այդ նա բացարձակապես այլ՝ «վարունայական» եւ «միտրայական» հատկանիշներ է դրսեւորում. տես Աւյան 1985, 39): Այդ դեպքում «Սասնա ծռերի» հերոսների շարքը ձեռք կբերի հետեւյալ տեսքը. 1. Սանասար՝ հիմնադիր, առաջին արքա (առաջին ֆունկցիայի «վարունայական» տիպ, հմմտ. նաեւ Վարունայի եւ Սանասարի կապը ջրերի եւ «կապելու» հետ) 2. Մեծ Միեր (առաջին ֆունկցիայի «միտրայական» տիպ), 3. Դավիթ (երկրորդ ֆունկցիա), 4. Փոքր Միեր (երրորդ ֆունկցիա): Այս շարքը կետ առ կետ համապատասխանում է հռոմեական արքաների շարքին, որի առաջին երկու արքաները ներկայացնում են առաջին ֆունկցիայի «վարունայական» եւ «միտրայական» տիպերը, որոնց հաջորդում են երկրորդ եւ երրորդ ֆունկցիաների կրողները: Այդ դեպքում հասկանալի է դառնում հատկապես Միերի կերպարի կրկնապատկումը (որն իր նախահիմքերն է ունեցել արդեն իրանական աշխարհում): Որպես «միտրայական» տիպ նա տեղադրվել է «վարունայականից» հետո, շեշտելու համար առաջին ֆունկցիայի երկու ասպեկտները: Մյուս կողմից նա, ինչպես եւ Արա Գեղեցիկը եւ մյուս մեռնող եւ հառնող աստվածությունները, կապված է ոչ միայն արդարության (առաջին ֆունկցիա), այլեւ առատության (երրորդ ֆունկցիա) գալստյան հետ, եւ տեղ է գտել նաեւ շարքի վերջում (հմմտ. նաեւ առաջին հայկյանների շարքում Արա անունով իրար հաջորդող երկու հերոսներին, տես ստորեւ): «Սասնա ծռերը» բազմաշերտ էպոս է, եւ, հնարավոր է, որ նրա որոշ հատվածներ միացվել են հնագույն միջուկին շատ ուշ, միջնադարում, բայց նրանք ամբողջացվել են նախնական ծննդաբանական սխեմայի եւ հերոսների ֆունկցիոնալ հաջորդականության վաղըջական կաղապարների հիման վրա:

Հնդեվրոպական ֆունկցիաների համատեքստում կարելի է մեկնաբանել հատկապես էպոսի հերոսների վախճանները: Մեծ Միերը մեռնում է երդմնազանդության պատճառով (առաջին ֆունկցիա), Դավիթը, Նորից երդմնազանդության հետեւանքով, սպանվում է (երկրորդ ֆունկցիա), իսկ Փոքր Միերը պետք է վերադառնա առատության գալուստից հետո (երրորդ ֆունկցիա): Կարելի է գտնել նաեւ հնդեվրոպական ռազմիկի «երեք մեղքերի» դրսեւորումը (Դյումեզիլ 1970, 72-104)՝ Դավիթը ամայացնում է պառավի արտը (երրորդ ֆունկցիա), վախենում իր խորթ եղբայր Մելիքի զորքից, բայց եւ սպանում նրան (երկրորդ ֆունկցիա), ապա երդմնազանց լինում (առաջին ֆունկցիա):

Փոքր Միերի լավագույն զուգահեռներն են Հայաստանում Արտավազը, Դիորփոսը եւ Խալդին, որի ուղղակի հաջորդն է նա:

Հնդեվրոպական ժողովուրդների ավանդություններում նույն առասպելույթի տարրերն առկա են իրանական, հարավ-սլավոնական եւ հյուսիս-գերմանական հերոսների կերպարներում (Աբեդյան I, 148-53. հմմտ. հատկապես Աժի Դահակա-Չոհակի առասպելները, որոնք որոշակիորեն ազդել են Արտավազի ավանդության վրա եւ Իսֆանդիյարի կերպարը «Շահնամեում», տես Ա. Պետրոսյան 1997, 22, 58, 114):

Այլ ժողովուրդների ավանդություններում Միերի ամենամերձավոր

համապատասխանություններն են քարթվելական եւ հյուսիսկովկասյան, ժայռում փակված, աստվածամարտիկ հերոսները՝ կովկասյան Պրոմէթէոսները (վրաց. Ամիրան, աբխազ. Աբրսկիլ եւ այլն. հմմտ նաեւ խուռիական Ուլլիկուրմմի առասպելը եւ Ատտիսի ծննդաբանության հետ կապված դրվագը՝ տես Ադոնց 1972, 371 եւ մյուս հոլված աշխատություններն այդ մասին): Այսինքն, այստեղ ակնհայտ է փոքրասիա-կովկասյան ավանդությունների ներդրումը: Բայց մյուս կողմից, Փոքր Միերի վախճանը՝ հեռացումն այս աշխարհից ունի հնդեվրոպական որոշ հատկանիշներ, համեմատելի հատկապես հնդկական «Մահաբհարատա» էպոսի ավարտի հետ:

Փոքր Միերը ժայռի մեջ է մտնում «վերջին ճակատամարտից» հետո, ենթարկվելով իր ծնողների՝ գերեզմանից ստացած խորհրդին, սեփական կամքով, քանի որ աշխարհը դարձել էր անարդար եւ այլևս չէր կարողանում պահել նրան: Այս մոտիվները, ինչպես նաեւ առատության գալուստի հետ կապված, երրորդ ֆունկցիան ներկայացնող դրվագը, զուգահեռներ չունեն կովկասյան ավանդություններում:

«Մահաբհարատայում» «միտրայական» արքա Յուդիշտիիրան հեռանում է աշխարհից իր եղբայրների եւ կնոջ հետ, իմաստուն Վյասայի՝ իրենց նախնու, խորհրդով, սեփական ցանկությամբ, եւ միայն ինքն է հասնում սրբազան Մերու լեռան գագաթը:

Հետաքրքիր է նշել, որ Յուդիշտիիրան հրաժարվում է երկնային արքայություն մտնել առանց իր շան, այսինքն նորից կապեր է ցուցադրում հայկական եւ կովկասյան համապատասխան կերպարների հետ (հմմտ. Արտավազդի եւ Ամիրանի շղթաները լիզող շներին, տես եւ Դյումեզիլ 1994, 194-205):

Իր կյանքի վերջին տարիներին, հայկական առասպելաբանության որոշ տվյալների, որպես հնդեվրոպական անկախ աղբյուրների, անդրադարձել է նաեւ Ժորժ Դյումեզիլը, որը, ինչպես եւ հնդեվրոպական համեմատական առասպելաբանության մյուս մասնագետները, իր նախորդ աշխատություններում համարյա չէր անդրադարձել հայկական նյութին (ընդհանրապես հայկական առասպելաբանական տվյալները արեւմտյան գիտնականների կողմից քննարկվել են հիմնականում իրանական ազդեցությունների համատեքստում):

Այս աշխատությունը գրված էր, երբ եւս հնարավորություն ստացա ծանոթանալու Ժ. Դյումեզիլի նշված դիտարկումներին, բայց, հաշվի առնելով ժամանակակից համեմատական առասպելագիտության հիմնադրի բարձր հեղինակությունը եւ հարցի կարեւորությունը հայագիտության համար, նպատակահարմար է համառոտ կերպով անդրադառնալ դրանց:

Ստեփան Ահյանի՝ հայոց ազգածնության ավանդության եռաֆունկցիոնալ վերլուծությանը կից հետգրության մեջ Ժ. Դյումեզիլը բարձր է գնահատում այն, գտնելով, որ հողվածում, իրոք, բացահայտված է բնիկ հայկական, հնդեվրոպական տարրը, որը հանդես է գալիս առաջին հայկյանների ֆունկցիոնալ կապերի մեջ (Ահյան 1982, 271. հեղինակն

այստեղ Հայկին, Արամին, Արային եւ նրա նույնանուն որդուն, ապա եւ նրանց հակառակորդներին՝ Բելին, Բարշամին ու Շամիրամին համադրում է համապատասխանաբար առաջին, երկրորդ եւ երրորդ ֆունկցիաների հետ): Միեւնույն ժամանակ Ժ. Դյումեզիլը հաջողված չի համարել Ս. Ալիանի՝ «Սասնա ծռերի» ֆունկցիոնալ վերլուծությունը (Դյումեզիլ I, 644, 1986թ. հրատարակություն նոթերում):

Հնդեվրոպական երկվորյակներին նվիրված իր վերջին, հետմահու լույս տեսած գրքում Ժ. Դյումեզիլը հատուկ քննարկում է Սանասարի եւ Բաղդասարի եւ առաջին հայկյանների կերպարները, որոնց նկատմամբ նրա հետաքրքրությունն, անկասկած, առաջացել է Ս. Ալիանի հողվածների շնորհիվ: Այստեղ եւս հեղինակը բնիկ հնդեվրոպական շերտ է գտնում հիշյալ ավանդություններում:

Հեղինակը նշում է հայ-հռոմեական բացառիկ զուգահեռները (երկվորյակները գերբնական ծագում ունեն. նրանք ազատում են իրենց պապին եւ մորը միեւնույն բռնակալից, հրաժարվում մնալ իրենց պապի քաղաքում եւ հիմնում ապագայի քաղաքը, որը բնակեցնում են կսմավորներով): Չնայած այս համապատասխանությունների նշանակալիությանը, դատելով հնդեվրոպական եւ հյուսիսգերմանական տվյալներից, այս մոտիվները, որոնք այլուրեք վերագրվում են միակ հերոսների, բնորոշ չեն եղել հնդեվրոպական երկվորյակներին (Դյումեզիլ 1994, 119-20): Բայց, ինչպես ցույց է տրվել վերելում, հայկական եւ հռոմեական տվյալները համապատասխանում են ոչ միայն երկվորյակների, այլեւ առասպելաբանական մի քանի սերունդների ողջ համալիրով, ներառյալ անունները, եւ բազմաթիվ հնդեվրոպական զուգահեռներ ունեն «սելի եւ սպիտակի» վերակազմված առասպելի համատեքստում: Նույնը վերաբերում է նաեւ հայկական եւ օսական երկվորյակներից մեկի լիճը մտնելու մոտիվների նմանությանը (տես վերելում, հմմտ. անդ. 120):

Հեղինակը բնիկ հայկական եւ համարում հայ վիպական երկվորյակների հետ կապված հետելյալ մոտիվները, որոնց զուգահեռներն ի հայտ են գալիս նաեւ մյուս հնդեվրոպական ավանդություններում՝ 1. երկվորյակների բնածին անհավասարությունը, 2. «սվայամվարա»՝ աղջկա կողմից նախաձեռնված ամուսնական ընտրության կեղծվելու թեման (էքր Դեղծունի նամակը հասնում է ոչ թե Սանասարին, այլ Բաղդասարին), 3. Ծերունիների երիտասարդացումը (խոսքը վերաբերում է Դեղծունի ձախողված փեսացուներին՝ անդ. 121-29): Նույն գրքում հեղինակը վերլուծում է նաեւ առաջին հայկյանների՝ հատկապես Արա Գեղեցիկի ու նրա որդի Արայան Արայի առասպելները հնդեվրոպական երրորդ ֆունկցիայի համատեքստում (անդ. 133-41): Հեղինակը օգտվել է «Սասնա ծռերի» համահավաք տեքստի (որտեղ բազմաթիվ կարելուր մանրամասեր դուրս են թողնվել) ֆրանսերեն թարգմանությունից եւ սահմանափակվել է միայն երկվորյակների ճյուղին եւ երրորդ ֆունկցիային վերաբերվող վերլուծությամբ, բայց չնայած դրան, այս նկատառումները էական են եւ կարող են ազդակ լինել հայկական էպոսի եւ առասպելաբանության հնդեվրոպական տարրերի ուսումնասիրման գործում: Պետք է

նշել նաեւ, որ ազգածին ավանդոթյան եւ «Սասնա ծռերի» հերոսների շարքերը միեւնոյն առասպելաբանական սխեմայի տարածամանակյա դրսեւորումներ են եւ առաջինի հնդեվրոպական բնույթը ցույց է տալիս նաեւ երկրորդի նույն ծագումը: XIX եւ XX դարերում գրանցված էպոսի հերոսների ֆունկցիոնալ բնութագրերը չէին կարող այնքան պարզ լինել, որքան հին հնդեվրոպական առասպելներում:

## 16. ՍԱՍՆԱ ԾՌԵՐԸ, ԱԶԳԱԾԻՆ ՆԱՅԱՊԵՏՆԵՐԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՈՒ ՅԱՅԿԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ

Ուրարտական դիցարանը, ի հակադրոթյուն ազգակից խուռիական դիցարանների (բացի այնտեղ ներգրավված արիական աստվածներից), ունի վերին ստիճանի բնութագրական եռամաս կառուցվածք, որը կարող է մեկնաբանվել որպէս հնդեվրոպական ազդեցութիւնների արդյունք (Ա. Պետրոսյան 1988, 1-2. հմմտ. գլխավոր աստվածների եւ բազմաթիվ «սրբութիւնների» եռյակներն այդ դիցարանում, տես Յմայակյան 1990, 28-32):

«Սասնա ծռերի» երկու Միերները ուրարտական խալդիի, հայկական դիցարանի Միհրի եւ իրանական Միհր-Միթրայի վիպական համապատասխանութիւններն են: Ինչպէս նշվել է, Մեծ Միերի Առյուծածէ կոչումը ցույց է տալիս նրա կապը խալդիի սիմվոլ առյուծի հետ: Մեծ Միերը սպանում է Սպիտակ դեւի սեւ ցուլին, որը իրան Միթրայի եւ արեւմտյան միթրայականութեան աստծու հետ կապված մոտիվներից է, իսկ Փոքր Միերը մտնում է Միերի դռնից՝ «խալդիի դարպասից» ներս եւ պետք է դուրս գա այնտեղից, այսինքն ուղղակի նույնական է խալդիի հետ:

Խալդիի կնոջ անունը՝ Ուարուբա(ի)նի պետք է փոխառված լինի մի ինչ-որ արիական լեզվից՝ հմմտ. հնդ. Վարունա, միտաննիական արիական Ուրուվանա-: Նույն աստվածուհու մյուս անվանածէւր՝ Բազմաշտու, համեմատելի է հնդիրան. \*bhaga- եւ Վարունայի իրանական համապատասխանութեան՝ Ահուրամազդա դիցանունների հետ: Այսպիսով խալդի-Ուարուբանի զույգը համապատասխանում է հին հնդ. Միտրա-Վարունային՝ առաջին, գերագույն ֆունկցիայի հնդեվրոպական ամենատիպիկ աստվածների երկյակին, որտեղ եւս արական աստված Վարունային երբեմն իգական հատկութիւններ են վերագրվել (տես Յմայակյան 1990ա, Ա. Պետրոսյան 1991, 106-7. հմմտ. Դյակոնով 1990, 103):

Թեյշեբան, փոթորկի եւ ամպրոպի աստվածը, համապատասխանում

է է հնդ. Ինդրային եւ հուն. Թեսեսիս, որի համար առաջարկված են նաեւ հնդեվրոպական ստուգաբանություններ (տես Ա. Պետրոսյան 1997, 157-58. հմմտ. նաեւ հին հնդ. s'yāvas «մուգ», իրան. ավեստ. syāva, հայ. <իրան. սեւ, ռուս. sivy> «գորշ» եւ Թեյշեբայի ու Թեսեսի կապը «սեւ հեռոսի» հետ):

Էպոսի հերոսների շարքում Թեյշեբային համապատասխանում է Սա-նասարը, Ինդրայի վիպական գուգահեռը, ընդ որում նաեւ տեղայնաց-մամբ (Հայկական Տավրոս): Հատկանշական է, որ Թեյշեբայի խուռի-ական կրկնակ Թեշուրը ծնվում է իր հորից, իր եղբայր եւ օգնական Թաշ-միշուրի եւ Տիգրիս գետի աստծու հետ, հմմտ. Սանասարի եւ Ինդրայի երկ-վորյակային ծնունդը, կապերը ջրի հետ եւ Սանասարի տեղայնացումը Տիգրիսի ակունքների մերձակայքում:

Թեշուրը Սասունի երկրամասի՝ հին Շուբրիայի (հմմտ. նաեւ Ուրմե, Արմե երկրներն այստեղ) գլխավոր ստվածն էր (տես Հմայակյան 1990, 43), այսինքն նա եւս համապատասխանում է Արամին ու Սանասարին ե՛ւ կերպարով, ե՛ւ տեղայնացմամբ: Թեշուրի բացահայտ նմանությունը Սա-նասարին, ապա եւ Ինդրային, նորից թույլ է տալիս, ինչպես Խալդիի եւ Ուարուբանիի դեպքում, մտածել Թեշուրի եւ Թեյշեբայի հնդեվրոպա-կան, հատկապես արիական (հնդկական) կապերի մասին: Որպես ամպ-րոպային կերպարներ Թեշուրը եւ Սանասարը որոշ չափով մոտ են Վա-հագնին (նաեւ տեղայնացմամբ) եւ Ջեւս-Արամնագղին:

Ուրարտական գլխավոր աստվածների եռյակի վերջին անդամն է Շի-վինին, որի անունն, ինչպես նշվել է, անատոլիական է: Նրան, որպես արեւի աստված, կարող են երրորդ ֆունկցիային բնորոշ հատկանիշներ վերագրվել՝ նրա սիմվոլը ձին էր, արեւն ամենուրեք կապվում է երկվոր-յակների հետ եւ այլն: Ընդհանրապես հին աշխարհի բազմաթիվ երկր-ների (Եգիպտոս, Էբլա, Ուրարտու, Հնդկաստան, թերեւս նաեւ Հայաստ) դիցարաններում արեւի աստվածը հաճախ հանդես է գալիս որպես աստվածային եռյակի վերջին անդամ: Հաշվի առնելով ուրարտական մեծ աստվածուհիների ֆունկցիոնալ կապը իրենց արական գուգնկեր-ների հետ (հմմտ. Խալդի-Ուարուբանի=Միտրա-Վարունա), պետք է նշել, որ Շիվինի կնոջ կերպարը եւս հանդես է բերում երրորդ ֆունկցիային բնորոշ հատկանիշներ (տես ստորեւ):

Այսպիսով, ուրարտական դիցարանի գլխավոր աստվածների համա-կարգը համեմատելի է հնդեվրոպական, հատկապես հնդկական եռա-ֆունկցիոնալ դիցաբանական համակարգի հետ (Միտրա-Վարունա, Ինդրա, երկվորյակ Աշվիններ), որտեղ Խալդի-Ուարուբանի գույգը հա-մապատասխանում է Միտրա-Վարունային, Թեյշեբան՝ ամպրոպի եւ ռազմի աստված Ինդրային, իսկ Շիվինին երրորդ ֆունկցիայի կրողն է:

Ուրարտական այս եռյակի աստվածները ֆունկցիոնալ առումով համապատասխանում են եւ որոշ չափով կրկնում ասորեստանյան Աշտուրի (Աստուր), Ադադին եւ Շամաշին (առաջինը գլխավոր, երկրորդը՝ ամպրոպի եւ փոթորկի, երրորդը՝ արեւի աստվածներն են): Ասորեստանի մայրաքաղաքի եւ նրա մեծ աստծու անունը ակնհայտորեն համապատե-

է հնդիրանական աստվածների աստուրաների դասի անվան հետ, որի մեծ ներկայացուցիչներն էին հնդ. Վարունան եւ իրան. Ավիուրամազդան («\*asura-»), եւ տեսականորեն հնարավոր է այստեղ եւս հնդեւրոպական՝ արիական ազդեցություն ենթադրել (տես Գելբ 1935, 16-17, ծան. 219):

Հայկական դիցարանի գլխավոր աստվածը եւ մյուս աստվածների հայր Արամազդը առաջին՝ տիրակալության ֆունկցիայի բացահայտ ներկայացուցիչն է, որի իրանական նախատիպ Ահուրամազդան հնդկական Վարունայի համապատասխանությունն էր: Հավանական է, որ նրա անվան երկրորդ բաղադրիչը կապված է Ուարունանի բազմաշտու անվան վերջին մասի հետ, այսինքն որոշակի ժառանգորդություն կարելի է ենթադրել եւ այս մակարդակով, թեւ այդ աստվածների պաշտամունքների հիմնական տեղայնացումները չեն համընկնում: Արամազդի հետ որոշ հատկանիշներով համընկնում է Բարշամինան, նրանց պաշտամունքի կենտրոններն էլ գտնվում էին միեւնույն շրջանում ( տես Բասել 1987, 173-74) , եւ հնարավոր է պատկերացնել, որ այս երկու աստվածները կապված էին առաջին ֆունկցիայի երկու ասպեկտների հետ:

Վահագնը ռազմական աստված էր, իսկ Միհրին, ինչպես նրա իրանական նախատիպին, պետք է որ նաեւ արեւային հատկանիշներ վերագրվեին: Բայց, թեւ ֆունկցիոնալ առումով հայկական եւ ուրարտական աստվածների այս համապատասխանությունն ակնհայտ է թվում, Միհրը նույնացվել է առաջին ֆունկցիայի՝ գլխավոր աստված խալդիի հետ, այսինքն այստեղ կերպարային եւ հատկապես ֆունկցիոնալ ժառանգորդությունը միարժեք չէ:

Պետք է ասել, որ խալդին, որպես գլխավոր աստված, կապված էր եւ մյուս ֆունկցիաների հետ՝ նա նաեւ ռազմական, ապա եւ պտղաբերության ու խաղաղ շինարարության աստված էր, բազում երեւույթների հովանավորը (Յմայակյան 1990, 33-38): Նույնը թերեւս վերաբերվում է Արամազդին, որից պարարտ լիություն էին խնդրում (Ագաթանգեղոս, 127):

Յնարավոր է պատկերացնել հայկական աստվածներին նաեւ հետեւյալ ֆունկցիոնալ տարբերակումը՝ Արամազդ-Միհր (առաջին ֆունկցիա, հմմտ. Վարունա-Միտրա), Վահագն (երկրորդ ֆունկցիա) եւ Անահիտ (երրորդ ֆունկցիա), հմմտ. Կոմմագենեի դիցարանում Օրոմազդես, Միթրաս, Արտագնես աստվածների եւ սնուցող հայրենիք Կոմմագենեի հիշատակությունը (հմմտ. Ռաբինովիչ 1977):

Հայկական դիցարանում հայտնի են Արամազդ, Անահիտ, Վահագն եւ Վահագն, Անահիտ, Աստղիկ եռյակները (Ագաթանգեղոս 127, 809): Առաջինն ակնհայտորեն համընկնում է իրանական Ահուրամազդա, Անահիտա, Միթրա, ապա եւ տարածաշրջանի հին լուվական, խուռիական եւ թերեւս հայաստական աստվածների առաջին խմբին (մեծ աստված, նրա կինը եւ որդին. Վահագնը որոշ հատկանիշերով համապատասխանում է իրան. Միթրային), իսկ երկրորդ տիպիկ ոչ հնդեւրոպական է, որի գուգահեռները կարելի է տեսնել խուռիական, խաթական եւ հատկապես Լարուսկյան դիցարաններում (Ա. Պետրոսյան 1997, 80-81. 1997ա):

Հնդեվրոպական դիցարաններում աստվածուհիները թեև սովորաբար կրում են երրորդ ֆունկցիայի հատկանիշներ, բայց հաճախ հանդես են գալիս կապված բոլոր երեք ֆունկցիաների հետ՝ այսինքն «եռեվալենտ» են, կամ «տրանսֆունկցիոնալ»։ Միեւնույն առասպելներում կարող են հանդիպել երեք, տարբեր ֆունկցիաների հետ կապված դիցուհիներ, կամ երեք տարբեր ֆունկցիաներով կանացի կերպարներ կարող են կոչվել մեկ անունով (հմմտ. հուն. երեք դիցուհիների մասնակցությունը Պարիսի ընտրության դրվագում, իռլանդ. երեք տարբեր Մախաներին, հուն. երեք Քարիտների և այլն. տես, օրինակ, Դյունեզիլ, 1992, 107-8, 151-53. Վիան 1960, 218-19):

Հայկական դիցարանի երեք դիցուհիները՝ Անահիտը (գլխավոր աստծու՝ Չես-Արամազդի կինը), Նանեն և Աստղիկը նույնացվել էին համապատասխանաբար Արտեմիսի, ռազմիկ Աթենասի և սիրո դիցուհի Ափրոդիտեի հետ, և, այս համատեքստում, այսինքն իրար միջեւ ունեցած հարաբերություններում, կարող են պարզորոշ կերպով տարբերակվել ըստ Դյունեզիլի ֆունկցիաների, որպես 1. տիրակալության և ողջախոհության, 2. ռազմական և 3. պտղաբերության, այսինքն առաջին երկրորդ և երրորդ ֆունկցիաների կրողներ (հմմտ. միեւնույն բաժանումը Չեսի կին Չերայի, Աթենասի և Ափրոդիտեի համար, տես Դյունեզիլ I, 580-86. 1992, 107-8): Հատկանշական է, որ երկվորյակներն էպոսում սերունդ են երրորդ ֆունկցիայի հետ կապված անունով կերպարից՝ Աստղիկ թագավորի դուստրից:

Էպոսի հերոսների տոհմում հայտնի են Ծովինար-Քաղզաղի խալիֆ, Անասար-Դեղձուն, Մեծ Միեր-Արմաղան-Իսմիլ խաթուն-Նանե, Դավիթ-Խանդուր-Չմշկիկ սուլթան և Փոքր Միեր-Գոհար ամուսնական կամ արտամուսնական կապերը: Հայկական դիցարանում հայտնի են Արամազդ-Անահիտ, Արամազդ-Աստղիկ, Վահագն-Աստղիկ զույգերը և Վահագն-Անահիտ-Աստղիկ եռյակը: Արամազդի և Վահագնի կապերը միեւնույն դիցուհիների հետ թերեւս արձագանքն են այն բանի, որ ե՛ւ Արամազդը, ե՛ւ Վահագնը շարունակում են լուսավոր երկնքի (արեւի) և ամպրոպի աստվածների միավորված հատկանիշներով կերպարը: Այս եռյակները հիշեցնում են են Մեծ Միերի ու Դավթիսիրային կապերը:

Ազգածին մահապետների շարքում նման հարաբերություններ հայտնի են միայն Արա Գեղեցիկի ավանդության մեջ: Արան ամուսնացած էր Նուարդի հետ, բայց Ասորեստանի Շամիրամ թագուհին սիրահարվում է նրան, որի հետեւանքով էլ նա ի վերջո զոհվում է: Այս դրվագը հիշեցնում է Մեծ Միերի ու Իսմիլ խաթունի և Դավթի ու Չմշկիկ սուլթանի արտամուսնական կապերը, որոնց հետեւանքով հերոսները զոհվում են: Հատկանշական է, որ հեթաթեւում Արա Գեղեցիկը զոհվում է ոչ թե Արարատյան դաշտում, ինչպես Խորենացու գրքում, այլ Խլաթում (ԱՅԻԽ, 159), այսինքն էպոսի «առաջնագոհ» Դավթի սպանության վայրում:

Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան (=Տոսպ, Վան) կապված է Շիվի-նիի կնոջ՝ Տուշպուեայի անվան հետ: Հայկական ավանդության մեջ Վան թաղաքը կառուցում է Շամիրամը (Խորենացի I, ԺՁ), և այն կոչվել է Շա-

միրամակերտ, որը ցույց է տալիս Շամիրամի եւ Տուշպուեայի նույնացումը: Շամիրամ-Սեմիրամիսը համարվել է Իշտար-Դերկետոյի՝ Աստղիկին համապատասխան աստվածուհու դուստրը եւ ֆունկցիոնալ կրկնակը, եւ հայկական ավանդություններում էլ նա ընդհանրություններ է դրսեւորում դիցուհիների եւ հատկապես Աստղիկի հետ (Աղոնց 1948. Աբեղյան է, 157-61):

Շամիրամը, որպես թշնամի երկրի այրի մնացած թագուհի նման է էպոսի Իսմիլ խաթունին, որը կարողանում է իր մոտ բերել Մեծ Միերին եւ ժառանգ ունենալ նրանից: Արա Գեղեցիկը համապատասխանում է էպոսի Փոքր Միերին, բայց սա ցույց է տալիս նաեւ նրա եւ Մեծ Միերի որոշակի ընդհանրությունները: Դավթի Ճյուղում Շամիրամի կերպարի հետ համեմատելի է Չմշկիկի սուլթանը (ե՛ւ Դավիթը, ե՛ւ Միերը որպէս արտամուսնական կապի հետեւանքով մեռնող հերոսներ, այս համատեքստում ծագում են միեւնույն նախատիպից): Շամիրամի համապատասխանությունը Տուշպուեային եւ Արա Գեղեցիկինը՝ Խալդիին, թույլ է տալիս նման հարաբերություններ ենթադրել Տուշպուեայի եւ Խալդիի միջեւ:

Ասվածի հիման վրա կարելի է ենթադրել Տուշպուեայի, Շամիրամի եւ Իսմիլ խաթունի ամուսինների՝ Շիվինիի, Նինոսի ու Սորա Մեծ Մելիթի կերպարների համապատասխանությունը: Նինոսը որոշ չափով համապատասխանում է Բելին եւ հատկապես Բարշամին, արեւմտասեմական երկնքի աստծուն, այսինքն, իրոք որ կարող էր որոշ արեւային հատկանիշներ ունենալ, իսկ Խալդիի ու Շիվինիի որոշակի հակադրությունը կարող է բացատրվել «ֆունկցիաների պատերազմի» եւ «երկնային արքայության թեմայի» առասպելների շրջանակներում:

Ծովինարը, որպէս տոհմի նախամայր եւ ջրային դիցուհի նման է Անահիտին, որի իրանական նախատիպը եւս կապված էր ջրի հետ: Դետաբրքիր է նշել, որ Ծովինարի ու հրեղեն ծիու դրվագում վերջինս արեւի աստծու (=ուրարտ. Շիվինի) սիմվոլն է, որը կարող է որոշակի վերակազմության հնարավորություն տալ: Անահիտի եւ Ծովինարի ամուսինների համապատասխանության ենթադրությունը նորից ակնարկում է Արամազդի՝ հայոց գլխավոր աստծու ոչ միայն ամպրոպային, այլեւ արեւային հատկանիշները (հմմտ. Ջեւս, եւ Ջեւսի ու Արամազդի նույնացումը):

Մեծ Միերի նախկին սիրուհի Նանեն, որը Դավթին խորհուրդ է տալիս ինչպէս ձեռք բերել Մեծ Միերի զենքերը (երկրորդ ֆունկցիա), համապատասխանում է նույնանուն դիցուհուն (Օրբելի 1939, 18-19): Այս հիման վրա դիցարանում եւս կարելի է պատկերացնել Միիր-Նանե զույգի գոյությունը: Միերը համապատասխանում է Արա Գեղեցիկին, որը փռյուզական Ատտիսի մի զուգահեռն է: Վերջինիս առասպելում նա իբրեւ կույս հղիացած Նանայի՝ Սանգարիոսի դստեր որդին է, որը մի այլ տարբերակում մեղանշում է նույնանուն հավերժահարս Սագարիտիսի հետ եւ կործանվում (վերլուծությունը տես Աղոնց 1972, 372): Այս փաստերի համադրությունը ցույց է տալիս, որ Նանան պետք է լիներ Ատտիսի սիրուհին, մայր աստվածուհու արտյանուհին, այսինքն նա որոշակիորեն հա-

մապատասխանում է հայկական էպոսի Նանեին, Միերի սիրուհուն: Այսպիսով, Արա Գեղեցիկը նորից կապեր է դրսևորում ոչ միայն Փոքր, այլև Մեծ Միերի հետ, որը ցույց է տալիս ազգածին ավանդության միակ կին հերոսների՝ Շամիրամի ու Նուարդի եւ նրանց հետ համադրելի իսմիլ խաթունի եւ Արմաղանի համապատասխանեցման հիմնավորվածությունը:

Դետաքրքիր է, որ Մեծ Միերի հետ կապված երեք կանացի կերպարները՝ Արմաղանը, Նանեն եւ իսմիլ խաթունը կարող են համադրվել երեք ֆունկցիաների հետ՝ Արմաղանը օրինական կինն է (III ֆունկցիա) Նանեն՝ ռազմի դիցուհու անվանակիցը (II ֆունկցիա) եւ իսմիլ խաթունը հակառակորդ հզոր երկրի թագուհի (I ֆունկցիա):

Դավիթը, որպես հնագույն տարբերակների Մուշի եւ Մուշեղի հետագա զարգացում, ինչպես ասվել է, պետք է կապվի Մուշի դաշտի աստծու՝ Վահագնի հետ: Զատկանշական է այդ կերպարներում հստակապես ռազմական ֆունկցիայի շեշտվածությունը: Մուշի կանացի գուգակիցն է աղջիկ Տարոնը, որը, որպես Խլաթի արքայադուստր, համապատասխանում է ե՛ւ Խանդութին, ե՛ւ Չմշկիկին (տես ստորեւ): Աղջիկ Տարոնը Տարոն գավառի էպոնիմն է: Այստեղ էր կենտրոնացած եւ Աստղիկի պաշտամունքը, այսինքն աղջիկ Տարոնը նաեւ Աստղիկ դիցուհու վիպական համապատասխանությունն է:

«Սասնա ծռերի» տվյալների հիման վրա ուրարտական ավանդության մեջ եւս հնարավոր է վերականգնել «երկնային արքայության թեմայի» առասպելաբանական շարքը, ուր աստվածների արքաները բռնի ուժով փոխարինվում են իրենց իսկ որդիների՝ հաջորդ սերունդի ներկայացուցիչների կողմից:

Մեծ Միերը սպանում է Խլաթի արքայի սեւ ցլին, ապա եւ արքային՝ Սպիտակ դեւին (հետաքրքիր է նշել, որ այս դեւը, որի մարմինը կարծես խնորից լիներ, որոշակիորեն համապատասխանում է լուսնի մասին հայոց ավանդական պատկերացումներին, տես Ղանալանյան 1969, 4-5): Առաջին մոտիվը տիպիկ միթրայական է, բայց պարզորոշ համադրելի ուրարտական տվյալների հետ: Միերն առյուծածեւ էր, ինչպես Խալդիի սիմվոլը, եւ ուրարտական պատկերագրության մեջ հայտնի է առյուծի ու ցուլի կռվի մոտիվը (նույնը եւ հին Միջագետքում): Ցուլը թեյշեբայի սիմվոլն էր, եւ այստեղ կարելի է վերականգնել Խալդիի եւ թեյշեբայի պայքարի առասպելը, ուր հաղթում է Խալդին: Սա նորից ցույց է տալիս սեւ ցուլի խորհրդանշվող թեյշեբայի կապը հնդեվրոպական «սեւ հերոսի» եւ Սանասարի ու Արամի հետ: «Սասնա ծռերի» հերոսների ծննդաբանությունն այսպիսին է՝ ձի, Սանասար, Միեր: Ձին Շիվինիի սիմվոլն է, մյուս երկուսը համապատասխանում են ուրարտ. թեյշեբային ու Խալդիին, իսկ սիմվոլների մակարդակով՝ ցլին եւ առյուծին: Այստեղից ուրարտական աստվածների համար կարելի է վերականգնել Շիվինի, թեյշեբա, Խալդի ծննդաբանական հաջորդականությունը:

Սանասարի հաղթանակը իր իսկական կամ խորթ հոր՝ Բաղդադի Խալիֆի դեմ, իր հոր հետ համադրելի մյուս կերպարի՝ հրեղեն ձիու սան-

ձահարումը, Մեծ Միերի կողմից սեւ ցլի, որը կարող է պատկերացվել նաեւ Թեշուբի ու Թեյշեբայի էպիկական համապատասխանության՝ Սանասարի սիմվոլ, սպանությունը եւ Դավթի պարտվելը Փոքր Միերից մենամարտում, որից քիչ հետո Դավիթը սպանվում է, ցույց են տալիս, որ «Երկնային արքայության թեմայի» աստվածների տարբեր սերունդների ներկայացուցիչների կռվի ու զահաժառանգման առասպելները պահպանվել են հայկական էպոսի բոլոր սերունդների մակարդակներում, որը համապատասխան վերակազմության հնարավորություն է ստեղծում նաեւ ուրարտական մեծ աստվածների համար:

Պետք է նշել, որ այս թեմայի համատեքստում ուրարտական աստվածների եւ էպոսի հերոսների վերջին արքաներն են առաջին ֆունկցիայի ներկայացուցիչներ Խալդին եւ Միերը (ինչպես եւ ազգածին նահապետների շարքում՝ նրանց որոշակիորեն համապատասխանող Արա Գեղեցիկը), որով այս համակարգերը տարբերվում են, ասենք, խեթա-խուռիականից ուր վերջին արքան ամպրոպի աստված Թեշուբն է: Սա կարող է բացատրվել հնդեվրոպական առաջին ֆունկցիայի աստվածներին տիրակալ տեսնելու մտայնությամբ, այսինքն կարող է դիտվել որպես հնդեվրոպական աստվածաբանական մտքի դրսեւորում:

Ազգածին նահապետների եւ էպոսի հերոսների համապատասխանությունները, որոնք քննվել են վերելում, ցույց են տալիս նաեւ նրանց համակարգի կապը մյուսների հետ: Այսպես, Յայկը, որպես դյուցազունների տոհմի նահապետ համապատասխանում է Արամազդին, Արա Գեղեցիկը՝ Միերին, Միիրին ու Խալդիին եւ այլն: Հատկանշական է վերջին կերպարի կրկնակի ներկայացվածությունը՝ Արա Գեղեցիկ եւ նրա որդի Արա, որոնք հիշեցնում են էպոսի երկու Միերներին: Միեւնույն ժամանակ այս համակարգերը բացահայտ ընդհանրություններ են դրսեւորում եւ մյուս վիպաշարերի հետ (հմմտ. օրինակ, Սանասարի եւ Երվանդի, Փոքր Միերի եւ Արտավազդի կերպարային առնչությունները, որոնք հեշտությամբ կարող են լրացվել):

Բերված համապատասխանությունները ցույց են տալիս այս համակարգերի խորն ընդհանրությունները, նրանց ժառանգաբանական կապերը եւ սերտաճումը: Այսպիսով, ուրարտական եւ հայկական դիցաբանների, ազգածին հերոսների, էպոսի եւ մյուս վիպաշարերի տվյալների համապատասխանությունը թույլ է տալիս նրանց քննությունը որպես մեկ միասնական նախատիպի դրսեւորումներ: Իրար փոխլրացնող այս տվյալների համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի խորը վերակազմության եւ կօգնի ավելի լավ հասկանալ այդ բոլոր համակարգերը:

Պետք է նշել, որ այստեղ բերվող համապատասխանությունները հաճախ հարյուր տոկոսանոց, միարժեք համընկումներ չեն եւ չէին էլ կարող լինել, քանի որ բազմաթիվ դարերի ընթացքում քննարկվող դիցաբանական կերպարները եւ համակարգերը ներքին զարգացման, Յայկական կռնաշխարհի միջցեղային եւ արտաքին փոխազդեցությունների, սպա եւ պատմական համադրությունների պատճառով որոշակի, երբեմն էա-

կան փոփոխությունների եւ ֆունկցիոնալ տեղաշարժերի են ենթարկվել: Բայց չնայած դրան, այս համապատասխանությունները ցույց են տալիս միեւնույն առասպելաբանական նախատիպերի խորը պահպանվածությունը Հայաստանում ամենավաղ անցյալից մինչեւ մեր օրերը, ընդ որում այդ համակարգերը, չնայած օտար հզոր ազդեցություններին, պարզորոշ կապեր են դրսևորում այլ հնդեվրոպական տվյալների հետ:

Հետաքրքիր է նշել, որ Սասունի էպոսի եւ հայոց ազգածին նահապետների համակարգերը ե՛լ իրենց կերպարներով, ե՛լ տեղայնացմամբ առավել մոտ են ուրարտական, քան նախաքրիստոնեական հայ աստվածներին: Վերջին համակարգը, ի հակադրություն նախորդների, տեղայնացվում է հիմնականում Մեծ Հայքի հյուսիս-արեւմտյան ծայրագավառներում եւ պետք է որ շարունակեր տեղական հին՝ այսինքն Հայաստանի ավանդույթը (տես նախապես Ա. Պետրոսյան 1997, 146):

Մյուս կողմից, հայկական դիցարանի ձեւավորման վրա էական են եղել հունական եւ հատկապես իրանական ուշ ազդեցությունները (մանրամասն տես Ռասել 1987):

## 17. ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԵՐ

«Սասնա ծռերի» հերոսների անունները հիմնականում հայկական չեն: Դավիթը կրկնում է Աստվածաշնչի պատմական, բայց առասպելականացած թագավորի անունը, եւ կարելի է կարծել թե հատուկ է համապատասխանեցվել նրա հետ (Դավիթը կամ նրա սերնդից մեկը պետք է որպես մեսիա գար եւ փրկեր իրեաներին, հմմտ. հայ Դավթի որդու՝ Միերի կերպարը): Սանասարն ու իր եղբայրը հմապատասխանեցվել են Ատրեստանի թագավորի որդիների հետ (Խորենացի I, ԻԳ), որոնց պատմությունը հայտնի է Աստվածաշնչից (Չորրորդ թագավորաց ժԸ, 36-37. հայ. թարգմանության մեջ՝ Աղբյուրներ եւ Սարասար) եւ բաբելոնյան ու ատրեստանյան սեպագիր աղբյուրներից (Ղ. Սարգսյան, 1989, 42 հուն. Սանասարի նախատիպի անվան իսկական ձեւն է *Sarasar*): Սարասարն այսպիսով, Սասունի հին Սանասունք անվան հետ նմանության պատճառով վերածվել է Սանասարի՝ Սասունի հիմնադրի (Աբեղյան Ա, 382): Աղբյուրները դարձել է Բաղդասար երկվորյակներին նույնահունչ անվանումներ տալու առասպելատեղծ մտայնությամբ (նա նաեւ Բաղդաթ քաղաքի էպոնիմն է): Միերը կրկնում է հայոց Միիր աստծու անունը, որը ծագում է հին իրանական Միթրայի միջին իրանական ձեւից:

Ալնհայտ է էպոսի կերպարների համապատասխանությունը Հայաստանի եւ Սասունի VII-XIII դարերի պատմության հերոսներին (Աբեղյան Ա, 371 հուն.): Աբեղյանը բերում է հետեւյալ համադրությունները՝ Դավիթ Բագրատունի-Դավիթ, Խութեցի Գովհան-Ձեմով Օհան, Վիր)գեն իշ-

խան-Վերգո, Բուդա զորավար-Բաթմանա Բուդա, Բադ ամիրա-Կոզբա-դին, Տարոնի եւ Սասունի տեր Մեհեր-Միեր, Թեոդորոս Ռշտունի-քեռի Ռորոս:

Սրանց կարելի է ավելացնել հետեւյալը: Ըստ Շարաֆ խանի, Դավիթը վրացի էր կամ Վրաստանի փոխարքա, իսկ պորտուգալացի ճանապարհորդների նոթերում Դավիթն է գրավում Խլաթը: Սա կարող է արձագանքը լինել այն եղելության, որ Բագրատունիների վրացական շյուղի ներկայացուցիչ է հայ-վրացական խառը բնակչությամբ երկրամասերի հզոր տիրակալ Դավիթ Կյուրոպաղատը X դարի վերջին փորձ է անում գրավել Խլաթը (հմմտ. Հարությունյան, Բարթիկյան 1975, 100-1):

Ինչպես եւ միշտ նման դեպքերում, պատմական անձինք համապատասխանեցվել են էպիկական կերպարներին (հմմտ. նույն երեւոյթը Արտաշեսի ու Արտավազդի վեպում), ընդ որում առասպելաբանական անուններով հերոսները համադրվել են իրենց նախօրինակների կերպարների հետ (Դավիթ-աստվածաշնչյան արքա՝ մեսիա, Օհան-Յովհաննես Մկրտիչ-սուրբ Կարապետ, Մեհեր-Միիր աստված): Բայց, չնայած պատմականացմանը, էպոսի կառուցվածքը մնում է նույն առասպելաբանականը, միանգամայն համապատասխան «Վիպասանքին» (Աբեղյան I, 426) ազգածնության առասպելին եւ հնդեվրոպական առասպելաբանության վերակազմություններին:

## 18. ԴԱՎԻԹ ԵՎ ՄՈՒՇ

Հաշվի առնելով «Սասնա ծռերի» կառուցվածքի եւ կերպարների հնդեվրոպական ծագումը, կարելի է պնդել, որ հերոսները հնում ունեցել են այլ անուններ: Էպոսի եւ ազգածնության առասպելի հերոսների համապատասխանությունն էլ կարող է հուշել նրանց նույնությունը հնում: Էպոսի՝ Կեղծ-Վակիդիից եւ «Շարաֆ-Նամեից» հայտնի հնագույն տարբերակների անուններն արդեն թույլ են տալիս հաստատել եւ ճշտել այդ համապատասխանությունները: Այստեղ Դավթի փոխարեն հանդես է գալիս Սասունի թագավոր Սանասարի որդի Մուշը, իսկ Խանդուբի փոխարեն՝ Խլաթի թագավորի դուստր Տարոնը (Աբեղյան Ա, 385 հտն. Մ. Հարությունյան, Բարթիկյան, 1975. Տեր-Ղեւոնդյան, 1978. արաբերեն տեքստում անուններն աղավաղված են, եւ այստեղ ներկայացվում են ուղղված ձեւերով): Տարոնը Տարոն գավառի էպոնիմն է, Մուշը՝ Մուշ քաղաքի: Տարոնին փախցնում է Սարուանդի որդի Բակուրը, որը համապատասխանում է Խորենացու հիշած Սեմ-Չրվանի որդի Տարբանին (Խորենացի I, 2): Բակուրը եւ Տարոնը իսլամ են ընդունում: Տարոնն իբր մնում է մահմեդական եւ մեծ վճաններ հասցնում հայերին, բայց ըստ Մ. Աբեղյանի նա պետք է վերադառնար հայոց կողմը ինչպես հին վեպի Տիգրանուհին եւ ամուսնանար Մուշի հետ, որը հետագայում հաստատվեց նոր տվյալների համադրմամբ (Աբեղյան Ա,

392. Տեր-Ղեւոնդյան, 1978, 267-68): Աբեղյանը Մուշին համապատասխանեցնում է հին վիպական Մուշեղի հետ (այդ մասին տես ստորել): Բայց, ինչպես ասվել է, ազգածնության առասպելի Արամ-Մշակ գույրն է լավագույնս համապատասխանում Սանասար-Մուշ հաջորդականությանը: Մշակը Արամի հաղթանակից հետո Կապադովկիայում թողնված տոհմակիցն է եւ կուսակալը, որի անունը հենց Մուշի անվանականն է՝ Մուշ-ակ (հմմտ. Հայկ-Հայկակ, աստղ-Աստղիկ նվագական ձեւերը հայկական ավանդական անվանացանկում): Այսպիսով, Մուշ (Մշակ) եւ Մուշեղ անունների նմանության պատճառով նրանց տարբեր կերպարները միավորվել են:

Ասորեստանյան աղբյուրները Ե.Ք. XII դարում հիշում են մուշկերի եւ ուրունեացիների ցեղերը, որոնք արշավում եւ հաստատվում են Ալզի (հայ. Աղձնիք) երկրի շրջանում (Դյակոնով 1968, 123-24, 214 հտն. Ն. Հարությունյան, 1985, 146-47, 212), այսինքն Սասունի եւ Տարոնի մերձակայքում: Հայագիտության մեջ ընդունված է, որ Արամի եւ Մշակի առասպելն արտացոլում է այս դարաշրջանի իրողությունները, իսկ արմենների (հայերի) եւ մուշկերի էպոնիմներ Արամի եւ Մշակի ազգակցությունը՝ այդ ցեղերի առնչությունները (տես օրինակ, Մանանդյան Ե, 559. ԳՊ 1, 234, Գ. Սարգսյան, 1988, 59):

Հինարեւելյան աղբյուրներում մուշկեր են կոչվել փոյուզացիները, որոնք հաստատվել են խեթական կործանված պետության տարածքում: Աղձնիքի շրջան արշաված «արեւելյան մուշկերի» մասին տարբեր կարծիքներ կան՝ նրանց համարում են Փոքր Ասիայի կամ Հայկական լեռնաշխարհի բնիկներ, փոյուզական գաղթականներ, կամ քարթվեական ցեղ, իսկ Ի. Դյակոնովը, Ելնելով հայերի եւ փոյուզացիների ազգակցության տեսակետից, այս մուշկերին համարում է հենց հնագույն հայկական տարրը (Դյակոնով, 1968, 222 հտն. այս տեսակետը չի ընդունվում հարցին իրազեկ մյուս գիտնականների կողմից): Կարծիք կա, որ Մուշ քաղաքի անվանումը եւս կապված է մուշկերի հետ (անդ, 223):

Հայկական ավանդությունը Արամին եւ Մշակին միասին հիշում է Կապադովկիայում, բայց տեղանվանաբանական տվյալները այս երկու անվանաբանական տարրերը միավորում են Մուշ-Տարոնում եւ հարակից տարածքներում, ուր ուրարտական ժամանակներում հայտնի էին Ուրմե, Արմե եւ Ներքին Ուրումու երկրանունները (հմմտ. Արամ, արմեններ): Հատկանշական է, որ Մուշի դաշտով է հոսում Արածանին (հին Արծանիա, հմմտ. \*arg-) եւ այստեղ եւս այսպիսով հանդիպում են հնդեվրոպական «սեւի» եւ «սպիտակի» առասպելի անվանացանկի անունները:

Այս տվյալների հետ համադրելի է XVII դարի թուրքական հեղինակ Էվլիա Չելեբիի հաղորդած ավանդությունը Մուշի վերաբերյալ: Ըստ այդ տեղեկության, Նեմրուդը (Աստվածաշնչի Նեբրովթը) Մուշի դաշտում մի հսկա մուկ է ստեղծում, որը բոլոր Նեմրուդներին (չար ոգիներին) ուտում է, իսկ Մուշի բնակիչներին ոչնչացնում: Այդ պատճառով քաղաքը կոչվում է Մուշ (իբր պոսկ. «մուկ»): Այն քարայրի, որտեղից դուրս է եկել հիշյալ մուկը, տեսակ-տեսակ մկներից ոչ մի երկրում չկա: Բայց Ալեքսանդր Մակեդոնացու Ֆիլկոս անունով բժշկի կախարդությամբ Մուշի դաշտի մկները վերա-

ցել են (Չելեբի 1967, 169-70):

Փռյուզագացիների հիմարեւելյան մուշկու ցեղանունը համարվում է կապված արեւմտափոքրասիական Մյուսիա (Միսիա, Տրոյայի շրջանը) երկրանվան հետ (Դյակոնով 1968, 222): Ըստ հունական առասպելաբանական տվյալների, կրեթացիների մի հատվածը գաղթում է Փռյուզիա, եւ Ապոլլոնը խորհուրդ է տալիս նրանց հաստատվել այնտեղ, ուր մթության մեջ հարձակման կենթարկվեն երկրածինների կողմից: Նույն գիշերը նրանց կաշվե իրերը կրծոտում են դաշտային մկները: Գաղթականներն այստեղ կառուցում են Ապոլոն Ամինթեւի տաճարը, որի շուրջը եւ ձեւավորվում է Ամինթե («դաշտային մուկ» արմատից) քաղաքը: Հետագայում այստեղ ստեղծվում է Տրոյան (տես օրինակ, Գրեյվս 1992, 462, հտն. աղբյուրներով): Այս եւ Տրոյայի հետ կապված մի շարք այլ ավանդություններ համապատասխանում են Մուշի լեգենդին («մկնային») Ապոլլոնը կարող էր որպէս մուկ պատկերացվել, նա նաեւ բժշկութեան հովանավորն էր, հմնտ. նաեւ հույների կոտորածը նրա կողմից «Իլիականում» ապա եւ մկների ոչնչացումը, տես Լոսեւ 1957, 278. Տոպորով, 1977, 55 հտն.): Արեւմտափոքրասիական այս, եւ մի շարք այլ փաստերի քննարկումը ցույց է տալիս Ապոլլոնին հնդեկցող մուսանների եւ Մյուսիա երկրանվան հավանական ծագումը հնդեվրոպական \*mūs- «մուկ» արմատից (Տոպորով 1977ա, 73 հտն.):

Ապոլլոնին, որպէս արվեստների, բանաստեղծութեան եւ երաժշտութեան աստծու, համապատասխանում է հայոց սուրբ Կարապետը, որի պաշտամունքը կենտրոնացած էր Մուշի դաշտում եւ որը կոչվում էր Մշո սուլթան: Մուշ, մուսաներ, Մյուսիա անվանումների հավանական կապը հնդեվրոպական «մուկ» արմատի հետ ուղղակի նույնացնում է Մշո սուլթան սուրբ Կարապետին եւ մուսանների (մկների) ու Մյուսիայի աստված Ապոլլոնին (այս ընդհանրությունները ցուցադրվել են է. Պետրոսյանի աշխատանքներում, տես հատկապէս է. Պետրոսյան, 1989, 7-9): Ինչպէս նշվել է, Մյուսիայում հիշվում է Արամի հետ համադրելի Արիմուս անունով մի լեգենդար թագավոր (Ստրաբոն XII, 4, 11, ըստ Քսանթոսի), այսինքն այստեղ եւս կարելի է տեսնել Արամ-Մշակ (=Մուշ) հայկական զույգի զուգահեռը: Տեսականորեն համեմատելի են նաեւ Տարոն եւ Տրոյա, խթթ. աղբյուրներում Տարուիսա, անունները (տես ստորեւ): Այսպիսով, Մուշ քաղաքանունը պետք է իրոք որ ծագեր հնդեվրոպական \*mūs- արմատի մի տարբերակից (հնարավոր է, օրինակ, \*mūs-kho- ածանցյալ նախածելը), կապված մուշկների ցեղանվան հետ, եւ չի հանգում պարսկական նույնարմատ եւ նույնահունչ բառին:

Հնդկական առասպելաբանութեան մեջ հայկական Արամի զուգահեռ Ռաման (Պարաշուրաման) բնարգավա էր, այսինքն Բիրիգուի տոհմից: «Պուրանաներում» եւ «Մահաբհարատայում» պատմվում է, որ նա սպանում է հայհայանների թագավոր «սպիտակ» Արջունային, ապա ոչնչացնում նրա որդիներին, տոհմը եւ դասը (ռազմիկ-կշատրիաներին): «Կերալտապատիում» Պարաշուրամային է վերագրվում Մալաբարի հիմնումը, որի չորս երկրներից մեկը կոչվում էր Մուշիկա (հին հնդ. «մուկ»): Կարծում են, որ Բիրիգուի (Bhṛgu) տոհմի անվանումը կապված է փռյուզացի-

ների ցեղանվան հետ (հնուն՝ բրիգ), իսկ մուշիկան Բիրիգուի ցեղերից մեկն էր (Դիկչիտ, 1960, 436-40. տես նաև Կոսամբի 1968, 89. Չատերջի 1977, 51): Արամի հաջորդ Մշակը փոյուզական մուշկ ցեղանվան էպոնիմն է ըստ հայ գիտնականների: Արգոնավորդները, որոնց մեջ է հիշվում եւ հայ-արմենների էպոնիմ Արմենոսը, Այա-Կուխիդա եւ գալիս Փրիքսոսի հոգու հետեւից, որի սրբարանը գտնվում էր մոսքերի երկրում: Այս առասպելներում Բիրիգու, Բհարգավա, Փրիքսոս, Մուշիկա, Մշակ, մոսքեր, Մուշ, Մյուսիա անվանումները կարող են դիտարկվել որպես փոյուզական երկու հայտնի ցեղանունների արտացոլումները (Brig-, Bryg-, Phryx, որոնք ենթադրում են \*bhrǵ- տիպի մի նախածեւ եւ mus-, musa-, musk-, moskh-):

Բերված հունական, արեւմտափոքրասիական, կոլխիդյան, հայաստանյան եւ հնդկական առասպելների ընդհանուր ծագումն ակնհայտ է: Ակնհայտ է այդ ավանդությունների էթնիկական մեկ հիմքի նույնությունը եւս՝ փոյուզական եւ ազգակից ցեղեր, ընդ որում ամենուրեք խոսվում է նոր երկրում հիմնավորման մասին: Արեւելյան՝ հայաստանյան մուշկերին սովորաբար համարում էին բալկանյան գաղթականներ, բայց այդ կարծիքը հնագիտորեն չի հաստատվում (Քոսյան 1996), եւ այլեայլ տվյալներ խոսում են նրանց Յայաստանում գտնվելու մասին արդեն խեթական կայսրության դարաշրջանում, ուրեմն՝ նաեւ մինչ այդ կայսրության կազմավորումը (Ա. Պետրոսյան 1991 թ. 1997, 65-102): Յնդկական Ռամա անվանածեւն էլ իր հնչյունով արխայիկ է եւ ոչ փոխառված հայ. Արամից կամ փոքրասիական Արիմուսից, որոնցում նախածայն ա-ն երկրորդային, այդ լեզուների օրինաչափություններին բնորոշ հավելում է:

Ըստ ավանդության, հայերին օտարները սկսում են կոչել արմեններ Արամի անունով (խորենացի I, ԺԲ): Յամենատական քննությունը ցույց է տալիս, որ Կոլխիդայի հետ համապատասխանեցված Այա երկրի եւ Ռամայի թշնամի հայիայաների լեզենդար ցեղի անվանումները պետք է կապվեն հայերի ցեղանվան հետ, այսինքն հնդկական առասպելի նախնական տարածքը Յայաստանն է (տես հնդիկ գիտնականների հղված աշխատանքները), իսկ հայկականն ու բալկանա-փոքրասիականները կարող էին ծագել կամ իրարից, կամ մեկ ընդհանուր կենտրոնից (հմմտ. հնդեվրոպական նախահայրենիքի եւ գաղթերի ուղղությունների վերաբերյալ տարբեր կարծիքները): Ի միջի այլոց, հայ-արեւմտափոքրասիական այս ակնհայտ զուգահեռները կարող են որոշակիորեն բացատրել հայ-հռոմեական բերված բացառիկ ընդհանրությունները (Ա. Պետրոսյան 1997, 76 հտն. ավանդական տվյալներով ե՛ւ էտրուսկներին ե՛ւ հռոմեացիներին արեւմտափոքրասիական՝ յուդիական-տրոյական ծագում է վերագրվում. տես, օրինակ, Յերոզոտոս I, 94, Լիվիոս I, 1), որը ցույց է տալիս Իտալիայի եւ Փոքր Ասիայի հնագույն կապերը:

Տարբանը, Տարոն գավառի անվանադիր նախնին, որն ըստ խորենացու բերած ավանդության, առաջինն է բնակեցնում Յայաստանը, հայագիտական գրականության մեջ դիտարկվում է որպես Յայաստանի նախահայկական բնակչության էպոնիմ (Տեր-Մկրտչյան 1979, 412-13, Գ. Սարգսյան 1988, 108 հտն. 121 հտն.): Մյուս կողմից, Կեղծ-Վակիդիի տվյալներով, ինչպես ասվեց, Տարոնի էպոնիմն է աղջիկ Տարոնը, որի ամուսինը համա-

պատասխանում է Տարբանին, այսինքն այս երկուսը հանդես են գալիս որպես Տարոնի (եւ Դայաստանի) հին բնակչության էպոնիմներ:

Տարոն գավառը Վահագնի՝ ամպրոպային հատկանիշներով աստծու պաշտամունքի կենտրոնն էր: Դաշվի առնելով, որ բնակչության լեզվի փոփոխման ժամանակ անունները փոխվում են, բայց պաշտամունքները հաճախ շարունակում մնալ նույնը, Տարոն (հին Տարան) անվանումը կարելի է համարել խաթական նախախեթական ամպրոպի աստծու Թարս անվան հետ (որը խեթերեն հաղորդվել է Tarawa- ձևով. տես Լարոշ 1947, 33), դիցանուններին եւ տեղանուններին բնորոշ -ն- տարրը պարունակող ածանցով (տես Ա. Պետրոսյան 1997, 79. հմմտ Ա. Դարությունյան 1982, Ա. Պետրոսյան 1991բ): Սա կարող է օգնել բացահայտելու Տարոնի հնագույն բնակչության էթնիկական պատկանելության խնդիրը: Դետաքթիք է նշել, որ կարծում են, որ այս դիցանունը փոխառված է մի ինչ-որ հնդեվրոպական, բայց ոչ անատոլիական լեզվից (հմմտ. անատոլ. Tarhun-, տես Եփրատե, Ստրախով 1987, 149-53): Դա կարող էր լինել այն լեզուն, որից փոխառվել էր նաեւ պուրուլի ծեսի անվանումը, այսինքն ինչ-որ թրակյան կամ փոյուգական բարբառ, թերեւս հենց «արեւելյան մուշկերի» լեզուն:

Տարոնի այս ստուգաբանությունը կարող է հաստատվել այնտեղ հոսող Մեղրագետի (կամ Արածանու վերին հոսանքի) հնագույն Տելեբոս անվանումով (Քսենոփոն IV, 4, 3 տես Տիրացյան 1970, 225-26): Այն ակնհայտորեն կապված է խաթական Տելեպիմուսի՝ ամպրոպի աստծու որդու անվան հետ, որը հանդես է գալիս նաեւ Տելեփ-, Տելեբ- կրճատ ձևերով:

Տելեպիմուսը համարվում է հունական Ապոլոնի համապատասխանությունը: Առասպելում նա անհետանում է, եւ նրան կարողանում է գտնել միայն մեղուն: Tel(e)p/b- տարրը հայտնի է բազում ժողովուրդներին մեղավարության անդամներին տեղանուններից (Տոպրով 1975. հմմտ. Մեղրագետ): Այս անունը պահպանվել էր նաեւ Փոքր Ասիայի արեւմուտքում, ուր հիշվում է Մյուսիայի Տելեփոս արքան, որը հույներին ցույց է տալիս Տրոյայի ճանապարհը: Նա հայրն էր Տարբոնի (հմմտ. անատոլ. Tarhun- «ամպրոպի աստված») եւ Տյուրսենոսի, որոնցից երկրորդը էտրուսկների առասպելական նախահայրն է, իսկ մյուսը՝ էպոնիմներից մեկը (=Տարբլիմիոս): Առեշ, Տելեբոսա Տարոն անվանումները համապատասխանում են արեւմտափոքրասիական Մյուսիա, Տելեփոս, Տրոյա ձևերին (առաջին երկուսը՝ բացահայտորեն, իսկ Տրոյայի՝ հին Տարուիսա ձևի հնարավոր կապի վերաբերյալ խաթական Տարու դիցանունի հետ տես Տիշլեր III, 8, 233): Տրոյայի մյուս՝ Իլիոս, Իլիոն (խեթ. Վիլուսա) անունների հետ համադրելի է Տարոնի սուրբ Կարապետի վանքի Գլակ կոչումը (< \*wil):

Տարբան անվան լավագույն գուգահեռը նույնպես արեւմտյան Փոքր Ասիայից է՝ կարիական Tarbane կամ Trybane, թերեւս ազգակից լատ. Տարպեյոս, Տարպեյա անուններին (Գինդին 1981, 93-95): Տարպեյան Տարպեյոսի՝ հռոմեական կայսրի պետի դուստրը կամ հենց պետն էր, որը դավաճանում է հռոմեացիներին, մի տարբերակում՝ սաբինուսի, որը հակառակ իր կամքի ամուսնանում է Ռոմուլոսի հետ (Պլուտարքոս, «Ռոմուլոս» XVII. հմմտ. Խանդուքի եւ զորավար աղջիկ Տարոնի կերպարները): Ի միջի այլոց, այս անունը համարվում է լատ.-էտրուսկ. Տարբլիմի-

ոսի սաբինական ձեւը (Դյունեզիլ 1947, 281), այսինքն՝ ի վերջո հանգեցվում է անատոլիական ամպրոպի աստծու անվանը:

Այսպիսով, էպոսի հնագույն, վերականգնվող տարբերակում պետք է որ պատմվեր հայոց, հատկապես Սասունի եւ Մուշի շրջանների ազգածնության, տարբեր էթնիկական տարրերի բախումների եւ միավորման մասին, ուր Տարբանը, Մուշ-Մշակը եւ Սանասար-Արամը պետք է խորհրդանշեին «նախահայկական» բնակչությունը, մուշկերին եւ արմեններին: Կոնկրետ Մուշի, Սասունի եւ Աղծնիքի համար այդ դարաշրջանն էր Ն.Ք. XII դարը, բայց միեւնույն էթնիկական տարրերի շփումները կարող էին տեղի ունենալ Գայկական լեռնաշխարհի այլ շրջաններում, օրինակ, Գայասայի եւ հարակից տարածքներում, նաեւ շատ ավելի վաղ: Դժոմի պատմության մեջ հռոմեացիների, էտրուսկների եւ սաբինացիների կողմից միացյալ եռամաս հասարակության կերտումը համարվում է «Ֆունկցիաների պատերազմի» արդյունքում բնականոն «եռաֆունկցիոնալ» հնդեվրոպական հասարակության ձեւավորման մի առասպել, ուր հիշյալ ցեղերը հանդես են գալիս որպես համապատասխանաբար առաջին, երկրորդ եւ երրորդ ֆունկցիաների կրողներ (տես, օրինակ, Դյունեզիլ 1992, 87-92 եւ այլուր): Այստեղ եւս ակնհայտ են հնդկական եւ հայկական համապատասխանությունները՝ Պարաշուռաման ծագումով քուրմ է, որն ապրում է ռազմիկի կյանքով եւ վերացնում ռազմիկների դառը, այսինքն Ռաման եւ հայհայաները առաջին եւ երկրորդ ֆունկցիաների կրողներ են, եւ Մուշիկային, էթե նրա համար եւս տեղ ենթադրենք ֆունկցիոնալ համակարգում, մնում է երրորդ ֆունկցիան: Գայկական առասպելներում Գայկը, որպես հիմնադիր, թերեւս առաջին, իսկ Արամն ակնհայտորեն ռազմական՝ երկրորդ ֆունկցիայի ներկայացուցիչներ են (Անյան 1982. Դյունեզիլ 1994, 133): Գատկանշական է Մշակի անվան հետ համընկնող մշակ (մուշ-ակ) «հողագործ, այգու աշխատավոր» բառը, որն ուղղակի մատնանշում է երրորդ՝ համայնական ֆունկցիան (այս բառն ունի բազմաթիվ զուգահեռներ քարթվելական եւ կովկասյան լեզուներում՝ տես Աճառյան 19, 335): Եթե այս արմատն ինչ-որ կերպ կապված է մուշկերի ցեղանվան հետ, այդ դեպքում մուշկերը տեսականորեն կարող են դիտարկվել որպես Կովկասի եւ Գայաստանի հնագույն երկրագործական բնակչությունը, որին նվաճել են մյուս ազգերը: Այդպիսին կարող էին լինել այսպես կոչված կուր-արաքսյան մշակույթի կրողները, որոնք Ն.Ք. IV-III հազարամյակներում տարածված էին Գայկական լեռնաշխարհում եւ Կովկասում:

Ինչեւէ, ավանդության զարգացման եւ իր մեջ նոր շերտերի ընդգրկման ընթացքում հաճախ նկատվում է կերպարների ֆունկցիոնալ տեղաշարժ, եւ միարժեք համեմատությունները թերեւս մեթոդապես խոցելի են, հատկապես եթե հաշվի առնենք հենց հնդեվրոպական երեք ֆունկցիաների տեսության ոչ անթերի լինելը, բայց ակնհայտ, արդեն վերլուծված զուգահեռների գոյությունը նույնպես հիմնավորում է համադրությունը:

Մյուս կողմից, ակնհայտ են նաեւ Տարբանի եւ Գայկի առասպելների պատմական հիմքերը, թեւ բազմաթիվ այլ ազգեր եւս ունեն իրենցից

առաջ իրենց երկրում ապրած, հաճախ արտասպվոր հատկանիշեր ունեցող մարդկանց մասին ավանդություններ (Տարբանի առասպելի քննարկումն այդ համատեքստում տես Ա. Պետրոսյան, 1991 գ): Տարբանից Տարոն ուղղակի անցումը դժվար է պատկերացնել, եւ այստեղ թերեւս իրար են գումարվել երկու տարբեր լեզվական հիմքերով ավանդություններ: Հաշվի առնելով Տարոնի եւ Վահագնի բացահայտ կապը եւ երկրների ու ժողովուրդների առասպելական հիմնադիրների հաճախակի համադրությունն ամպրոպի աստծու հետ, Տարբան անունը եւս կարելի է հանգեցնել մանատլիական Tarhuh-ին, որը հունարենի տիպի մի լեզվում ընկալվելով որպէս Tarkwo կարող էր վերածվել Տարպանի (> Տարբան. հմմտ. նույնատիպ՝ զարգացումը սաբիներենում): Հատկանշանական է, որ ըստ մի կարծիքի, անատլիական լեզուների կրողները հնում կարող էին ապրել Վանա լճի շրջանում (Գամկրելիձե, Իվանով 1984, 896, հմմտ. նաեւ Վան-Տուշպայում տեղայնացվող ուրարտական արեւի աստծու խեթական անունը):

Տարբանի, Հայկի ու նրա սերունդների առասպելները ցույց են տալիս այս տարածքում ցեղերի հերթագայության այսպիսի շարք՝ Տարբանի կերպարով խորհրդանշվող «նախայկյան բնակիչներ», հայ-արմեններ (հմմտ. Հայկ, Արամ, ապա եւ Արմե, Ուրմե տեղանունները) եւ Մշակի ցեղը՝ մուշկեր: Այս տվյալներն անհրաժեշտ է քննել հնդկական, հունական, հռոմեական նշված առասպելների զուգահորոյամբ, հաշվի առնելով, որ այս հերթականության նաեւ կառուցվածքային, ֆունկցիոնալ էութունը, ինչպէս Հռոմի դեպքում է: Հռոմեական եւ հայկական տվյալների մեծ նմանությունը ցույց է տալիս նրանց ընդհանուր ծագումը մեկ կենտրոնից, որտեղի առասպելաբանական անունները եւ էթնիկական իրադրությունն է թերեւս վերադրվել տեղական շերտի վրա: Նույնը վերաբերվում է նաեւ հնդկական, կոլխիդյան, արեւմտափոքրասիական ու բալկանյան ավանդություններին: Հռոմում լատիններն ու սաբինները իրար ազգակից հնդեվրոպական ժողովուրդներ էին, իսկ էտրուսկները՝ ոչ հնդեվրոպական, բայց նրանց էպոնիմի Տարքոն, Տարքվիմիոս անունները հանգում են անատլիական-հնդեվրոպական դիցանվանը (Նեմիրովսկի 1983, 214): Հետաքրքիր է նշել, որ «նախահայկյան բնակչության» անունները ծագումով հնդեվրոպական, բայց ձեւավորմամբ՝ խաթալանի խեթական ձեւերն են հիշեցնում (Տարավ-, Տելեբաս), եւ «ուրարտական» չեն:

Այս հարցերը պետք է քննվեն հատուկ, հայոց ազգածագման խնդիրներին նվիրված համալիր աշխատանքներում, իսկ այստեղ պետք է նշել, որ էպոսի տվյալներն են, որ կապ են հաստատում Արամի ու Մշակի, Սասնարի ու Մուշի եւ Տարոնի առասպելների, ապա եւ հայ, այլ հնդեվրոպական եւ հատկապէս հռոմեական ավանդությունների միջեւ: Սա ցույց է տալիս նրանց մեծ աղբյուրագիտական արժեքը նաեւ հայոց ազգածագման հարցում, թույլ տալիս առաջ անցնել հին ավանդությունների միարժեք վերլուծություններից եւ այս խնդիրներում եւս կիրառել համեմատական լեզվաբանութան եւ առասպելաբանութան ժամանակակից տվյալներն ու մոտեցումները:

## 19. ԴԱՎԻԹ, ՄՈՒՇԵՂ ԵՎ ՄՈՒՐՍԻԼԻՍ

Մ. Աբեղյանը արաբական աղբյուրների Մուշիմ՝ էպոսի գլխավոր հերոս Դավթի նախորդին, ինչպես ասվեց, նույնացնում է «Պարսից պատերազմ» եւ «Տարոնի պատերազմ» հին վեպերի գլխավոր հերոս Մուշեղ Մամիկոնյանի հետ, որի տոհմը եւս սերում էր հեռու երկրներից եկած երկվորյակային տիպի կերպարներից (Աբեղյան Ա, 394-95):

Մուշեղի կերպարը պահպանվել է «Սասնա ծռերի» մի տարբերակում, ուր նա, իր անվան եւ Մուշի համահնչունության պատճառով, դարձել է Մուշ քաղաքի էպոնիմը (Սժ, Բ I, 196-97. Մամիկոնյանները Մուշ-Տարոնի տերերն էին): Մուշեղը Պապ թագավորի ժամանակակիցն էր, որոշակիորեն հակադրված նրան (հատկապես պարսից արքայի կանանց զգատելու պատճառով), եւ սպանվում է հաջորդ՝ Վարազդատ թագավորի կողմից: Մուշեղի դիակը դնում են մի բարձր տեղ, որ արաբագետը վերակենդանացնեն նրան (Բուզանդ V, L2), այսինքն նա միակ հայտնի հայ հերոսն է որը կրկնում է Արա Գեղեցիկին եւ այսպիսով համապատասխանում նաեւ Փոքր Մհերին:

Մուշեղ անունը ծագում է խեթական Մուրսիլիս անունից: Այս նույն անունն էր կրում նաեւ արեւմտափոքրասիական Լյուդիա պետության (որի կազմի մեջ էին մտնում Մյուսիան եւ Մեյոնիան) լեգենդար արքաներից մեկը՝ Մյուրսիլոսը: Նրան, կնոջ դրոշմամբ, սպանում է եւ կնոջն ու գահին տիրանում նրա մերձավոր Գյուգեսը (Յերոդոտոս I, 7-12): Նիկոլայոս Դամասկոսցու մոտ (VI, 56)՝ թագավորը սկզբից կասկածում է Գյուգեսին, ուղարկում գազանների, հատկապես վարազի որսի, պապ վստահում իր հարսնացուին բերելը, բայց վերջինս դավում է նրան եւ տիրանում կնոջն ու գահին:

Գյուգեսի անունը կարող է իմաստավորվել որպես «պապ», հմմտ. խեթ. *huhha-* եւ Յեսիքիոսի մոտ՝ *gygai. pappoi*: Այս ստուգաբանությունը վիճարկվում է, բայց այն ակնհայտ է առնվազն անվան ժողովրդական մեկնաբանության տեսակետից (տես Գինդին 1967, 137, Տիշլեր I, 260-61, Պուլիվե III, 357): Ի միջի այլոց, հայոց Պապ թագավորի անունը եւս բերես իրանական (Փերիխանյան 1993, 71-73), բայց պարզորոշ է նաեւ նրա հայերեն իմաստավորումը: Ըստ Յերոդոտոսի, մյուսիացիները օգնություն են խնդրում Լյուդիայի արքայից մի վարազի դեմ, որի որսի ժամանակ էլ զոհվում է թագաժառանգ Ատյուսը (Յերոդոտոս I, 36-43): Այս մոտիվը բացահայտ կերպով համապատասխանում է «Շահնամեում» հայոց իշխան Մուշեղի՝ վարազների դեմ պարսից արքայից օգնություն խնդրելուն (հայ. թարգմ. Ֆիրդուսի 1962, 177-81): Ի միջի այլոց, Վարազդատ (հմմտ. վարազ) արքան լեգենդար կերպար է, որի պատմականությունը վկայված չէ օտար աղբյուրներում: Այստեղ արդեն պարզորոշ ուրվագծվում է պատմականացած առասպելը. պապը՝ մեծ, երկնային աստված է, որը վարազի տեսքով սպանում է իր որդուն՝ հմմտ. Ադոնիսի, փռյուգացի Ատտիսի (այս անվան եւ կերպարի մի տարբերակն է թագաժա-

ռանգ Ատյուսը) առասպելները, որոնք համապատասխանում են հայ Արայի, Արտավազդի եւ Տրդատի ավանդություններին (տես հատկապես Մատիկյան, 1930, 224-30 եւ Ադոնց 1948. Ա. Պետրոսյան 1997, 44-45):

Լյուդիացի Մյուրսիլոսի մյուս անունն էր, ինչպես նշվել է, Կանդավլ-լես: Այս անունը Յերմեսի Լյուդիական-մեռնիական կոչումն էր՝ «շուն խեղդող»՝ նշանակությամբ: Սա «շուն սպանող» հերոսի արեւմտափոքրասիական եւ իլիրիական-բալկանյան անունն էր, վերագրված նաեւ պատերազմի գայլային աստծուն, հնդեվրոպական այդ հերոսի վերակազմության կարեւոր հիմքերից մեկը (Իվանով, 1977, 181 հտն.):

Յերմեսի մշտական մակդիրն էր Արգոսասպան: Նա սպանում է Արգոսին (հմմտ. \*arg-՝ «սպիտակ»), տես, օրինակ, Շանտրեն I, 104), որը հսկում էր կովի վերածված Իոյին, Յերմեսի հոր՝ Ջեսի սիրուհուն: Այս սյուժեն ուղղակի համապատասխանում է հնդկական առասպելին, ուր Ռաման սպանում է Արջունային իր հոր կովի հորթը փախցնելու համար: Իհարկե, Յերմես եւ Ռամա անունները հնարավոր չէ մեկ հիմքի հանգեցնել (Յերմեսի ստուգաբանության վերաբերյալ տես Ֆրիսկ I 563-64. Շանտրեն I, 373-74): Բայց պետք է կարծել, որ եղել է տեղական մի աստվածություն, որը Յերմեսին նման անուն ունենալու պատճառով նույնացվում է նրա հետ, եւ այստեղ առաջին հերթին կարելի է հիշել մյուսիսիա-մեյոնիական լեգենդար Արիմուս թագավորին, հայ Արամի եւ հնդ. Ռամայի արեւմտափոքրասիական համապատասխանությանը: Ի միջի այլոց, Վ. Իվանովն իր աշխատանքներում «շուն սպանող» հերոսների համատեքստում հիշում է Արա Գեղեցիկի տիպի կովկասյան կերպարներին, բայց ցավոք, նրան հայտնի չէ Մուշեղի առասպելը, որը համապատասխանում է մի կողմից «շուն սպանող» Մյուրսիլոս-Կանդավլեսին, իսկ մյուսից՝ շների կողմից լիզվող-վերակենդանացող Արա Գեղեցիկին: Մուշեղն, այսպիսով, իրենում ամփոփում է ե՛ւ էպոսի գլխավոր հերոսի, ե՛ւ վերածնվող կերպարի հատկանիշները: Նա Դավթի եւ Փոքր Միերի կերպարների հին նախօրինակն է (ավելի ճիշտ՝ նախօրինակներից մեկը), Մուշեղ անունով պատմական Մամիկոնյան իշխանների մի վիպական մարմնավորումը, որը շարունակում է այդ անունով շատ ավելի հին, առասպելական ու պատմական կերպարների հիշողությունը: Մյուրսիլոս արքայի Կանդավլես առասպելական անունը ցույց է տալիս այդ անվան եւ կերպարի պատմականացումն արդեն Յերոդոտոսի ժամանակ (հայ Մուշեղից շուրջ հազար տարի առաջ): Այդ նույն առասպելը պահպանվել էր եւ Մուշի դաշտում, եւ պատմական Պապ թագավորի ու Մամիկոնյանների տոհմական Մուշեղ անունները հիմք են հանդիսացել նրա պատմականացման համար արդեն վաղ միջնադարյան Յայաստանում:

Գ. Դովգայլոն ցույց է տվել Մյուրսիլոս-Կանդավլեսի եւ հին շրջանի՝ Ն.Ք. XVI դարի խեթական թագավոր Մյուրսիլիս առաջինի մասին տվյալների բացահայտ նմանությունը (Դովգայլո 1976. 1980, 103 հտն., հարցի գրականությամբ): Մյուրսիլիսը հարթական արշավանքից վերադառնալիս սպանվում է իր քրոջ (հնարավոր է կարդալ նաեւ կոնջ) ամուսին Խանդիլիսի եւ Ցիտանդասի (Խանտիլիս, Ցիդանտաս) կողմից, որոնցից առաջինը գրավում է գահը, իսկ երկրորդը՝ նրա փեսան, հաջորդում

նրան (տես նաև *ՊԾԲ* II, 130-131. անունները տառադարձված են ըստ այդտեղ վերականգնվող հնչողության): Խանդիլիսը եւ իր հաջորդները տիրաճում են գահին իրենց կանանց միջոցով, սպանելով նախորդ արքային, ինչպես եւ Գյուզեսը:

Լյուդիական Մյուրսիլոս-Կանդավլեսի անվան ու առասպելի նմանությունը իրար հաջորդող հին խեթական արքաներ Մուրսիլիսի եւ Խանդիլիսի անուններին ու պատմությանը չափազանց մեծ է պատահական համարվելու համար: Պետք է կարծել, որ խեթ. Խանդիլիսը («Առաջավոր») նման հնչողության պատճառով բաղարկվել է տեղական Կանդավլես դիցանվան հետ (այլ դեպքերում եւս խեթ. խ-ն հունարենում տառադարձվել է կ-ով), եւ խեթական սպանված արքա Մուրսիլիսն ու նրա հաջորդ Խանդիլիսն իրենց ժամանակից շուրջ հազար տարի անց Լյուդիական պատմական ավանդության մեջ արտացոլվել են որպես մեկ միասնական կերպար՝ Մյուրսիլոս-Կանդավլես, որին նույնպես սպանում է նրան հաջորդած, արդեն իսկապես պատմական Գյուզեսը (Նիկոլայոս Դամասկոսցու մոտ Գյուզեսի նախորդը կոչվում է այլ անունով):

Հայկական ավանդության մեջ Մյուրսիլոսին համապատասխան Մուշեղը «ճերմակածի» է (Փավստոս V, 2) եւ հանդես է գալիս արդեն ոչ թե որպես «շուն սպանող» հերոս, այլ ընդհակառակը, սպանված Մուշեղին պետք է վերակենդանացնեին առասպելական շները՝ արալեզները, այսինքն՝ այս հերոսները ներկայացնում են միեւնույն առասպելային հակադիր կերպարներին:

Չետաքրքիր է նկատել, որ Մուրսիլիսի քրոջ (կամ կնոջ) ամուսին, նրան դաված եւ հաջորդած թագավոր Խանդիլիսի անունն ինչ-որ կերպ կարող էր արտացոլվել նաեւ հայ ավանդության մեջ: Այստեղ սրան հիշեցնում է Դավթի կնոջ Խանդուր անունը: Այն ընդունված մեկնաբանություն չունի (ՄԾ, Բ, II, 842-43), եւ անհասկանալի է, թե ինչու է այն հանդես գալիս հին Տարոնի փոխարեն (Աբեղյան Ա, 394): Աղջիկ Տարոնը Խլաթի թագավորի դուստրն է, Մուշ-Մուշեղի սիրեցյալը, որն ամուսնանում է ուրիշի՝ հերոսի հակառակորդի հետ (հմմտ. Տիգրանուհու կերպարը), եւ ըստ արաբական աղբյուրի՝ դավում հայերին:

Պորտուգալացի ճանապարհորդ Մ. Աֆոնսոյի (XVI դար) վկայությամբ, արդեն Դավթի կնոջ անունն էր Խանդուր (Հարությունյան, Բարթիկյան 1975, 99): «Սասան ծռերում» Խլաթի իշխանուհին է Խանդուրը, կամ ավելի հաճախ Չմշկիկ սուլթանը (հմմտ. չ-մուշ-կ-իկ, մուշ-կ եւ Մուշ անունների անագրամատիկ կապը), Դավթի սիրուհին, որը եւ բազմաթիվ տարբերակներում սպանում է Դավթին (հին Մուշ):

Հայկական աղբյուրներում Խանդուրն առաջին անգամ հիշվում է XIX դ. սկզբին, եւ համեմատվում Տիգրանուհու հետ, որն ամուսնանում է իր եղբայր Տիգրանի հակառակորդ Աժդահակի հետ, բայց դավում վերջինիս ու վերադառնում հայոց կողմը (Ինժիճյան 1806, 121, տես եւ Աբեղյան I, 393): Այսպիսով, ե՛ւ Չմշկիկ սուլթանը, ե՛ւ Խանդուրը, որպես Խլաթի արքայադուստրեր, շարունակում են հին աղջիկ Տարոնի կերպարը, եւ Չմշկիկի կողմից Դավթին սպանելը, ինչպես եւ Տարոնի՝ հայերին դավելը կարող են հիմք ծառայել նաեւ Խանդուրի կերպարի այդ բաղադրիչի

նման վերակազմության համար: Այս տեսակետից հատկանշական է, որ էպոսի տարբերակներից մեկում Դավիթը սպանվում է Խանդութի հրամանով (ՄԾ I, 1126):

Մուրսիլիս-խանդիլիս, Մյուրսիլոս-Կանդավլես եւ Մուշեղ (=Դավիթ)-խանդութ անուններից առաջինները նույնական են, իսկ երկրորդների նմանություններն՝ ակնհայտ: Եվ Խանդութն այսպիսով կարող է վիպական մակարդակով շարունակել Մուրսիլիսին սպանող Խանդիլիսի պատմական կերպարը: Առասպելներում եւ բանահյուսության մեջ արական եւ կանացի կերպարները, որոնք կարող են կոչվել նույնական անուններով (հմմտ. Տիգրան-Տիգրանուհի, Աստղիկ դիցուհի- պարոն Աստղիկ եւ այլն), սովորական են, եւ կնոջ կողմից սպանվող հերոսի վիպական մոտիվում հերոսի պատմական նախատիպին սպանողի անունը կարող էր անցնել վիպական հերոսուհուն: Խանդութ ձեւն այս դեպքում պետք է համարել հետագա իմաստավորման հետեւանք, որպես խանդոտ՝ «սիրագորով», «խանդոտ» իմաստներով, կամ իրան. խանդութստ «խանի դուստր» եւ այլն, ըստ առաջարկված ստուգաբանությունների: Ասվածը կարող է բացատրել հին Տարոնի անհասկանալի փոխարինումը Խանդութով: Դա կարող էր տեղի ունենալ միայն Մուշի (=Դավիթ) եւ Մուշեղի սկզբնապես առանձին կերպարների միավորումից հետո:

Խեթական Մուրսիլիսն իմաստավորվում է որպես «Մուրսի որդի» (Իվանով, 1977, 184), բայց Մուրսն արդեն պարզ ստուգանություն չունի: Յնարավոր է պատկերացնել, որ նա ծագումով փոքրասիական, գուցե նույնիսկ մուշկ-մյուսիական մի անուն է, ընդ որում առասպելաբանական այնպիսի ակունքներով, որոնք կարող են բացատրել հայ Մուշեղի եւ լյուդ. Մյուրսիլոսի կերպարների նմանությունները: Չեշտ է ենթադրել, որ խեթ. Մուրսիլիս առաջինի հիշողությունը (Ն.Ք. XVI դար) պահպանվել էր խեթական ավանդությունը շարունակող Լյուդիայում, ապա ժողովուրդների գաղթերի հետ հասել Չայաստան, բայց մյուս կողմից, այս նմանությունը անհնար է բաժանել բերված մյուս հայ-արեւմտափոքրասիական՝ հենց լյուդիա-մյուսիա-մեյոնիական ընդհանրություններից, որոնք առավել վաղ են թվագրվում (գոնե Ն.Ք. XII դարից): Մշակ, եւ ուրեմն՝ նաեւ Մուշ, անունները նույնարժան չեն Մուրսիլիսի հետ, եւ իրար մոտ հնչողություն են ստացել ուշ, հայերենում (Մուշը կարող էր ծագել \*muskho-ից, իսկ Մուշեղի արմատն է՝ murs-):

Աճկախ այս ամենից, այստեղ կարելի է ասել, որ հայկական էպոսի Դավիթը շարունակում է ոչ միայն հնդեվրոպական ամպրոպի աստծու, նրա զոհվող որդու, հնդեվրոպական ռազմիկի, «երրորդ հերոսի», «չուն սպանող» հերոսի, հայոց Վահագն աստծու, Արամ նահապետի կուսակալ Մշակի, Սանասարի որդի Մուշի, մուշկերի էպոնիմի, այլ նաեւ պատմական Դավիթ Բագրատունու, Դավիթ Կյուրոպաղատի, Մամիկոնյան Մուշեղ անունով իշխանների, հրեական Դավիթ արքայի, եւ ի վերջո՝ խեթական Մուրսիլիս առաջինի կերպարները: Այսպիսի նախատիպեր բացահայտվում են նաեւ էպոսի մյուս հերոսների համար:

## 20. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐԸ» ԵՎ ԱՅԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԷՊՈՍՆԵՐԸ

«Սասնա ծռերի» քննարկված առավել նշանակալի գուգահեռներն ի հայտ են գալիս հնդեվրոպական առասպելաբանությունը լավագույնս պահպանած երկու հին երկրներում՝ Յնդկաստանում եւ Գոմում, թեւ բացահայտ են նաեւ այլ հնդեվրոպական գուգահեռները: Նշանակալի են եւ փոքրասիական ու կովկասյան կապերը եւ իրանական ազդեցությունները:

Բայց էական են ոչ միայն հնդեվրոպական տարրերը, որոնք հանդես են գալիս հատկապես «սելի եւ սալիտակի» առասպելի շրջանակներում, այլեւ այլ էպոսների հետ ունեցած բացառիկ ընդհանրությունները, որոնք միայն նախնական, հնդեվրոպական ընդհանուր ծագմամբ չեն կարող բացատրվել: Տելեփոս, Մյուսիս, Տրոյա-Տարուիսա, Իլիոն-Վիլուսա եւ Տելեբոսա Մուշ, Տարոն, Գլակ գուգահեռ անվանումները եւ այս երկու շրջաններում տեղայնացած անվանական եւ առասպելաբանական այլ ընդհանրությունները (հմմտ. Մուշեղի ու Մյուրսիլոսի, Մուշի մկան ու «մկնային Ապոլոնի», ապա եւ Գուռգուռայի ու Գարգարոն լեռան վերաբերյալ ավանդությունները, տես Ա. Պետրոսյան 1997, 76 հտմ.) կապվում են միեւնույն, կամ մերձավոր ազգակից էթնիկական տարրերի եւ հատկապես մուշկերի ու մյուսիսացիների հետ:

Տրովադայի եւ Մուշ-Սասունի տարածքներում տեղանացվող անվանաբանական եւ առասպելաբանական գուգահեռները պարզորոշ կերպով ցույց են տալիս այս երկու շրջանների մեծ էպոսների «Իլիականի» եւ «Սասնա ծռերի» ծագումնաբանական մերձավոր ընդհանրությունները, որոնք, այսպիսով, կարող են քննարկվել ոչ միայն նախահնդեվրոպական, այլեւ առավել մոտ հանրությունների մակարդակով: Այսպիսով «Սասնա ծռերը» եւ «Իլիականը», ապա նաեւ վերջինս շարունակող «Ողիսականը», ի վերջո շարունակում են երկու տարբեր տեղերում տեղայնացվող, բայց նույն էթնո-մշակութային համալիրի միեւնույն առասպելաբանական միջուկը: Տրոյայի շրջանի վերաբերյալ խեթական տվյալները հիմք են տալիս կարծելու, որ «Իլիականն» այստեղ ունեցել է իր նախնական, լուվական-անատոլիական տարբերակը (Վոտկինս, 1986): «Իլիականի» եւ Իտալիայի հնագույն պատմության վերաբերյալ հռոմեական եւ էտրուսկյան տվյալների ընդհանրությունն ակնհայտ է՝ նշված ժողովուրդների ազգածագման ավանդությունները կապվում են Տրոյայի եւ Լյուդիայի հետ: Գերմանական էպոսի կերպարների ու մոտիվների առաջնային ու երկրորդային կապերը արեւմտափոքրասիական ու տրոյական նախատիպերի հետ նույնպես պարզորոշ են (Ջիգֆրիդը, ինչպես եւ Ատտիսը, զոհվում է վարազի որսի ծամանակ, նրան սպանող Հագենը համարվել է տրոյացի եւ այլն, տես Ա. Պետրոսյան 1997, 31-33):

Յնդկական «Ռամայանայի» հերոսը ծագմամբ նույնանուն է հայ Արամի ու արեւմտափոքրասիական Արիմուսի հետ, իսկ Պարաշուռամայի հետ կապված առասպելների հիմքը, ինչպես ասվել է, հնդիկ գիտնականների կողմից համարվում է փոքրասիական-փոյուգական: Որպես արամեացիներ-

րի ազգածնության առասպել պատկերացվող Ջեւսի ու Տիփոնի կռիվը Արիմեներում եւս առնչվում է հիշյալ համալիրի հետ, եւ արամեացիների էպոնիմ Արամի ու Նրա եղբայր կամ որդի Մոսոքի վերաբերյալ տվյալներն անբաժանելի են հնդ. Ռամա-Մուշիկա, հայ. Արամ- Մշակ գույգերով խորհրդանշվող հնդեվրոպական անուններից (Ա. Պետրոսյան 1997, 158-162): Նույն համալիրի հետքերն ի հայտ են գալիս եւ վրացիների ազգածագման ավանդության մեջ (անդ, 70-72): Հատկանշական է, որ քարթվելական էպոսի բազմաթիվ տարրեր պետք է որ հնագույն փոխառություններ լինեն հնդեվրոպականներից (Շարաշիձե 1986, 55-61, 336-39), հմմտ. նաեւ Արամ անունով հերոսի կերպարը քարթվելական եւ հյուսիսկովկասյան ժողովուրդների լեգենդներում (Ա. Պետրոսյան 1997, 46-48, 117-18): Հյուսիսկովկասյան ժողովուրդների էպոսներում եւս ի հայտ են գալիս «սելիս «սելիս տալիս»» հնդեվրոպական առասպելի տարրերը (անդ, 46, 58, 110-16): Հատկանշական է, որ կովկասյան ու կելտական էպոսների բացառիկ նմանությունները դիտվել են որպէս ուղղակի ազդեցությունների արդյունք (Իվանով 1976, Լիթլտոն 1982, 262-64): «Սասնա ծռերում», ինչպէս եւ ողջ հայ մշակույթում, նկատվում է իրանական ազդեցության կնիքը (հմմտ. թէկուզ Միհր, Միերի անունը), բայց իրանական էպոսում եւս բացահայտվում են հայկականից տարբեր, սակայն միեւնույն ծագմամբ տարրերը (Ա. Պետրոսյան 1997, 22, 58):

Հայկական էպոսի եւ հայերի ու տեղի հնագույն, անհետացած ժողովուրդների առասպելների ընդհանրություններն ակնհայտ են (հմմտ. խաթա-խեթ. Ինարայի, խուռի-խեթ.Թեշուբի, ուրարտ. Խալդիի քննարկված վիպական գուգահեռերը):

Աշխարհում ամենալայն ընդգրկումն ունեցող էպոսներից է «Քրոնոզլին» («կույրի որդի»), պատմական անձ է), տարածված հատկապէս թյուրքալեզու, բայց նաեւ այլ ժողովուրդների մեջ, Սիբիրից մինչեւ Բալկաններ: Էպոսի նախնական պատմական հիմքը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհում եւ մերձակայքում (XVI-XVII դարեր): Չնայած ուշ, պատմական տարրերի առատությանը, «Քրոնոզլու» բազմաթիվ վիպական տարրեր շարունակում են նույն շրջաններում տեղայնացվող հնագույն վիպական ու առասպելական ավանդությունները (ինչպէս եւ նույնը «Սասնա ծռերում»): Խորենացուց քիչ բան է հայտնի Արամի մասին, բայց Արա Գեղեցիկի հեքիաթներում Նրա հայրը՝ Արամը կույր է, որը որդուն ուղարկում է Շամիրամի մոտ՝ Վան, իր աչքերի համար բուժում գտնելու (տես օրինակ, ԱՅ, IX, 144 հտն. հմմտ. «կույրի որդու» առասպելությոյնը. օրինակ, «Մահաբհարատայում» եւս հակադրության երկու կողմերից մեկի հայրը կույր է): Ըստ որոշ տարբերակների, Քրոնոզլին, ինչպէս եւ Փոքր Միերը, Արտավազը եւ Նրանց ազգակից կերպարները, կյանքի վերջում հեռանում է մի լեռնային քարայր (MHM I, 641): Հիշելով վերջիններիս կապը Արայի հետ, այստեղ եւս կարելի է տեսնել Արամի ու Արա Գեղեցիկի կերպարների հեռավոր արձագանքը: Հաշվի առնելով Արամի եւ տեղի հնագույն ամպրոպի աստվածների բացահայտ առնչությունները, այստեղ պետք է հիշել ամպրոպի աստծու՝ աչքերից (եւ սրտից) գրկվելու եւ հետ ստանալու խեթական առասպելը, քննարկված հնդեվրոպական եւ ընդհանուր առասպելաբանական համատեքստում (Իվանով, Տոպորով 1974, 121, 126 հտն.):

Հայկական վիպական ավանդության մեջ Զյոռօղլու՝ որպես «կուրի որդու» բացահայտ նախորդն է Արշակ թագավորի վեպը «Պարսից պատերազմում» (Փավստոս III, Ի եւ հտն.): Նրա հորը կուրացնում է Շապուհ-վարազը, որի անվան երկրորդ բաղադրը առասպելաբանական համատեքստում նույնացնում է նրան մեռնող աստծուն պատժող վարազին՝ «սեւ հերոսի» սիմվոլին: Ի միջի այլոց, «Պարսից պատերազմում» եւ քրիստոնեական դարձի ու հաջորդ դարաշրջանի վիպականացված պատմության մեջ անընդմեջ իրար են հաջորդում «սեւի ու սպիտակի» առասպելի կերպարները, որտեղ «սեւ հերոսը» հաճախ կապեր է դրսեւորում իր սիմվոլ վարազի հետ: Այսպես, Տրդատը վերածվում է վարազի, Տիրանին կուրացնում է Շապուհ-վարազը, Արշակը, որը թավ էր ու սեւ, իր ապագա կնոջ անուսնու սպանության պահին համեմատվում է վարազի հետ, Վարազդատը սպանել է տալիս Մուշեղին (տես եւ Ա. Պետրոսյան 1997, 56): Արշակը եւս, ինչպես եւ վիպաշարերի վերջին հերոսները, իր կյանքի վերջն անցկացնում է բանտում, շղթայված, հմմտ. Արտավազդ, նույնպես պատմական արքա, որի առասպելականացումն ավելի ակնհայտ է (Զյոռօղլու վերաբերյալ այս համատեքստում տես եւ Մելիք-Օհանջանյան 1947):

Զյոռօղլին ե՛լ աշուղ է, ե՛լ ռազմիկ, եւ իր այս հատկանիշներով նույնացնում է աշուղների հովանավոր եւ ռազմիկ Մշո սուլթան սուրբ Կարապետին, որն, ի միջի այլոց, Վահագնի քրիստոնեական հաջորդն էր Մուշի դաշտում: Զյոռօղլու ամրոցի անունը եւս՝ Չանլիբեյ, համապատասխանում է սուրբ Կարապետի վանքի թոք. անվանը՝ Չանլի քիլիսե: Զյոռօղլու կտրիճները կոչվում են «դալիներ» («զփեր»), եւ ուղղակի կրկնում Սասունի «ծռերի»՝ նուրիճաստ կոչումը: Այս համապատասխանությունները ցույց են տալիս, որ «Զյոռօղլին» շարունակում է, եւ չէր կարող չշարունակել, հայկական եւ հայաստանյան հնագույն վիպական ավանդույթը:

Հայկական մյուս հին վիպաշարերի («Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ») կենտրոնը նույնպես Մուշ-Տարոնն է: Հայոց XIX եւ XX դդ. ազատագրական պայքարը, պատմական ճակատագրի բերումով, հիմնականում տեղայնացած էր միեւնույն շրջաններում (Սասուն-Մուշ): Ֆիդայիների հովանավորն էր Մշո սուլթան սուրբ Կարապետը: Նրանք առասպելականացել էին արդեն կենդանության օրոք, ընդ որում նրանց բանահյուսական կերպարները կրկնում են առյուծով խորհրդանշվող, զոհվող եւ հարություն առնող աստծու առասպելույթը (տես Ա. Պետրոսյան 1991 դ):

Նույնիսկ այսպիսի համառոտ քննարկումը բացահայտում է հնդեվրոպական եւ որոշ ոչ հնդեվրոպական էպոսների ոչ միայն մեծ, ծագումնաբանական ընդհանրությունները, հատկապես «սեւի ու սպիտակի» հնդեվրոպական առասպելի շրջանակներում, այլեւ այդ ընդհանրություններից շատերի հնարավոր ծագումը միասնական մի էթնո-մշակութային համալիրից, որի երկու հնագույն եւ ամենավառ արտահայտված կենտրոններն էին Տրովադան եւ Մուշ-Սասունը:

Այս երկու կենտրոնների բացառիկ ընդհանրությունները ծագում են մուշկ-մյուսիական եւ, թերեւ, խաթա-խեթական ակունքներից, որոնք եւ տեղափոխվել են մինչեւ Իտալիա եւ Հնդկաստան: Քննարկված հնդկական, հայկական եւ արեւմտափոքրասիական ընդհանրությունները, զոնե մա-

